ԷՋՄԻԱԾԻՆ



Ի
2021



ՀԼ. ՏԵՐԻ

Բանալի

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄԱՍԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՄՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Օ գ՝՝՝՝՝՝

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ
2021



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԷՋՄԻԱԾԻՆ»
կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխաւոր խմբագիր՝ **Գէորգ Մադոյեան**

Խմբագիրներ՝ **Արփինէ Չանթիկեան,**
Լուսինէ Վարդանեան

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,**
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօզոյեան,
Գէորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դեւրիկեան,
Գոհար Աւագեան

“Etchmiadzin”
Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**
Editors **Arpine Chantikyan,**
Lusine Vardanyan
Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,**
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan

«Эчмиадзин»
Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворк Мадоян**
Редакторы **Арпине Чантикян,**
Лусине Варданян
Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,**
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Азат Бозоян,
Геворк Тер-Варданян,
Вардан Деврикян,
Гоар Авакян

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գործ՝ ՀՀ վաստակաւոր նկարիչ
Սամուէլ Լաճիկեանի



ԻԲՐԵՒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կամայ յառնում է դէպքն այն հեռաւոր անցեալի, երբ համազգական մի իրադարձութեան տարեդարձի նախընթաց պահերին Հայոց Կարին քաղաքի բնակիչները խնդրանօք դիմեցին Սարգիս Ճարտասանին, որ ներբողական բանքով հանդէս գայ եւ գնահատանքի խօսքեր հնչեցնի օրուայ խորհրդի վերաբերեալ։ Սակայն հռետորը, որ յայտնի էր ամենեցուն իր բեմբասացական կարողութիւններով, քարոզիչը, որ ցանկացած պահի եւ ցանկացած նիւթի վերաբերեալ կարող էր հանդէս գալ, իմաստասէրը, որ անպարտ էր անուանուել իր տրամաբանութեան, մտքի ճկունութեան եւ կատարեալ խօսքի համար, թերեւս կեանքում առաջին անգամ հրաժարուեց, խուսափեց կամ ձեռնպահ մնաց հանդէս գալուց։ Եւ ո՛րն էր պատճառը, ո՛րն էր հրաժարուելու հիմնաւորումը. ինքը Սարգիս Ճարտասանը ձեւակերպում էր այսպէս. «Ես չեմ այրն այն արժանաւոր... հիմա չէ... պահն այն պատեհական, եւ սա չէ վայրն այն փափագելի, ուր տեղին եւ հնարաւոր է հնչեցնել խօսքը գնահատանքի. որովհետեւ իրադարձութիւնները, որոնց ներկայ ենք ամենքս, իրադարձութիւնները, որ տեսնում, ընկալում եւ ըստ մեր կարողութիւնների փորձում ենք քննել եւ արժեւորել, իրականում ո՛չ ես, ո՛չ դուք՝ չենք կարող հիմա հասկանալ եւ գիտակցել ամբողջութեամբ. օրուաս արժէքն ու գնահատականը կտան միայն ու միայն ժամանակն ու պատմութիւնը եւ այն էլ՝ մեզնից հազար, կամ նոյն իսկ հազարաւոր տարիներ յետոյ»։

Նոյնն է նաեւ մեր պարագան. մենք չենք այն արժանաւորները... եւ բաւական չեն ու որեւէ կերպ չեն կարող բաւականացնել պահն ու վայրն

այս, որ թէկուզ պարզ կամ մակերեսային գնահատական հնչեցուի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գործունէութեան վերաբերեալ։ Այսօր Վեհափառ Հայրապետն աշխարհի տարբեր ծագերից ընդունում է գնահատանքի, քաջառողջութեան, նորանոր յաջողութիւնների եւ որ գլխաւորն է՝ զօրակցութեան ու յաղթութիւնների բազմաթիւ մաղթանքներ, սակայն ամեն դէպքում՝ իրական, արդար եւ արժեւորելի գնահատականը կտան լոկ ժամանակն ու պատմութիւնը, եւ ամենակարեւորը՝ սերունդները, շնորհակալ հայորդիները ապագայի։

Յ. Գ. Երկրում տիրող ընկերային-տնտեսական նաեւ աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանաւորուած Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 70-ամեակի յոբելեանական հանդիսութիւնները չեղարկուեցին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդեան առիթով շնորհաւորանքներ ու բարեմաղթանքներ են յղել մի շարք եկեղեցապետեր, կրօնապետեր, հայ եւ օտար բարձրաստիճան պետական եւ հոգեւոր այրեր, հասարակական, քաղաքական, դիւանագիտական, մշակութային եւ այլ ոլորտների բազմաթիւ գործիչներ։ Սոյն համարում ներկայացուած են շնորհաւորանքներից որոշները։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 8-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻՆ

(2 օգոստոսի, 2021 թ.)

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Հարգելի՛ նախագահող,

Հարգելի՛ պատգամավորներ եւ ներկաներ,

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ Ազգային ժողովի 8-րդ գումարման անդրանիկ նիստի առիթով եւ շնորհավորում նորընտիր պատգամավորներիդ։

Այսօր մեր հայրենիք Հայաստանն ու Արցախը դիմակայում են արտաքին եւ ներքին լուրջ մարտահրավերների՝ հանդիման Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի ու ծավալապաշտական նկրտումների։ Հայրենական կյանքում ծառացած հիմնախնդիրները հաղթահարելու համար հրամայական են պետական, քաղաքական գործիչների եւ ողջ հասարակության համախմբումը, քաղաքացիական պատասխանատվության բարձր գիտակցությունը, համընդհանուր զգաստությունն ու բարեխղճությունը։ Բոլորիս փափագն ու ձգտումն են մեր հայրենիքի անվտանգությունն ու առաջընթացը, խաղաղ եւ բարեկեցիկ կյանքի կերտումը, որոնք մեծապես պայմանավորված են նաեւ օրենսդիր մարմնի եւ ձեւավորվելիք կառավարության գործունեությամբ։

Այսօր դուք ստանձնում եք ձեր պարտականությունները՝ օրենսդրական նախաձեռնություններով կարեւոր ներդրում բերելու տնտեսության շարունակական զարգացման, գիտության, կրթության, մշակույթի առաջընթացի գործում, պաշտպանելու անխաթարությունը մեր ինքնության

ու արժեքների եւ հաստատուն պահելու արդարությունն ու իրավունքը։ «Երանի նրանց, ովքեր իրավունքն են պահում եւ ամեն ժամ արդարություն գործում»,— ասում է Սուրբ Գիրքը (Սաղմ. ՃԵ. 3)՝ վկայելով, որ արդարությունն ու օրինապահությունն են գրավականը երկրի եւ ժողովրդի բարօրության ու հարընթաց բարգավաճման։ Օրենսդրական ձեր գործունեությունը՝ արդարության եւ իրավունքի գերակայությամբ, միտված պետք է լինի ձեւավորելու անհրաժեշտ միջավայր ու հնարավորություններ մեր պետության հզորության եւ ապահովության, մեր երկրի արժանապատիվ կյանքի համար։ Այս նվիրական դարավոր իղձն իրականություն դարձնելու ուղին մեր հայրերի պատգամի իրագործումն է, որոնք ըստ Ավետարանի ուսուցանել են, որ օրենքն է մարդու համար, եւ ոչ թե մարդը՝ օրենքի (հմմտ. Մարկ. Բ. 27)։

Մեր երկրում տիրող ներկայիս ծանր իրավիճակում եւ տարածաշրջանում առկա բարդ ու դժվարին հանգամանքներում մենք կենսականորեն պետք ունենք միասնության, հանդարտության, հուզումների ու լարվածության թոթափման՝ ատելության, վրեժխնդրության ու պառակտումների փոխարեն։ Մենք ամենքս պետք է քաջ գիտակցենք, որ ազգային եւ հասարակական համերաշխությանն այլընտրանք չկա։ Առաջնահերթորեն եւ այս խորհրդարանից, կառավարական համակարգից պիտի սերմանվեն սերը, փոխհասկացողությունը, բարի կամեցողությունը հասարակությունում։ Խորհրդարանական գործունեության ընթացքում հնչող քննադատությունները թող լինեն միայն կառուցելու եւ սխալները շտկելու նպատակով, ծավալվող բանավեճերը՝ ճշմարտությունը գտնելու, ճշմարտության հոգով առաջնորդվելու եւ այդ ճշմարտության վրա խարսխելու օրինահարգ հանրային կյանքը եւ պետության կենսագործունեությունը։

Հայրապետական Մեր հորդորն ենք բերում ձեզ, որ քաղաքական հայացքների եւ տեսակետների բազմակարծությամբ հանդերձ՝ մեր հայրենիքի եւ ժողովրդի լուսավոր ապագայի կերտման նույն ձգտումով աշխատեք համախումբ՝ մեր պետության անսասանության, ներքին ու արտաքին մարտահրավերների հաղթահարման, արտագաղթի կանխման, Սփյուռքի հետ կապերի ու գործակցության առավել արդյունավորման ջանքերով։ Ամուր պահեք հավատարմությունը մեր հոգեւոր եւ ազգային արժեքներին, հայրենիքի գերագույն շահերին, մեր սուրբ նախնյաց եւ հայրենյաց պաշտպան նահատակ զավակների հավատին ու նվիրական

տեսիլքին, որպեսզի ազգովի ունենանք շնորհն ու զորությունը կերտելու մեր պետության եւ հայրենական կյանքի զարթոնքը։

Մեր Սուրբ Եկեղեցին բոլոր ժամանակներում առաջնորդել է մեր ժողովրդին հոգու փրկության, մտքի լուսավորության, ազգային կյանքի վերելքի, նաեւ օրհնել ազատագրական պայքարները, սատարել պետականության վերահաստատման մաքառումներին։ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այս տեսլականով միշտ իր ձայնն է բարձրացնում հայրենիքի համար վտանգավոր ընթացքների, ազգային ինքնության սպառնալիքների, մեր ժողովրդի իրավունքների ու արժեքների ոտնահարման դեմ։ Հավատարիմ իր կոչմանը՝ մեր Սուրբ Եկեղեցին պիտի շարունակի տերունապատվեր իր առաքելությունը՝ զորակից ու օգտակար լինելով հայրենաշեն ու ազգաշահ բոլոր ջանքերին՝ ի սեր մեր ժողովրդի եւ պետության։

Աղոթում ենք, որ Աստված իմաստություն պարգեւի եւ աջակից լինի ձեզ ձեր գործունեության մեջ, որպեսզի Ազգային ժողովի առաքելությունն արգասավորվի ցանկալի արդյունքներով՝ հանուն հայրենիքի առաջընթացի, մեր ժողովրդի խաղաղ, ապահով ու արժանապատիվ կյանքի։ Բարի եւ օրհնյալ ընթացք Ազգային ժողովի 8-րդ գումարման աշխատանքներին։

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳՐԵՐ

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐԸ

Վատիկան, 21 օգոստոսի, 2021 թ.

Նորին Սուրբ Օծություն ԳԱՐԵԳԻՆ Բ.
Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ձե՛րդ Սրբություն,
Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Եղբայրական ջերմ զգացումներով ու աղոթքներով եմ գալիս շնորհավորելու Ձերդ Սրբության 70-ամյակը: Փառք Տիրոջը՝ Ձեզ շնորհած առատ պարգեւների համար, որոնք այդքան արդյունաշատ են դարձրել Ձեր պատասխանատու առաքելությունը՝ իբրեւ Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Երախտագիտությամբ եմ անդրադառնում Հռոմ կատարած Ձեր եղբայրական այցերին, ինչպես նաեւ 2016 թ. Հայաստան կատարած իմ այցի ժամանակ Ձեր սրտաբաց ու ջերմ ընդունելությանը: Գոհություն Աստծուն՝ մեր երկու Եկեղեցիների միջեւ առկա սերտ հարաբերություններում Ձեր ունեցած անձնական ներդրման համար:

Ձերդ Սրբության համար բարեխոսական աղոթքներով դիմելով Ամենասուրբ Կույս Մարիամին, «Հայոց Սուրբ Եկեղեցու հավատի լուսո սյուն» Սուրբ Գրիգոր Լուսավորչին եւ Եկեղեցու վարդապետ Սուրբ Գրիգոր Նարեկացուն՝ մաղթում եմ, որ Ամենակալ Աստված Իր օրհնության ներքո պահի Ձեզ, որպեսզի իմաստությամբ եւ խորագիտությամբ շարունակեք առաջնորդել Ձեզ վստահված հավատացելոց հոտը:

Իմ աղոթքների մեջ հիշելով Ձեզ եւ Ձեր աղոթքներին ապավինելով՝ կրկին իմ սրտագին շնորհավորանքներն ու ի Քրիստոս խաղաղության եղբայրական ողջագուրանքներն եմ հղում Ձեզ:

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ
Հռոմի Պապ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐԸ

21 օգոստոսի, 2021 թ.

Նորին Սուրբ Օծություն ԳԱՐԵԳԻՆ Բ.
Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ձե՛րդ Սրբություն,

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Ձեր 70-ամյա հոբելյանի առիթով ընդունեք իմ սրտագին շնորհավորանքները։ Դեռ պատանեկան տարիքից ընդունելով Փրկչի կանչը՝ Դուք որոշեցիք Ձեր կյանքը Նրան նվիրել ու անցնող տարիների ընթացքում մեծապես տքնեցիք ու գործեցիք Աստծու փառքի համար։ Այսօր Դուք օրինակ եք Ձեր բազմամիլիոնանոց հոտի համար, որը, հանձին Ձեզ, տեսնում է հոգեւոր խնամատարի ու սիրող հոր։ Քաջությամբ կրելով Հայոց Եկեղեցու նվիրապետի ծանր խաչը՝ Դուք «Աստծու նախանձախնդրությունը» (Հռոմ. Ժ. 2) ունեք Ձեր մեջ եւ նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում պահում եք տերունավանդ «հոգու միությունը խաղաղության կապով» (Եփես. Դ. 3)։

Երախտագիտությամբ եմ կամենում արձանագրել, որ Ձեր գահակալության տարիները նշանավորվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Մոսկվայի պատրիարքության միջեւ արդյունաշատ համագործակցությամբ։ Մեծապես գնահատում եմ մեր երկու քրիստոնյա ժողովուրդների միջեւ առկա եղբայրական հարաբերությունները եւ ջերմությամբ եմ անդրադառնում Ռուս Ուղղափառ Եկեղեցուց ներս Ձերդ Սրբության յուրաքանչյուր այցելությանը։ Դուք այստեղ միշտ ցանկալի ու պատվավոր հյուր եք։

Թող մեր երկնային Քահանայապետը՝ Քրիստոս, զորացնի Ձեզ ու պարգեւի հոգեւոր եւ մարմնավոր առողջություն Ձեր քահանայապետական ծառայության մեջ՝ Հայոց հնագույն երկրին ու նրա ժողովրդին շնորհելով խաղաղ ու բարօր կյանք։

Ի Քրիստոս սիրով՝

ԿԻՐԻԼ
Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐԸ

Երեւան, 20 օգոստոսի, 2021 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոս
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վեհափա՛ռ Տեր,

Ձեր ծննդյան օրվա նախօրեին Ձեզ եմ հղում առողջության ու արեւշատության իմ ջերմ բարեմաղթանքները։

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եղել եւ մնում է մեր ազգային ինքնության կարեւորագույն հիմնասյուներից մեկը, մեզ միավորող առանցքը, մեր հավատքի, պատմության ու ավանդույթների շարունակական ներկայությունն ապահովողը մեր արժեհամակարգում, մեր մշակույթում, մեր ներաշխարհում։

Ձեր հայրապետության շուրջ 22 տարիների ընթացքում մեր եկեղեցական կյանքն աշխուժություն է ապրում անցյալի արժեւորմամբ, ներկայիս գործունեությամբ եւ ապագայի տեսլականով։ Անցնող 22 տարիները Հայ Եկեղեցու համար եղել են զորացման, բարեփոխման, եկեղեցաշինության տարիներ։ Այդ ընթացքում ձեռնարկվել են քայլեր՝ միտված Հայ Եկեղեցու առաքելությունն առավել արդյունավետ դարձնելուն եւ եկեղեցական կյանքը կանոնակարգելուն։

Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր գահակալության հատկապես այս վերջին տարիները համընկնում են մի ժամանակահատվածի, երբ մեր երկիրն ու ժողովուրդը անցնում են բազում դժվարությունների ու փորձությունների միջով։

Ցանկացած դժվարին իրավիճակ հաղթահարելու մեկ ճանապարհ կա՝ միասնությունը։ Ներկայիս արագ փոփոխվող աշխարհում մարդկությունն ի թիվս այլ ճգնաժամերի, նաեւ ինքնության ճգնաժամ է ապրում։ Առկա մարտահրավերներն ու խնդիրներն առավել քան կարեւոր են դարձնում համախմբումը հոգեւոր եւ բարոյական արժեքների շուրջ, որոնք մնայուն են նաեւ մեր Եկեղեցու շնորհիվ։

Մեր ժողովուրդը կարիք ունի հույսի, հավատի եւ վստահության, կարիք ունի բարոյական մաքրության, համերաշխ ու միասնական կեցության, փոխադարձ հարգանքի եւ հանդուրժողականության, կարիք ունի վերածննդի ու վերարժեւորման։ Գնահատելի է, որ մխիթարության, ոգեւորումի եւ աջակցության խոսքերի հետ մեկտեղ, որպես հայրենասիրության յուրատեսակ դաս, այս մասին հնչեցվում է նաեւ Վեհափառի կողմից։

Թող Ձեր հայրապետական հոգածությունն այսուհետ եւս աջակից եւ սատար լինի մեր երկրին ու ժողովրդին՝ ի շահ մեր Հայրենիքի եւ աշխարհասփյուռ հայության, ժողովուրդ—պետություն—եկեղեցի փոխհարաբերությունների ամրապնդման։

Մաղթում եմ Ձեզ հոգու ամրություն եւ ամենայն բարիք։

Խորին հարգանքով՝

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ նախագահ

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ՝ ԽՈՍՔ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Զինվորյալ միաբանությունս հանուն Սուրբ Էջմիածնի իր հոգեփրկչական եւ ազգապահպան առաքելությունն աշխարհասփյուռ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանում մշտապես իրականացրել է նվիրումով, հովվական ու վարդապետական անխոնջ քարոզչությամբ կրթել, սնել ու խնամել է իր հոգածությանը հանձնված հայ հավատացյալին՝ ի գլուխ ունենալով Հայոց Հայրապետին։

Քրիստոս, որ Իր կյանքով օրինակ է մեզ համար եւ Իր ամենօրյա ներկայությամբ կենդանության Աղբյուր մեր մեջ, առաջնորդության կոչված ընտրյալին էլ ավելի մեծ շնորհ ու կարողություն է պարգեւում՝ լինելու առաջին սպասավորը եւ իր հետեւից տանելու մեզ՝ ուխտյալ միաբաններիս, որպեսզի անսայթաք մնանք մեր առաքելության մեջ։

Ս. Թադեոսի եւ Ս. Բարդուղիմեոսի առաքելահաստատ Աթոռի արժանավոր հաջորդն այսօր ազգընտիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսն է, որ աստվածապարգեւ կյանքի 70 օրհնյալ տարիներից երկու տասնամյակից ավելին Տիրոջից կոչված է Մայր Եկեղեցին տերունական շավիղներով առաջնորդելու։

Ամենայն Հայոց Կաթողիկոսները հայ ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում մշտապես բացառիկ դերակատարություն են ստանձնել՝ հանդիսանալով ոչ միայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետության գլուխը, այլեւ համայն հայության միասնության կենդանի խորհրդանիշը եւ հոգեւոր ու ազգային ինքնության կրողն ու մշտարթուն պահապանը։

Իր ուսերին դրված ծանր պատասխանատվության եւ առաքելության բարձր գիտակցությամբ Հայոց Հայրապետն այսօր եւս առ Աստված հավատով եւ նվիրումով հովվում ու անբեկանելի կամքի շնորհիվ դիմակայում եւ հաղթահարում է մեր աշխարհասփյուռ փոքր ածուի եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերները՝ մեր Սուրբ Եկեղեցին հաստատուն կերպով տանելով առաջընթացի եւ վերազարթոնքի ուղիով։

Կրթադաստիարակչական, ընկերային, միջեկեղեցական, հայրենաշինական, եկեղեցաշինական ծրագրերը, որոնք տասնամյակների

ընթացքում տեսիլքներից իրականություն են դարձել, լավագույն ապագույցն են ապրված կյանքն արժեւորված տեսնելու եւ գնահատելու։

Որդիական ջերմությամբ եւ խոնարհումով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի զիվորյալ միաբանության անունից ի խորոց սրտի շնորհավորում ենք Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-րդ հոբելյանը՝ մաղթելով քաջառողջություն եւ հայրապետության երկար ու խաղաղ տարիներ։ Միաբաններիս հարատեւ աղոթքն է առ Աստված, որ Տերն Իր սուրբ շնորհներով ավելի ամրապնդի եւ զորացնի Հայոց Հայրապետին, որպեսզի մեր աշխարհասփյուռ ազգը նրա հովվությամբ դեռ երկար տարիներ քայլի խաղաղության եւ փրկության ճանապարհով։

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆ
Լուսարարապետ

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին բոլոր դարաշրջաններում բացառիկ ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի պատմական ընթացքի եւ պետականության կայացման վրա։ Պետությունն ու Եկեղեցին պատմականորեն հանդես են եկել որպես մեկ միասնություն, եւ այդ փոխկապակցվածությունն իր կնիքն է դրել ազգային ինքնության եւ հոգեբանության վրա, դարձել ինքնագիտակցության կարեւոր բաղադրիչ։ Պատմական որոշ փուլերում, երբ հայ ժողովուրդը կորցրել է պետականությունը, Եկեղեցին իր վրա է վերցրել մի շարք գործառույթներ՝ առաջնորդվելով ազգապահպանության վեհ գաղափարով։ Եւ Եկեղեցու ջանքերը միշտ պսակվել են հաջողությամբ՝ առաջին հերթին հայրենանվեր եւ ազգասեր հայրապետների շնորհիվ։

Այսօր իրեն ժառանգված ազգային բարձրագույն արժեքների կրողն ու փոխանցողն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդն է։ Նա անվարան առաջ է ընթանում այն ճանապարհով, որով անցել են երջանկահիշատակ իր նախորդները։ Միեւնույն ժամանակ հայ ժողովրդի պատմության համապատկերում նա գծում է իր սեփական ուղին՝ իր ուրույն հետքը պատմության հոլովույթում եւ ազգային ինքնագիտակցության կերտման գործընթացում։ «Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք, մեր հավատը, որ Քրիստոս հարություն է առել, անհուսությունը փոխում է հույսի, տկարությունը՝ ուժի, անտարբերությունը՝ նախանձախնդրության, արծաթասիրությունը՝ բարեգործության, ծառայությանն ու աշխատանքին միախառնում է նվիրումի ու հանձնառության ոգին։ Այս փոխակերպությանն ենք կոչված, որով միայն կարող ենք անկորուստ պահել մեր երկիրն ու ազգային կյանքը եւ հաղթանակներ արձանագրել մեր ժողովրդի ու հայրենիքի բարօրության եւ առաջընթացի պայքարում»,— ասված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի խոսքում։

Յուրաքանչյուր միտք պահանջում է անմնացորդ նվիրում, կամք, ապագայի նկատմամբ հավատք, որ գաղափարից վերածվի գործի։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ եւ օրհնությամբ իրագործված

բոլոր նախաձեռնություններում այս բոլոր բնութագրիչներն առկա են։ Յուրաքանչյուրում արտացոլված է Վեհափառ Հայրապետի հետեւողական վերաբերմունքը, որը բխում է սեփական պետության եւ ժողովրդի նկատմամբ տածած անսակարկ եւ անսահման սիրուց եւ նվիրումից։ Ամեն ինչ հայոց պետականության ամրապնդման, հայ ժողովրդի ապահով ու հուսալի ապագայի համար. ահա այն կարեւոր համոզմունքը, որով առաջնորդվում է Վեհափառ Հայրապետը յուրաքանչյուր օր։

Վեհափառ Հայրապետի տեսադաշտում են այն բոլոր բնագավառները, որոնք առնչվում են Հայ Առաքելական Եկեղեցուն։ Բարեփոխումներից մինչեւ նոր ծրագրերի իրականացում, վերանորոգումից մինչեւ կառուցում, պահպանումից մինչեւ ստեղծում եւ հանրահռչակում. սա է Վեհափառ Հայրապետի ամենօրյա պրպտումների բովանդակությունը։ «Միշտ հիշենք՝ միայն համախմբվածությամբ է հնարավոր իրագործել հզոր հայրենիքի մեր տեսիլքը, միայն օրինահարգությամբ, արդարասիրությամբ, ծառայանվիրումով, հանձնառություններով ու զոհողություններով կարող ենք ծաղկեցնել մեր կյանքը եւ ամուր ու հաստատուն պահել մեր պետականությունը»,— պատգամում է Վեհափառ Հայրապետը։

Այս տարի լրանում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակը։ Շնորհավորում ենք Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդի օրհնաբեր ծնունդը, մաղթում երկար տարիների քաջառողջ կյանք, ՇԻՆԱՐԱՐ եւ ՄԵԾԱԳՈՐԾ գաղափարներ ու իրականացումներ։

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ս. Էջմիածնի մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ



Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

(1 օգոստոսի, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհն, մինչեւ զՈրդին Իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի Նա՝ մի կորիցէ»
(Յովհ. Գ. 16)։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Ս. Հարության լուսավոր եւ ջերմ այս օրը կրկին հավաքվել ենք աղոթաբույր Ս. Գայանե վանքում եւ համախմբվել Ս. Հաղորդության բաժակի շուրջ՝ Աստծու անսուտ խոսքը լսելու, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենդանարար մարմինն ու արյունը ճաշակելու եւ մեկ անգամ եւս վկայելու քրիստոնեական մեր ինքնության մասին։ Ամենքիս ճանապարհներն այսօր հատվել են Աստծու հոյակերտ այս տան մեջ, եւ այստեղ ենք եկել հաստատ համոզմամբ ու մեծ ցանկությամբ՝ սրտանց եւ անդադար աղոթելու մեր հայրենիքի եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու անսասանության, մեր սահմանների անվտանգության, Հայոց բանակի զինվորների եւ հրամանատարների արիության, մարտունակության բարձրացման եւ վերջապես մեր գերիների շուտափույթ վերադարձի համար։ Այստեղ ենք նաեւ Աստծու հետ մեր կապն ամրապնդելու, մեր ներքին խաղաղությունը վերագտնելու եւ առավել հուսացած կյանքը շարունակելու համար։ Եւ ինչպես ամեն կիրակի, այնպես եւ այսօր Աստված խոսում է մեզ հետ այս անգամ Որոտման որդու՝ Ս. Հովհաննես ավետարանչի միջոցով՝ ասելով. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի Նրան հավատացողը չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ. 16)։

Դարերի ընթացքում Եկեղեցու նշանավոր հայրեր, վարդապետներ, աստվածաբաններ եւ պարզ մարդիկ փորձել են հասկանալ Տիրոջ մարդեղության խորհուրդը, բազում աշխատություններ են գրվել այս թեմայով՝ փորձելով պատասխանել «ինչո՞ւ» կամ «ինչպե՞ս» հարցերին։ Ոմանց կարծիքով՝ Աստված Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, քանի որ մարդկությունն ընկած վիճակում էր եւ դրախտից արտաքսված, եւ ճիշտ ժամանակին Աստված մարդացավ հանուն մեր փրկության։ Կամ՝ Աստված բարկացած էր մեզ վրա պատվիրանազանցության պատճառով, եւ մեղքը դարձել էր խոչընդոտ մարդ—Աստված լիակատար հարաբերության համար։ Ուստի մարդկության մեղքերի քավության եւ մարդու փրկության համար Քրիստոս աշխարհ եկավ՝ ազատագրելու մեղքերից եւ փրկության ճանապարհը ցույց տալու համար։ Բայց ինչպես տեսնում ենք, այս հարցի վերաբերյալ Ավետարանն ի լուր ամենքի պարզապես հայտարարում է, որ Աստված սիրեց աշխարհը եւ Իր Որդուն տվեց։ Ուրեմն՝ մարդուս փրկագործությունը նախեւառաջ անսահման սիրո պատմություն է, երբ երկինք ու երկիր ստեղծող Աստված մարդանում է ժամանակի մեջ, մեզ նման դառնում մեր իսկ փրկության համար։ Եւ ամեն անգամ ավետարանական այս խոսքերն ասելիս պետք է հիշենք մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Աստծու անպայմանավոր եւ մշտամնա սիրո մասին, որ կյանքում տարբեր ձեւերով է դրսեւորվում եւ հայտնվում։ Չէ՞ որ ամբողջ արարչագործությունը բարի է եւ կատարյալ, քանզի Աստծու սիրո եւ բարության արդյունքն է։ Այդ սերը երբեք չպակասեց մեր հանդեպ անգամ դրախտից վտարվելուց հետո, քանզի «Աստված Իր սերը մեր հանդեպ հայտնեց նրանով, որ չնայած մեղավոր էինք, Քրիստոս մեզ համար մեռավ» (Հռոմ. Ե. 8)։

Սիրելինե՛ր, Աստված մեզ սիրում է անկախ մեր մեղավոր կամ անմեղ լինելուց, սեռից, սոցիալական վիճակից, տարիքից ու գրպանի պարունակությունից։ Եթե մենք ոմանց սիրում ենք, ոմանց՝ ատում, ոմանց հանդեպ էլ՝ անտարբերություն դրսեւորում, ապա Աստծու դեպքում այդպես չէ. Նա սիրում է ամենքիս եւ ցանկանում է, որ մենք այդ մասին երբեք չմոռանանք։ Այդ սերը շատ նման է ծնող—զավակ հարաբերությանը, երբ ծնողն ամեն ինչ անում է իր զավակի բարօրության եւ կյանքի ճիշտ ընթացքի համար՝ պատրաստ լինելով անգամ իր կյանքը տալու հանուն զավակի փրկության։ Քրիստոսի Եկեղեցու հայտնի հայրերից եւ մտածողներից Օգոստինոս Երանելին այս մասին ասում է. «Աստված մեզ սիրում է

այնպես, ասես սիրելու էլ ոչ ոք չկա»։ Ուստի պատահական չէ, որ քրիստոնեությունն անվանում ենք «սիրո» կրոն, իսկ Քրիստոսի բերած բարի լուրը՝ «սիրո վարդապետություն», քանզի սիրո աղբյուրը գերագույն Սերն է՝ Աստված։

Որտեղ սեր կա, այնտեղ թագավորում են կարգն ու կանոնը, պատասխանատվությունը, բարությունը, արդարությունը, ազնվությունը եւ մնացած բոլոր առաքինությունները։ Իսկ երբ մեր մեջ եւ հասարակական կյանքում ցամաքում կամ պակասում է այդքան անհրաժեշտ սերը, գլուխ են բարձրացնում մոլորությունները, խախտվում է հասարակական կարգը, մարդիկ ավելի չարանում են եւ անհանդուրժող դառնում միմյանց հանդեպ։ Հետեւաբար, շատ կարեւոր է դիմացինի մեջ տեսնել աստվածադիր պատկերն ու նմանությունը, մեզ նման լինելն ու տարբերվելը մյուս արարածներից։ Չպետք է մոռանալ, որ բոլորս աշխարհ ենք գալիս մերկ ու հավասար, տարբեր շնորհներով, մաշկի գույնով, սեռով եւ նույն այս աշխարհից հեռանում ենք նմանապես, բայց Աստծու ամենատես աչքում մենք հավասար ենք։ Մեր հանդեպ Աստծու անսահման սերն ամենքիս պետք է մղի բարիք գործելու, կատարելության ձգտելու եւ այս անհամ աշխարհին համ ու հոտ տալու։

Մարդու հանդեպ Աստծու սիրո պատմության գագաթնակետը խաչելությունն էր, երբ մեր Տերն Իր թանկագին արյունը հեղեց խաչափայտի վրա եւ դրան գամեց մեր մեղքերի պարտամուրհակը՝ բացելով փրկության ճանապարհը։ Հետայսու խաչը դարձավ մեր փրկության հաղթության նշանը՝ մարդու հանդեպ Տիրոջ անեզր սիրո առհավատչյան։ Եւ ինչպես Տերն Իր օրինակով ցույց տվեց զոհաբերության կարեւորությունը, այնպես եւ մենք պետք է պատրաստ լինենք մեր ընտանիքի անդամների, հարազատների եւ ընկերների համար մեր ժամանակը զոհելու, անտարբերությունը թոթափելու եւ միմյանց հանդեպ առավել սիրով լցվելու։

Ցավոք, հնարավոր չէ ժամանակը կանգնեցնել, քանզի այն անընդհատ ընթացքի մեջ է։ Ժամանակին զուգահեռ մենք եւս մեծանում ենք, հասակ առնում, իսկ մեր շրջապատից կամաց-կամաց հեռանում են մեր սիրելիները եւ հավերժության ճանապարհը բռնում։ Չկա մեկն այս աշխարհում, որ ծնվի եւ չմահանա, որովհետեւ բոլորս մահկանացու ենք եւ հողեղեն արարածներ։ Այս ամենի մասին քաջ իմանալով՝ պետք է երկրավոր այս կյանքում ամեն ինչ անենք՝ Տիրոջը ճանաչելու, Նրան ճաշակելու, Ս. Ավետարանի լույս պատգամներով ապրելու եւ անշեղ

ճանապարհներով ընթանալու համար, եթե, իհարկե, ուզում ենք հավիտենապես ապրել։ «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը եւ կյանքը»,— ասում է Տերը (Հովհ. ԺԴ. 6)՝ հավելելով. «Ով Իմ խոսքը լսում է ու հավատում Ինձ ուղարկողին, ընդունում է հավիտենական կյանքը եւ չի դատապարտվում, այլ մահվանից կյանքի է անցնում» (Հովհ. Ե. 24)։ Այլ խոսքով՝ Հիսուսով են մեր փրկությունն ու հավիտենականությունն տանող ճանապարհը։ Երկրային մնացած բոլոր ճանապարհները զարտուղի են եւ պարզապես ժամանակավոր հանգրվաններ կյանքի տարբեր շրջաններում։

Վստահ եմ, որ հանդիպել եք մարդկանց, ովքեր իրենց հավատացյալ եւ Եկեղեցու անդամ են համարում, բայց չեն հավատում դրախտի եւ դժոխքի գոյությանը։ Այնինչ այդ մասին հստակ ասված է Ս. Ավետարանում, իսկ հավիտենական փրկության կամ տանջանքի մասին ուսուցումն ուղղափառ վարդապետության խոստովանության կարեւոր կետերից է։ Հիսուս հստակ ասել է, որ եթե ընթանանք Իր մատնանշած ուղով, ապա հավիտենական կյանքի կարժանանանք, իսկ եթե խոտորվենք ճշմարիտ ճանապարհից, չապաշխարենք մեր մեղքերի համար, ապա կդատապարտվենք հավիտենապես։ Ընտրությունը կրկին մերն է. կընտրե՞նք աստվածահաճո ճանապարհը, թե՞ կշարունակենք մեր նախկին ընթացքը։

Այսօր մեր թե՛ հասարակական, թե՛ ներքին կյանքը փոթորկված են, ամենքիս հոգին եւ սիրտը պատել են տխրությունն ու ցավը, օդում թեւածող անորոշությունն էլ ավելի է խորացրել մեր այս վիճակը։ Բայց ոչ թե պետք է ընկրկենք եւ տեղի տանք, այլ այլակերպվենք եւ մեկս մյուսի հանդեպ լցվենք առավել սիրով, բարյացակամությամբ եւ գորովով, վանենք մեզանից այդքան խոչընդոտող ատելությունն ու չարությունը։ Եթե անգամ հակառակ կարծիք ունենք շատ հարցերում, ապա կրկին սիրով պետք է փորձենք լսել մեր հայրենակիցներին եւ առաջացած բոլոր խնդիրները նույն սիրով հարթել։ Հայերիս կյանքի նշանաբանը դարձնենք՝ ամեն ինչ Աստծու փառքի, մեր սրբազան հայրենիքի զորացման եւ ուղղադավան Եկեղեցու պայծառության համար։ Չեմ դադարում կրկնել եւ միշտ հիշեցնելու եմ. մենք այլ հայրենիք չունենք, մեր հողը սրբազան է՝ հարստացած մեր անհաղթ նախնիների ու նահատակների թանկագին արյամբ։ Այն իրականում Աստծու պարգեւն է Հայկ Նահապետի զարմին։ Նայե՛ք շուրջբոլորը եւ կտեսնեք, թե ինչքան ժողովուրդներ

են անհայրենիք եւ թափառական, ինչքան են երազում մի բուռ հայրենի հող եւ պետականություն ունենալ։ Աստված երբեք մեզ չի ների, եթե մենք այսօր չգիտակցենք պահի լրջությունը եւ չլծվենք պետականաշինության կարեւոր առաքելությանը եւ, Աստված մի՛ արասցե, այս հայրենիքն էլ կորցնենք։ Հետեւաբար, եկե՛ք մեր կյանքը փոխենք եւ վերջապես մի պարզ ճշմարտություն հասկանանք, որ մեր ուժը մեր միասնականության, հայրենիքի շուրջ համախմբման եւ Աստծուն հավատարիմ լինելու մեջ է։ Քանի՞ օր կամ ժամ ենք ապրում Աստծու եւ մեր հայրենիքի համար, ինչպե՞ս ենք իմաստավորում մեր կյանքի ամեն պահը, որքա՞ն ժամանակ ենք տրամադրում կարեւոր բաներին։ Դժբախտաբար, շատերի ապրելաձեւն այնպիսին է, ասես Աստված չկա եւ երբեք չի եղել, իսկ մենք հազարամյակների պատմություն եւ փորձառություն չունեցող ազգ ենք։ Որտե՞ղ է մեր ազգային խորագիտությունն ու իմաստությունը, ինչո՞ւ դասեր չենք քաղում մեր անցյալից...։ Ուզում ենք հավիտենապես Աստծու ներկայության մեջ ապրել եւ շենացնել մեր երկիրը, բայց չենք ուզում Աստծու պատվիրաններն ու պատգամները պահել, չենք ուզում փոխվել, տեսական հայրենասիրությունից վերջապես գործնականին անցնել։ Ուստի օրվա ավետարանական ընթերցվածը եւս մեկ անգամ հիշեցնում է մեզ, որ Աստված անսահման եւ անվերջ սիրով է սիրում ամենքիս, եւ այդ բարձրագույն սիրո արտահայտությունը մեր փրկագործությունն է, շնորհված կյանքը եւ խոստացված երկնքի արքայությունը։

Քրիստոսի Եկեղեցու նախանձախնդի՛ր անդամներ, եկե՛ք այսօր այս սուրբ եկեղեցուց հեռանանք՝ մեկս մյուսի հանդեպ առավել սիրով եւ բարությամբ լցված՝ միշտ հիշելով մեր հանդեպ Աստծու անմնացորդ սիրո եւ նախախնամության մասին։ Ի վերջո պետք է գիտակցել եւ ընդունել, որ այս կյանքից ոչ ոք ոչինչ չի տարել եւ չի տանելու. ինչպես մերկ աշխարհ ենք եկել, այդպես էլ մերկ հեռանալու ենք։ Բայց մեր ապրած կյանքի համեմատ կա՛մ Աստծու արքայությանը կարժանանանք, կա՛մ հավիտենապես կդատապարտվենք։ Ցանկությունս է, որ մեր փրկագործության համար Տիրոջ մարդեղացումը՝ Աստծու սիրո արտահայտությունը, գնահատենք եւ արժեւորենք մեր կյանքում, ամուր կառչենք հոգու ծննդավայր Հայոց Եկեղեցուն եւ մեր հոգեւոր քաղցն ու ծարավը հագեցնենք դարերի հորձանուտում ստեղծված հոգեմտավոր հարուստ ժառանգությամբ։ Եւ ամեն անգամ խաչակնքելիս հիշենք խաչի վրա կատարած Տիրոջ մեծագույն զոհողությունը հանուն ձեր եւ իմ փրկության։

Եկե՛ք նաեւ լուռ եւ սրտանց աղոթենք Աստծուն՝ մեր ազգի փրկության համար, որն սկսվում է աստվածճանաչողությամբ, Եկեղեցու խորհրդական կյանքին մասնակցելով եւ աստվածահաճո կենցաղավարությամբ։

Թարմացնենք եւ ավելի ամրապնդենք քրիստոնեական մեր ինքնությունը, արժանի դառնանք հավատավոր եւ սրբակյաց մեր նախնիներին, որոնք երկնքում բարեխոս են մեզ համար Աստծու մոտ։

Թող Աստված ամենքիս պահապան լինի, մեր մեջ առավել զորացնի սերն Իր եւ մեկս մյուսի հանդեպ, որպեսզի Տիրոջով եւ հարության հույսով գոտեպնդված՝ շարունակենք կյանքի իմաստավորված եւ բովանդակությամբ լի մեր ընթացքն այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն։

Տ. ԹՈՎՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 օգոստոս, 2021)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք»:
Մարկ. Բ. 12

Այս հիացական խոսքերն արտասանեցին մարդիկ, որոնք վկաներն էին Ավետարանի մեջ հիշատակվող ամենատպավորիչ հրաշագործությունների մեկի՝ անդամալույծի բժշկության՝ կատարված Գալիլիայի Կափառնայում քաղաքում։

Անդամալույծի բժշկությունից օրեր առաջ Հիսուս եղել էր նույն քաղաքում եւ կատարել այլ հրաշագործություններ եւս։ Ժողովարանում ազատել էր պիղծ դեւի կապանքներից Աստծու խոսքին ունկնդիր մի մարդու (տե՛ս Մարկ. Ա. 21–28), Պետրոսի տանը բժշկել էր նրա զոքանչին (Ա. 30–31), ինչպես նաեւ մաքրություն պարգեւել իր առջեւ ծնկի եկած եւ Նրան «Տեր» խոստովանած մի բորոտի (Մարկ. Ա. 40–44)։ Ուրեմն՝ Հիսուսի համբավն արդեն իսկ տարածված էր այդ քաղաքում նախքան անդամալույծի բժշկության հրաշքը։

Երբ կրկին Հիսուս Կափառնայում քաղաքում էր, մի տանն էր, ուր շատ ժողովուրդ էր հավաքվել։ Ամբոխն այնքան էր խռնվել, որ փակվել էին տան ելքն ու մուտքը։ Հիսուսին հասնելու ոչ մի միջոց չկար։ Ավետարանիչն ասում է, որ Հիսուս տան մեջ էր։ Այդ արտահայտությունը պետք է հասկանալ հին դարերին հատուկ ձեւով։ Հնում տուն էր անվանվում բնակարանի կենտրոնական հատվածը, որը չուներ լուսամուտներ, քանի որ շրջապատված էր սենյակներով։ Միակ շփումը արտաքին աշխարհի հետ երդիկն էր՝ տանիքը։

Հիսուսի վարդապետությունը լսելու, ինչպես նաեւ բժշկվելու համար հեռու եւ մոտ բնակավայրերից Կափառնայում ժամանած բազմաթիվ

հիվանդներ, ունկնդիրներ, ինչպես նաեւ դպիրներ ու օրենսգետներ զբաղեցրել էին տան բոլոր սենյակները։ Տան մեջ եւ նրա սենյակներում այլեւս տեղ չլինելու պատճառով մարդիկ կանգնել էին նաեւ դրսում։ Լսում էին Հիսուսին եւ զարմանում Աստծու մեծագործությունների վրա։ Հենց այդ քարոզչության ընթացքում էր, երբ չորս հոգի պատգարակով բերում են իրենց անդամալույծ ընկերոջը կամ բարեկամին, սակայն բազմության պատճառով ոչ մի կերպ չեն կարողանում մոտենալ Հիսուսին։ Մտածում են տան կենտրոնական հատվածի երդիկից իջեցնել անդամալույծին, սակայն այն եւս նեղ էր, ուստի քանդում են այն եւ պատգարակի չափով տեղ բացելով՝ իջեցնում հիվանդին Քրիստոսի մոտ։

Հիսուս գիտեր, թե ինչու է այդ հիվանդությունը պատահել տվյալ մարդուն, դրա համար էլ նախ ներում է շնորհում նրա մեղքերին՝ հիանալով նրա եւ նրան բերած ընկերների հավատքի զորությամբ։ Իսկ հետո նաեւ անդամալույծին հրամայում է վերցնել մահիճը եւ գնալ տուն։ Ուրեմն՝ Տեր Հիսուս նախ մաքրություն է շնորհում հոգուն, ապա բժշկում մարմինը։

Ինչ ենք սովորում ավետարանական այս պատմությունից։

Նախեւառաջ այն, որ ուր էլ լինենք, Հիսուսի պես բարիք պետք է թողնենք մեր հետեւից։ Ում հանդիպենք, ինչ միջոցառումների մասնակցենք, ինչ շրջանակների հետ շփվենք, մենք Աստծու խոսքը պիտի խոսենք եւ, իհարկե, բարիք կամենանք ու կատարենք։ Հիսուս քարոզում էր անդադար եւ բարիք, ողորմություն, բժշկություն ու սեր տարածում։ Նա կարեկցում էր տկարին, աղքատին, հիվանդին, քաղցածին ու կարոտության մեջ եղողին։

Ինչպես մարդիկ 2000 տարի առաջ զարմանում էին մեր Տիրոջ՝ Հիսուսի թե՛ վարդապետության եւ թե՛ հրաշագործությունների վրա, նույնպես եւ այսօր այս աշխարհի մարդիկ պետք է հիանան ոչ միայն մեր քրիստոնեական դավանանքի խոստովանությամբ, Քրիստոսի վարդապետության քարոզչությամբ, այլ նաեւ՝ մեր քրիստոնեական գործերով։

Եւ ավելին. մեր գործերը պիտի գան նպաստավոր ունկնդրություն ապահովելու Աստծու խոսքի համար։ Այնպես պիտի վկայենք խոսքը, այնպես պիտի ապրենք, որ նաեւ այս դարի մարդիկ արտաբերեն նույն հիացական խոսքերը, ինչ այն ժամանակ. «Ինչ է այս վարդապետությունը» (Մարկ. Ա. 27), եւ կամ՝ «Այսպիսի բաներ բեք չէինք տեսել» (Մարկ. Բ. 12)։

Երկրորդ կարեւոր իրողությունը, որ բխում է այսօրվա ավետարանական պատգամից, մեր պատասխանատվությունն է մեր տկար բարեկամների համար։ Մեր հավատքը միայն մեզ համար չէ, այլ նաեւ մեր բարեկամների, մեր ընկերների։ Մենք եւ մեր հավատը ոչ միայն կարող ենք հրաշքներ գործել մեզ համար, այլ նաեւ՝ մեր շրջապատի։ Մենք՝ իբրեւ աղ եւ լույս, կոչված ենք մեզնից յուրաքանչյուրին տրված տաղանդները, քանքարները ոչ թե թաքցնելու հողի տակ, այլ ի պետս մեզ եւ մեր հարազատների գործածելու դրանք։

Քրիստոնեությունը, սիրելի՜ քույրեր եւ եղբայրներ, մարդու կրոն է, Քրիստոս Ինքը՝ Աստծու Որդին, մարդու կերպարանք առավ՝ վկայելով մարդու՝ Աստծու պատկերով եւ նմանությամբ ստեղծված լինելու փաստը։ Այս վարդապետությունը, սակայն, ունայն եւ անիմաստ կլինի, եթե մենք՝ այս դարի քրիստոնյաներս, չլինենք պատրաստի ընտրյալ անոթներ մարդու փրկագործության եւ Աստծու ծրագրերի համար։

Երրորդ եւ վերջին կարեւոր իրողությունը, որ ցանկանում եմ ընդգծել, սիրելի՜ հավատացյալներ, Աստծու խոսքը խանգարողների, այն քամահրողների, արհամարհողների մասին է։ Անդամալույծի բժշկության դրվագում մենք տեսնում ենք, թե ինչպես որոշ դպիրներ, օրենսգետներ փոխանակ բոլորի հետ հիանալու անդամալույծ մարդու փրկությամբ, բժշկմամբ, որոշեցին փորձել Հիսուսին եւ ստվերել Նրա կատարած բարիքը։ Մարդկանց այդ տեսակը միշտ եղել է, կա եւ լինելու է։ Նրանք փորձում էին խանգարել Քրիստոսին, նրանք խանգարելու են նաեւ Քրիստոսի հետեւորդներիս։ Սակայն մենք էլ, ինչպես առաքյալները, աստվածային իմաստության օգնականությամբ եւ Սուրբ Հոգու ներշնչմամբ պետք է ճիշտ ու դիպուկ պատասխաններով չեզոքացնենք այդ սադրանքները, որոնք այսօր եւս անպակաս են մեզնից, Եկեղեցուց, մեր հոգեւոր կյանքից։ Որքան էլ սադրեին, քննադատեին Հիսուսին, Նա շարունակում էր բարիք անել մարդկանց։ Մենք էլ, սիրելինե՜ր, չպիտի քննադատություններից, սադրանքներից ընկրկենք, ավելին՝ պետք է առավել չափով աշխատենք ծառայել մարդկանց բարիքի համար. բարությունը, գոնե բարիք կամենալը պիտի լինեն մեր պատասխանը բոլոր դեպքերում։

Աֆրիկյան մի ցեղախումբ մալարիայով է հիվանդանում։ Եւրոպացիները որոշում են օգնել ցեղախմբին, սակայն ջունգլիներն արգելում էին, որ եւրոպացիները հասնեին նրանց եւ դեղ մատակարարեին հիվանդներին։ Ուստի որոշում են ուղղաթիռով տեղափոխել դեղերը եւ վար նետել։

Տեսնելով երկնքից իջած օգնությունը՝ ցեղախմբի առաջնորդները որոշում են, որ աստվածներն անձամբ են իջել իրենց օգնելու։ Հրամայում են վերցնել դեղերը եւ անցկացնել պարանոցով։

Ուրեմն՝ Խոսքը միայն լսողներ, Աստվածաշունչը միայն համբուրողներ եւ նույն այդ Խոսքի մասին միայն խոսողներ չլինենք, սիրելինե՛ր, այլ նաեւ այն կատարողներ։ Խոսքի եւ բարի գործերի մատուակներ լինենք բոլորս, որ համախմբված ենք Տիրոջ Սուրբ Սեղանի շուրջ՝ իբրեւ մեկ ընտանիք՝ ճաշակելու Տիրոջ կենարար Մարմինն ու Նրա Անմահական Արյունը։

Երբեւէ չվախենանք, որ քիչ ենք, փոքր մի հոտ։ Հիշեք մշտապես Ոսկեբերան Հայրապետի խոսքերը. «Մեկ հոգին՝ Աստծու հետ, մեծամասնություն է»։

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերն ու խաղաղությունը «եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»։

Տ. ՁԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԿՈՆԴԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 օգոստոսի, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Օրհնեալ ես դու ի կանայս,
եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո»
(Ղուկ. Ա. 42)։

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Ավետարանաշունչ այս օրհնաբեր խոսքերն են թեւածում առաքելահիմն մեր եկեղեցիներում, քանզի անկողոպտելի ուրախությամբ եւ սրտի թրթիռով նշում ենք Հայոց Եկեղեցու հինգ տաղավար տոներից Ս. Աստվածածնի վերափոխման լուսավոր տոնը՝ կրկին փառաբանելով Ս. Կույս Մարիամին եւ հայցելով նրա բարեխոսությունն Իր Որդու մոտ։ Այսօր Եկեղեցին գովերգում եւ դրվատում է նրան, ով կարեւոր դերակատարություն ունեցավ մեր փրկագործության պատմության մեջ եւ մինչեւ իր կյանքի վերջին պահն անտրտունջ, առանց ավելորդաբանությունների ու անխոս հավատարիմ մնաց Աստծու խոսքին եւ իր սիրասուն Զավակին։ Նա անգամ Քերովբեներից եւ Սերովբեներից վեր դասվեց, մահկանացու լինելով՝ անմահացավ եւ դարձավ մարդկության ամենամեծ բարեխոսը Տիրոջ մոտ։ Ուստի պատահական չէ, որ Ս. Հովհաննես Մկրտչի մայր Եղիսաբեթը, Տիրամորը տեսնելով, Ս. Հոգով մարգարեացավ նրա մասին՝ ասելով. «Օրհնյա՛լ ես դու կանանց մեջ, եւ օրհնյա՛լ է որովայնիդ պտուղը» (Ղուկ. Ա. 42)։ Իսկապես օրհնված եւ երջանիկ է այն մայրը, որ տեսել է մանուկ Հիսուսի առաջին ժպիտն ու քայլերը, գրկել ու ջերմացրել Նրան իր շնչով, ցավն ու անասելի հարվածները լուռ տարել՝ երբեք չմոռանալով Աստծուց իրեն վերապահված կարեւոր առաքելության մասին։

Շատ քիչ բան է հայտնի Ս. Մարիամ Աստվածածնի կյանքի մանրամասների մասին, բայց անգամ այդ կցկտուր տեղեկությունները

բավարար են՝ պատկերացում կազմելու նրա ապրումների, հույզերի եւ մտածումների մասին։ Տիրամորը հանդիպում ենք Կանայի հարսանիքին, մանուկ Հիսուսի հետ տաճար գնալիս եւ Տիրոջ կյանքի ամենադրամատիկ պահերին։ Այդպիսին է նաեւ Ս. Աստվածածնի վերափոխման պատմությունը, որը մեզ է հասել Եկեղեցու Սրբազան Ավանդության միջոցով՝ առանձնահատուկ նշանակություն ստանալով մեր ազգային-եկեղեցական տոնաշարքում։

Մեր Տերը խաչի վրա կրած Իր չարչարանքների ժամանակ անգամ չմոռացավ Իրեն կյանք պարգեւած մորը եւ նրան խնամատարության հանձնեց Ս. Հովհաննես ավետարանչին (տե՛ս Հովհ. ԺԹ. 26–27)։ Շուրջ 12 տարի Աստվածամայրը հարատեւում էր աղոթքների, պահքի մեջ եւ հաճախ այցելում սիրելի Որդու գերեզմանին։ Այդ այցերից մեկի ժամանակ նրան է հայտնվում Գաբրիել հրեշտակապետն ու ավետում Տիրամոր՝ երկրային աշխարհից Վերին Երուսաղեմ վերափոխվելու լուրը։ Ս. Աստվածածինն այս բարի լուրը հայտնում է ազգականներին ու մյուս բոլոր քրիստոնյաներին՝ պատվիրելով իրեն թաղել Գեթսեմանիի ձորակում։ Այդ ժամանակ քարոզությունից վերադառնում է Ս. Հովհաննես ավետարանիչը, եւ Տիրամայրը նրան հայտնում է ամեն ինչ եւ պատվիրում, որ առաքյալը Ս. Պատարագ մատուցի, որպեսզի ինքը վերջին անգամ Ս. Հաղորդություն ընդունի։ Հաղորդվելուց հետո Ս. Աստվածամայրը գնում է Վերնատուն։ Մինչ առաքյալները լաց էին լինում, Ս. Հովհաննես առաքյալը վերցնում է մի տախտակ ու տալիս Ս. Կույսին եւ խնդրում, որ նա իր պատկերը դրոշմի դրա վրա։ Տիրամայրը վերցնում է տախտակը, խաչակնքում եւ դնում երեսին, այնուհետեւ թրջում այն իր արցունքներով եւ խնդրում Աստծուց, որ այդ տախտակի միջոցով մարդիկ բժշկվեն ախտերից եւ զանազան հիվանդություններից։ Երբ առաքյալները շրջապատում են մահիճը, ուր պառկած էր Տիրամայրը, աննկարագրելի մի լույս է հանկարծ երեւում։ Ներկաները սարսափում են, իսկ սենյակի վերեւում հրեշտակների զորքերով հայտնվում է Քրիստոս Աստված։ Տեսնելով Հիսուսին՝ Ս. Աստվածամայրն ավանդում է հոգին։

Երբ հանդիսավոր թափորը շարժվում է դեպի Գեթսեմանի, հանկարծ ներկաների գլխավերեւում լուսավոր եւ պսակաձեւ մի ամպ է գոյանում՝ առաջնորդելով թափորը։ Երուսաղեմի անհավատ բնակիչները, չարացած այս ամենից, գնում եւ ամեն ինչ հայտնում են հրեա քահանայապետներին եւ դպիրներին։ Վերջիններս էլ ամեն ինչ անում են

թափորը ցրելու համար։ Սակայն պսակաձեւ ամպը ձախողում է նրանց չար մտադրությունը՝ պարսպի նման շրջապատելով նրանց։ Շատերը կուրանում են, բայց վերագտնում իրենց մարմնավոր տեսողությունն ապաշխարելուց հետո։

Այդ օրը նաեւ մեկ այլ հրաշք է կատարվում։ Մի հրեա քահանա, տեսնելով հանդիսավոր թափորը, մոտենում է դագաղին՝ այն տապալելու մտադրությամբ։ Սակայն երբ դիպչում է դագաղին, հրեշտակն աննյութեղեն թրով կտրում է նրա երկու ձեռքերը։ Ձեռքերը մնում են դագաղի վրա, իսկ քահանան ընկնում է եւ խորապես զղջում իր արածի համար։ Ս. Պետրոս առաքյալը, տեսնելով քահանայի զղջումը, բժշկում է նրան։ Հետագայում այս քահանան դառնում է Քրիստոսի սիրո վարդապետության ջերմեռանդ տարածողներից։

Հայոց աշխարհի առաջին լուսավորիչներից Ս. Բարթողիմեոս առաքյալն այդ ժամանակ Երուսաղեմում չէր։ Երբ նա վերադառնում է եւ իմանում կատարվածի մասին, շատ է տխրում, քանզի չկարողացավ վերջին հրաժեշտը տալ Ս. Աստվածամորը։ Ուստի մյուսներից խնդրում է, որ գերեզմանը բացեն, որպեսզի վերջին անգամ հրաժեշտ տա Տիրամորը։ Առաքյալները բացում են գերեզմանը, բայց այն դատարկ էր։ Այդ պահին երկնքից մի ձայն է լսվում, որն ասում է, թե Ս. Աստվածածնի մարմինը երկինք փոխադրվեց։ Նույն ձայնը նաեւ պատվիրում է, որ Ս. Կույսի՝ փայտի վրա դրոշմած պատկերը տան Ս. Բարթողիմեոսին՝ որպես մխիթարություն։ Ըստ պատմահայր Ս. Մովսես Խորենացու՝ Հայաստանի առաջին լուսավորիչն այն բերում է Հայաստան եւ զետեղում Անձեւացյաց գավառի Դարբնոց կոչված տեղում, ուր հետագայում, ի պատիվ Աստվածամոր, եկեղեցի եւ կուսանոց են հիմնադրվում։

Ս. Աստվածածնին նվիրված ամեն տոն քրիստոնյաներիս համար ուրախության առիթ է եւ նվիրական օր, երբ կրկին անդրադառնում ենք Տիրամոր առաքինություններին, նրա բարեխոսությունը հայցում Տիրոջ մոտ եւ փորձում նմանվել նրան։ Ս. Մարիամի լուսավոր կերպարը ներշնչանքի աղբյուր է եղել Քրիստոսի Եկեղեցու անդամների համար ինչպես անցյալում, այնպես էլ այսօր, քանզի նա միակն է հանուր մարդկության մեջ, որ Աստծու կողմից շնորհ ստացավ՝ երկրիս վրա դառնալու մեր Փրկչի մայրը։ Տիրոջ հարությունից հետո նրա ներկայությունը մխիթարական եւ գոտեպնդող էր առաքյալների համար, որոնք փոքր-ինչ շփոթված էին եւ մտախոհ։ Իսկ մեզ համար Տիրամայրը ոչ միայն ամենակարեւոր

բարեխոսն է ու խնդրանքներ կատարողը, այլեւ քրիստոնեական բոլոր առաքինությունների մարմնավորողն ու կատարելատիպը։

Ս. Մարիամը խոնարհությամբ ընդունեց Բարձրյալի կանչը եւ անպատմելի հավատարմությամբ մինչեւ վերջին պահը հնազանդվեց Աստծու կամքին։ Խոնարհությունն առաքինություն է, որ զարդարում եւ բարձրացնում է ամեն մարդու՝ նրա կյանքը դարձնելով օրհնված եւ աստվածահաճո։ Գուցե այսօր շատերի մտածողության մեջ խոնարհությունը դիտարկվում է որպես թուլություն եւ տկարություն, բայց Աստծու խոսքի տեսանկյունից՝ հենց խոնարհներին է Աստված բարձրացնում եւ նրանց դարձնում իր առաքելության մեկ մասնիկը։ Աշխարհի հզորներն անգամ թեկուզ կյանքի վախճանին խոնարհվում են Աստծու կամքի առաջ, քանզի գիտակցում են իրենց մահկանացու, անզոր եւ տկար լինելը։ Հետեւաբար խոնարհությունը հատուկ է ուժեղներին եւ Աստծու կամքը կատարողներին, ինչպիսին էր Ս. Մարիամը՝ բարեպաշտ Ս. Հովակիմի եւ Ս. Աննայի դուստրը։ Երբ Գաբրիել հրեշտակը նրան ավետեց Փրկչի ծննդյան մասին, նա ավելորդ հարցեր չտվեց, չսկսեց խորանալ մանրամասների մեջ, այլ խոնարհությամբ հնազանդվեց Աստծու կամքին՝ ասելով. «Ահավասիկ Տիրոջ աղախինն եմ, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ. Ա. 38)։ Նա երկրային փառք կամ հարստություն չփնտրեց աշխարհի վրա, ոչ էլ փորձեց տարբերվել մյուսներից, այլ ապրեց մարդկանց մեջ պարզ եւ հասարակ, հագնվեց սովորական կանանց նման, խոսեց մարդկանց հետ մեղմ ու հարգալից՝ ամենուր վկայելով իր Որդու մասին։ Ս. Աստվածածինն ասես մարդու կատարյալ տեսակն է, որին պետք է ամենքս ձգտենք նմանվել եւ օրինակ ունենալ մեր կյանքում։ Միով բանիվ՝ նա ճշմարիտ խոնարհության, մաքրության, պարզության եւ կատարելության օրինակն է։ Ս. Աստվածածնի վերափոխման այս տոնը հարմար առիթ է քրիստոնյաներիս համար՝ խորհելու եւ հասկանալու, թե ով կամ ովքեր են մեր կյանքի տիպար օրինակները, ում ենք ցանկանում նմանվել... Այս է ժամանակակից մարդու ճգնաժամի պատճառներից մեկը, եթե ոչ՝ հիմնականը, երբ անընդհատ փոփոխվող կեղծ եւ ժամանակավոր արժեքների հորձանուտում մարդ մոռացել է աստվածատուր իր առաքելության մասին եւ ապրում է պատրանքներով ու օրվա պահանջով։ Այնինչ մարդու երկրային կյանքը ժամանակավոր է, ուստի պետք է անպայման մտածել նաեւ մեր հոգու փրկության եւ հավիտենական կյանքի մասին։ Եւ այս հարցում մեզ կրկին օգնության կարող է հասնել

Ս. Աստվածածինը՝ մայրերի մայրն ու քրիստոնյաներիս պահապանը, որի կյանքը համակ նվիրում էր իր Որդուն՝ մեր Փրկչին ու մարդկությանը։

Ուստի սրտանց այս պահին աղոթքով դիմենք Տիրամորը՝ խնդրելով բարեխոսել մեզ համար Քրիստոս Աստծու մոտ, «որպեսզի կանգ առնեն պատերազմները, դադարեն թշնամիների հարձակումները, հաստատվեն սերն ու արդարությունը երկրի վրա» («Ժամագիրք»)։

Թող Ս. Աստվածածնի բարեխոսությամբ իրականություն դառնան աստվածահաճո մեր բոլոր ցանկություններն ու երազները, իսկ հիվանդները՝ բժշկվեն, սգավորները՝ մխիթարվեն, տկարները՝ զորանան, մենք փոխվենք եւ միմյանց հանդեպ դառնանք ավելի բարի եւ սիրով։

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՒԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ (1991–2019 ԹԹ.)

Հայոց ազգային արժեհամակարգի գլխավոր օղակը հայրենիքն է, որի անքակտելի բաղկացուցիչն ավանդական ընտանիքն է։ Որքան ամուր է հայոց ընտանիքը, եւ հզոր՝ հայրենիքը, այնքան անվտանգ է ազգի գոյատեւումը։ Ազգի գոյապահպանման առաջին ու հիմնական նախապայմանն ազատ եւ անկախ հայրենիք ունենալն է։ 1991 թ. սեպտեմբերի 21-ին համաժողովրդական հանրաքվեով հռչակված Հայոց անկախ պետականության վերականգնումը մեր ժողովրդի երազանքի եւ իղձերի իրականացումն էր։ Այն ոչ միայն 70 տարվա խորհրդային մենիշխանությունից ազատվելու, անկախ հայրենիքում ապրելու եւ արարելու հնարավորություն տվեց, այլ նաեւ ապահովեց մեր ժողովրդի գոյապահպանումն ու զարգացումը։ Հայաստանի երրորդ Հանրապետության շրջանի երեք հայրապետներն անկախությունը ողջունել են որպես «գալիքի վստահություն, վերազարթոնքի վեմ», որին ապավինած, Վազգեն Ա. Պալճյանի (1955–1994 թթ.) խոսքերով, «առ Աստված հավատքով չպիտի պակասեն հայոց վերականգնվող ու զորացող ուժերը»[1]։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.-ն (1995–1999 թթ.), Հայաստանի անկախությունը համարելով նոր կյանքի սկիզբ, գրում է. «Ահա նոր շունչ փչեց Սուրբ Գրիգորի հավատքին ծնունդ տվող Հայաստանի վրա, դա ազատության աստվածատուր շունչն էր, որով դրվեցավ անկախության արդար պսակը անոր ժողովրդի գլխուն»[2]։

---

[1] Վազգեն Ա. *[Պալճյան], Երկերի ժողովածու, հտ. Բ., «Քարոզներ եւ խոսքեր», Ս. Էջմիածին, 2017, էջ 16։*

[2] Գարեգին Ա. *[Սարգիսյան], Հայրենիքը պատկերն է հայության, գիրք Ա., Ս. Էջմիածին, 2000, էջ 248–249։*

Այս նույն առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն նշում է. «Սուրբ էջմիածինը դառնավ հոգեւոր հայրենիքը Հայոց ու վառ պահեց հայ կյանքի սերը եւ տեսիլքը՝ կորցրած անկախ պետականության վերականգնման»[3]։ *Պատմության դժվարին ոլորաններում ու փորձությունների ժամանակ Մայր Աթոռից բաշխվող սերն ու փրկության հավատը հուսադրեցին եւ զորացրին հայ հոգիները, համախումբ ու միաբան պահեցին «հայոց փոքր ածուն», որի գոյությունը դարերով վտանգված էր թե՛ բռնագրավված հայրենիքում, թե՛ նրանից հեռու՝ օտար ափերում։ Այսպիսով՝ 1991 թ. սկսվեց Հայոց անկախ պետականության՝ Հայաստանի երրորդ Հանրապետության շրջանը. այստեղ տեղին է հիշել մեծ բանաստեղծ Պարույր Սեւակի խոսքերը.*

Հայրենիքն այն է, որ չեն որոնում։
Հայրենիքն այն է, որ գտնված է
Ի սկզբանե, ի ծնե եւ միշտ,
Ուրեմն նաեւ նա չի էլ կորչում[4]։

Հայոց հայրենիքի եւ ընտանիքի գաղափարները Հայաստանի երրորդ Հանրապետության տարիներին (1991–2019 թթ.) իրենց արտացոլումն են գտել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակություններում, որոնցից առանձնացրել ենք «Էջմիածին» ամսագիրն ու «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը։

Խոսելով հայրենիքի եւ ընտանիքի մասին՝ Գարեգին Ա.-ն ընդգծել է իրապես քրիստոնյա, հայ լինելու եւ մյուս ազգերին մեր արժեքները ներկայացնելու կարեւորությունը։ Նրա պատգամն է՝ մնալ հավատարիմ սեփական հայրենիքին, հավատքին, լեզվին, ընտանիքին, նաեւ լինել հաղորդության մեջ այլ ազգերի հետ՝ մեր արժեքների զարգացման համար, ինչն արդյունք է հարաբերության, ուրիշների հետ հաղորդակցության[5]։

Ըստ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ «Հայրենիքին պարտք ենք ամենքս, մշտապես։ Հայրենիքը միշտ իրավացի է՝ սկիզբ եւ ինքնություն պարգեւող իր զորությամբ, իր զավակներին միավորող խորհրդով։ Հայրենիքի առջեւ զինաթափ ենք բոլորս»[6]։

---

[3] Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), հտ. Ա., Ս. Էջմիածին, 2010, էջ 358։*

[4] Պ. Սեւակ, *Երկերի ժողովածու, հտ. 6, 1976, էջ 228։*

[5] *Տե՛ս* Գարեգին Ա. [Սարգիսյան], *Հայրենիքը պատկերն է հայության, էջ 249–250, 577։*

[6] Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), հտ. Ա., էջ 106։*

«Հայաստան—Սփյուռք» վեցերորդ համաժողովի բացման ժամանակ՝ 1997 թ. սեպտեմբերի 18-ին, Հայոց հայրապետ Գարեգին Բ.-ն մասնավորապես նշում է. «Հայրենաբնակ թե սփյուռհահայ՝ հայրենիքի եւ ազգի հանդեպ կրում ենք նույն պատասխանատվությունը: Հայրենիքից չի կարելի երես դարձնել ձախողած գործի կամ տեղ գտած անարդարության պատճառով: Հայրենիքից չի կարելի երես դարձնել, եթե այն նեղությունների, փորձությունների ու մարտահրավերների առջեւ է կամ նվազ հարուստ ու հարմարավետ է: Ջինվորն ու ծառան ենք հայրենիքի: Այս պիտի լինի մեր նշանաբանը»[7]:

Հայաստանի անկախության 20-ամյակի կապակցությամբ ասված իր շնորհավորական խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն իրավամբ նկատում է, որ ազատությունն ու անկախությունն առանձնակի իմաստ ու նշանակություն ունեն այսօր եւս, երբ քրիստոնեական մեր արժեքները, միմյանց հանդեպ սերը, պետություն շենացնելը գերիշխող նպատակներ են մեր կյանքում: Թանկ ենք վճարել մեր անկախ պետականության համար, ուստի ամեն գնով պետք է պահենք Հայաստանը՝ մեր հայրենիքը, որ լինի ազգահավաքության, մեր աշխարհացրիվ ժողովրդի ապահովության եւ առաջընթացի պատվարը, պաշտպանենք մեր երկիրը մեր զավակների ու սերունդների լուսավոր կյանքի, Աստծու փառքի համար[8]:

Հայրենիքի պահպանման հիմնական գործոնը հայրենասիրությունն է, որը դարերի ընթացքում ամրանում եւ սերնդից սերունդ է փոխանցվում պատմական հիշողության միջոցով: Ազգի բոլոր սերունդների հայրենասիրության դրսեւորումների լավագույն ավանդույթները պատմագիտությունն ամփոփում է հայրենիքի գաղափարի մեջ:

Հայաստանի երրորդ Հանրապետության շրջանի երեք հայրապետները նշել են, որ ազգային զգացումների ամենացայտուն արտահայտությունը հայրենասիրությունն է, սեփական պետության եւ ժողովրդի մեծարման ձգտումը, նրանց պաշտպանությունը հնարավոր բոլոր ուժերով ու միջոցներով:

---

[7] *Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց. Հատընտիր պաշտոնականք (2010—2019 թթ.), հտ. Բ., Ս. Էջմիածին, 2019, էջ 442—443. «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, սեպտեմբեր Բ., թիվ 18 (494), էջ 3:*

[8] *Տես՝ Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց. Հատընտիր պաշտոնականք (1999—2009 թթ.), հտ. Ա., էջ 547. «Քրիստոնյա Հայաստան», 2017, սեպտեմբեր Բ., թիվ 18 (494), էջ 4:*

Հայոց կաթողիկոսները «Էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթում տպագրված իրենց քարոզներում ընդգծում են՝ հարազատ հողը, հայրենական մշակույթը, մայրենի լեզուն, ազգային պատմությունը, ահա այն բոլոր աղբյուրները, որոնք սնում են իսկական հայրենասիրությունը: Ըստ նրանց՝ հայրենիքն ու հայրենասիրությունը ժողովրդի գոյապահպանման հիմնական պայմաններն են:

Պատմությունը բազմիցս ապացուցել է, որ հայրենիքի հարցում զիջումներ չեն արվում. այն սուրբ է ու հավերժական: Ազատ եւ անկախ հայրենիքն այն հզոր գործոնն է, որն ապահովում է ժողովրդի գոյապահպանման ու զարգացման հեռանկարները:

Հպարտություն, արժանապատվություն ունեցող ազգը չի կարող հանդուրժել օտարի տիրապետությունը, հրաժարվել իր լեզվից, պատմությունից, ազգային Եկեղեցուց եւ ձուլվել այլ ժողովրդի:

Ազգային արժանապատվություն ունեցող ժողովուրդներն առաջնորդվում են «Ազատություն կամ մահ» կարգախոսով, քանզի սեփական հայրենիքի պաշտպանությունը սուրբ պարտականություն է: Ազատության եւ անկախության համար պայքարող ազգերը գոյատեւում են, իսկ հարմարվողներն ու պայքարից խուսափողները՝ կործանվում: Ահա այս գաղափարներն են իշխում «Էջմիածին» ամսագրում 1991–1994 թթ. տպագրված հոդվածներում:

Հայրենասիրության քարոզչությունը, սերունդներին նվիրյալ եւ անձնազոհ դաստիարակելը ազգային հիմնախնդիրներից են: Առանց հայրենասիրության հնարավոր չէ հայրենիք պահել, որն ազգի բոլոր սերունդների դարավոր, հերոսական պայքարի արդյունքն է: Առանց անձնազոհության չենք կարող հայրենիք ունենալ. հերոսների արյամբ ներծծված մայրենի հողը քաջերի նոր սերունդների է կյանքի կոչում:

«Էջմիածին» ամսագրի 2000 թ. Բ. համարում հոդվածագիրը, տալով հայրենիքի բնութագիրը, ընդգծում է, որ ժողովուրդը ղեկավարվում է «հայրենիքի հրամայականով», որը դառնում է սրբություն[9]:

«Հայրենիքը» պատմական ամբողջական հասկացություն է. եթե, քաղաքական հանգամանքների բերումով, որեւէ ազգի հայրենիքը բաժանվում է մասերի՝ երկու Գերմանիա, երկու Կորեա, երկու Վիետնամ եւ այլն,

---

[9] *Տե՛ս «Էջմիածին», 2000, Բ., էջ 31–33:*

ապա դա ամենեւին չի նշանակում, թե այդ ժողովրդի մեկ ամբողջական հայրենիքը վերածվում է երկուսի։

Արեւելյան Հայաստանը հայոց պատմական հայրենիքի մի փոքր՝ տարածքային առումով շուրջ մեկ տասներորդ մասն է։ Այն հռչակելով մեր միակ հայրենիք՝ փոխակերպում ենք հայոց հայրենիքի գաղափարը, հրաժարվում արդարացի պահանջատիրությունից։ Սույն մոտեցումը մշակվել է խորհրդային տարիներին եւ բխեցվել այն դրույթից, թե Հայկական հարցը լուծված է, իսկ հայերը հողային պահանջներ ու կորցրած հայրենիք չունեն։ Նման մոտեցումը հակապատմական է։

Հայոց պատմական հայրենիքի անքակտելի մասն է Արցախը։ «Էջմիածին» ամսագրի 1993 թ. Ա.–Բ.–Գ. միացյալ համարում ներկայացված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ի խոսքը հայոց ամբողջական հայրենիքի, ազատագրված Արցախի մասին[10]։ Նա ընդգծում է, որ այսօր մեր փոքրաթիվ ազգը Մայր հայրենիքում, այդ թվում՝ Արցախում, ապրում է իր իսկ արյան գնով։

Հայոց հայրապետը մասնավորապես ասում է. «Արցախի ցաւը լոկ մեր ազգի ցաւը չէ, այլ աշխարհի ցաւը, որի դէմ մաքառում է մեր ազգը, գրեթէ՛ մէն մենակ։ Ինչքան էլ ծանր ճնշեն մեր վրայ երկիւղներն ու սպառնալիքները, չենք կարող չհիանալ Արցախի ազատամարտիկների սխրանքով, նրանց՝ սահման չունեցող զոհաբերութեան ոգով, մահուամբ մահը յաղթելու քրիստոնէական ժայռացած հաւատքով»[11]։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն Արցախի անկախության 20-ամյա հոբելյանի առթիվ ասում է. «Արցախի սահմաններից հայրենասիրությունն ու ազգանվիրումը ալիքվեց ու տարածվեց եւ համախմբեց ի սփյուռս աշխարհի Մեր զավակներին, որոնք դարձան բոլոնցք՝ ամուր պահելու հաղթանակի դրոշն ու իրավանց պաշտպանությունը Արցախի.... Առ հայրենիք սիրո, հանձնառության ու զոհողության այս ոգին է զորավոր այն ուժը, որը մեր ժողովրդին դարձնում է աննկուն ամեն տեսակի փորձությունների առաջ.... Այս ոգին մեր ժողովրդի ինքնության նկարագիրն է, դիմագիծը, որի շնորհիվ դարերի հողմերին հանդիման գոյատեւել է, գտել վերածնվելու ուժ եւ ստեղծելու, արարելու եռանդ»[12]։

---

[10] *Տե՛ս «Էջմիածին», 1993, Ա.–Բ.–Գ., էջ 5–6։*

[11] *Տե՛ս անդ, էջ 4։*

[12] *Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց. Հատընտիր պաշտոնականք (2010–2019 թթ.), հտ. Բ., էջ 415։*

ՀՀ անկախության շրջանի երեք հայրապետներն ընդգծել են հայ-բենիք—սփյուռք ամուր կապի կարեւորությունը։ Հայոց ցեղասպանությունից փրկված արեւմտահայությունն ապաստան գտավ աշխարհի տարբեր երկրներում, ձեւավորվեց հայկական Սփյուռքը. ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է հնարավորին չափ ընդլայնել Սփյուռքի հետ հարաբերությունները, ինչը նաեւ ազգապահպանման, ուծացումից փրկության միջոց է։

Սփյուռքը Հայոց ցեղասպանության հետեւանքն ու խորհրդանիշն է. այն անուրանալի դերակատարում ունի Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող դժվարին պայքարում։

Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի ազգային քաղաքականությունը միեւնույն հունով տանելը, համազգային գաղափարախոսության սկզբունքներին ծառայեցնելը ամենեւին էլ դյուրին չեն։ ՀՀ-ում եւ Սփյուռքում գործում են կուսակցական եւ ապակուսակցական բազմաթիվ ուժեր. տարբերությունն այն է, որ Սփյուռքում գործում են ավանդական, իսկ Հայաստանում՝ եւ ավանդական, եւ նորաստեղծ կուսակցություններ ու կազմակերպություններ։

Հայոց ազգային պահանջ է հայրենիք—սփյուռք միասնական համակարգի ձեւավորումը՝ հայ ժողովրդի առաջ ծառացած կարեւորագույն խնդիրների լուծման երաշխիքը։

2010 թ. իր քարոզներից մեկում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրենիք-սփյուռք միասնության մասին ասում է. «Սիրելի՛ ժողովուրդ հայոց, հայրենիք եւ սփյուռք միասնությամբ հետեւողականորեն շարունակենք պաշտպանել մեր իրավունքները՝ վստահությամբ, որ արդարություն պիտի լինի մեր ժողովրդի համար, եւ բոլոր պետությունների, նաեւ Թուրքիայի կողմից պիտի ճանաչվի եւ դատապարտվի Ցեղասպանությունը»[13]։

Վեհափառ Հայրապետը մեկ այլ առիթով նշում է. «Փա՛ռք Բարձրյալին, Սփյուռքը նոր օրհնություն դարձավ հայ կյանքին՝ հակառակ, որ իբրեւ անեծք՝ աշխարհացրիվ սփռեցին մեր ժողովրդին։ Մեր ապագան հայրենիքի եւ Սփյուռքի ներշաղախ ընթացքն է։ Մենք մեկ առաքելություն ունենք ու մեկ ճանապարհ։ Միասին պիտի տքնենք, որ արագափոփոխ մեր ժամանակներում հայրենիքն ու Սփյուռքը՝ հզոր, ազդեցիկ ու կենսունակ, նեցուկ լինեն միմյանց։ Արդարեւ, ի՞նչն է պակասում մեզ. պատմության օրինա՞կը, թե՞ դա-

[13] *«Էջմիածին», 2010, Դ., էջ 12։*

սը, երկիր շենացնելու ու մշակույթ զարգացնելու փո՞ռնը, հոգու կոռո՞վը, թե՞ մտքի թռիչքը...»[14]։

2011 թ. սեպտեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն, ՀՀ անկախության տոնի առթիվ խոսելով հայրենիք-սփյուռք կապերի մասին, մասնավորապես ընդգծում է. «Նոր դար ենք մտել ազգային մեր այս իղձերն իրականութիւն դարձնելու հաւատով, որի հիմքը մեր հայրենի անկախ պետականութիւնն է: Ազատ ու անկախ հայրենիքը մեծ փոփոխութիւն եւ տեղաշարժեր է բերել համազգային մեր կեանքում, միաւորել ու կենսաւորել է մեր ժողովրդի ուժերը, ջանքերն ու հնարաւորութիւնները: Անկախ պետականութեան պայմաններում կեանքի են կոչուել եւ իրագործւում են համազգային ծրագրեր: Հայրենիքով զօրացած Սփիւռքի մեր զաւակներն աւելիով մասնակից են մեր երկրի շէնացմանն ու զօրացմանը.... Յիրաւի, հայրենիքով համախմբուած՝ իրական են մեր զալիքի լուսաւոր հեռանկարները»[15]։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, «Հայաստան—Սփյուռք» վեցերորդ համաժողովի բացման ժամանակ կարեւորելով մեր ժողովրդի աշխարհասփյուռ զավակների ազգային համախմբումը Մայր հայրենիքում՝ Հայոց պետության հովանու ներքո, նշում է. «Հայաստան—Սփյուռք» համաժողովները կարեւոր հարթակ են դարձել Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի միասնության զորացման, գործակցության խթանման եւ մեր ժողովրդի տարբեր հատվածների փոխճանաչման եւ առնչությունների ընդլայնման համար: Այսօր մեզ հայրենիքում համախմբել են մեր ընդհանուր պատասխանատվությունն ու մտահոգությունը մեր ժողովրդի ներկայի եւ ապագայի նկատմամբ»[16]։

Հայրենասիրության եւ ազգային արժանապատվության ձեւավորման գործում մեծ է հատկապես դպրոցական կրթության դերը։ Հայրենասիրության միջոցով ազգային ինքնագիտակցության կերտումը պետք է դառնա այն շաղախը, որ կապելու է հանրակրթական բոլոր առարկաները՝ մայրենի լեզվից մինչեւ երաժշտություն։ Այս իմաստով, անշուշտ, կարեւորվում են մասնավորապես հայագիտական առարկաները։ Հայրենիքի գաղափարի ձեւավորման գործում անհրաժեշտ է հատկապես Հայոց Եկեղեցու եւ ազգային պատմության իմացությունն։

---

[14] *Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց. Հատընտիր պաշտոնականք (1999—2009 թթ.), հտ. Ա., էջ 267։*

[15] *«Էջմիածին», 2011, Թ., էջ 9—10։*

[16] *«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, սեպտեմբեր Բ., թիվ 18 (494), էջ 3։*

Շեշտված նպատակը, ջերմությունն ու հոգին են պակասում մեր արդի դպրոցին, որը պետք է լինի հայրենագիտության տաճար։ Ինչպես նշել են ՀՀ անկախության շրջանի երեք հայրապետները, հայոց մանուկը պետք է ճանաչի եւ սիրի իր հայրենիքն ու ազգին։ Կրոնական երկյուղածությամբ եւ անսահման նվիրումով պետք է դասավանդվի հայրենագիտությունը[17]*։*

Հայոց պատմության առանձնահատկություններով պայմանավորված՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին բախտորոշ դեր է կատարել մեր հայրենիքի պահպանման, հայրենասիրության եւ ազգային ինքնագիտակցության կերտման, գոյապահպանման գործում։

Հայոց ավանդական ընտանիքին վերաբերող բազմաթիվ հոդվածներ են հրատարակվել «Էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթում։ ՀՀ անկախության շրջանում հայոց հայրապետներն ընդգծել են, որ միայն ամուր ընտանիքը կարող է լինել հզոր հայրենիքի հիմքը։ Խոսելով հայոց արժեքային համակարգի եւ ընտանիքի կարեւորության մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.-ն ընդգծել է. «Կարող է մի ընտանիք շատ համեստ, նույնիսկ աղքատության մեջ ապրել՝ նյութական առումով, սակայն երջանիկ կարող է լինել ծնողական սիրով, ընտանեկան միջավայրով ավելի, քան երբեմն մեծահարուստները, որոնք շատ առատ սեղաններ ունեն, շողշողուն հագուստներ են հագնում, բայց երջանկությունը հաստատ չեն ապրում։ Եթե մենք հոգեկան այս հավերժական ու կենդանարար արժեքներից զրկվեինք, ապա պատմության ընթացքում չէինք կարող ապրել որպես հայ ժողովուրդ։ Ես այսօր պետք է թվարկեմ այդ արժեքներից մի քանիսը։

Առաջինը մեր քրիստոնեական հավատքն է։ Նա, ով Աստծու հետ հաղորդակցությունից զրկվի, կկտրվի երջանկության աղբյուրից։ Մենք մնացինք Աստծու, Սուրբ Ավետարանի, մեր Եկեղեցու, հոգեւոր աղբյուրների հետ հաղորդության մեջ, եւ այդ սնուցող աղբյուրների միջոցով մեր հավատքը չպակասեց։

Երկրորդ մեծ արժեքը սերն է Հայրենիքի, մեր հայրենի հողի նկատմամբ։ Մենք կապված մնացինք այն հողին, որ Աստված տվեց մեզ։ Այդ հողում մենք դրեցինք մեր ստեղծագործական կարողությունը, նրան միախառնեցինք մեր տաղանդը եւ այն վերածեցինք Հայրենիքի՝ մեր մտածման, ստեղծագործության կնիքը դնելով այս հողի վրա։

---

[17] *Տե՛ս անդ, էջ 21։*

Երրորդը լեզուն է՝ մեր հայոց ոսկեղենիկ լեզուն: Ամեն ինչ կորցրինք, զրկվեցինք մեր նյութական ունեցվածքից, երբ Հայաստանում արշավանքներ եղան, ավերումներ եղան, օտարների տիրապետության տակ ընկանք, սակայն մեր լեզուն երբե՛ք ու երբե՛ք չմոռացվեց:

Չորրորդը հայ ընտանիքն է՝ սիրտը հայ ժողովրդի: Այսօր ինչ տեսնում եք ընտանեկան կյանքի տեսանկյունից՝ աղքատացում է, տկարացում ողջ աշխարհում: Ընտանեկան օջախի սերը, երջանկությունն սկսել է խաթարվել: Մենք գերագույն սրբություն ենք ճանաչել հայ ընտանիքը, եւ եթե այդ սրբության գաղափարը տկարանա մեր մեջ, ապա մենք զորավոր ու հարատեւող ազգ չենք կարող լինել»[18]:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն 2014 թ. սեպտեմբերի 12-ին «Ընտանիք, հասարակություն, Եկեղեցի» համաժողովին իր օրհնության խոսքն ասելիս կարեւորեց հայ ավանդական ընտանիքի դերն ու նշանակությունը հասարակական մեր կյանքում, ինչպես նաեւ իրավացիորեն նշեց այսօր ընտանեկան կյանքում առկա անցանկալի երեւույթները: «Էջմիածին» ամսագրի 2014 թ. Թ. համարում ներկայացված է Վեհափառ Հայրապետի խոսքը[19]. «Հայ Եկեղեցին մշտապես բարձր է գնահատել ընտանիքի ամբողջականությունը, սրբությունը եւ անփոխարինելի կարեւորությունը մեր ժողովրդի կյանքում՝ դիտելով որպես հոգեւոր եւ բարոյական արժեքների պահպանման հիմնասյուն եւ անփոխարինելի հաստատություն հանրային առողջ գիտակցության ձեւավորման ու զարգացման համար: Ընտանիքի այսպիսի հասկացողության հիմքը Սուրբ Ընտանիքն է, որը հիմնված է սիրո, բարության, ազատության, խնամքի, գթասրտության, հարգանքի, անփոխարինելի արժեքների վրա:

Մեր օրերում, արագընթաց փոփոխությունների, նաեւ արժեքների անտեսման պայմաններում, ընտանիքի ավանդական ընկալմանը հակադրվում են ծնունդ առնող տարաբնույթ գաղափարական եւ հասարակական հոսանքները, կենսատեխնոլոգիական միջոցների առաջադրած մարտահրավերները, որոնք թափանցում են մարդու կյանքի նվիրական ոլորտը՝ հատկապես որդեծնության հարցերում: Երեւելի ու աներեւույթ զանազան հարձակումներից, ցավոք, անմասն չի մնացել եւ չի մնում նաեւ հայ ընտանիքը: Այս առումով մտահոգիչ են ամուսնալուծությունների, հղիության՝ ոչ քիչ դեպքերում սեռով

---

[18] ԳԱՐԵԳԻՆ Ա. [ՍԱՐԳԻՍՅԱՆ], *Հայրենիքը պատկերն է հայության, գիրք Ա., էջ 257–258:*

[19] *Տե՛ս «Էջմիածին», 2014, Թ., էջ 7–8:*

պայմանավորված արհեստական ընդհատումների աճը, ծնելիության նվազումը, կանխատեսվող ժողովրդագրական անցանկալի փոփոխությունները, որոնք մասնավորաբար պետք է ֆնարկվեն համաժողովում»[20]։

Այսպիսով՝ Հայաստանի երրորդ Հանրապետության տարիներին հայոց կաթողիկոսները հայրենիքը, ընտանիքն ու Եկեղեցին համարել են ՀՀ ազգային արժեհամակարգի ձեւավորման եւ պահպանման հիմքերը։

РЕЗЮМЕ

В 1991 году была восстановлена независимость Республики Армения, основным звеном в системе ценностей которой стали идеи родины и традиционной армянской семьи: чем сильнее родина и семья, тем надежнее становление независимой государственности.

Основополагающие принципы периодически излагались в проповедях в честь Рождества и Пасхи и в выступлениях на научных и панармянских конференциях, а также исторических и философских статьях католикосов всех армян Вазгена I, Гарегина I и Гарегина II. Обобщая идею родины, авторы определяют ее как историческую территорию, на которой живет народ, и которая по истечению веков становится родиной с сформировавшимися традициями погребения предков, своей национальной культурой, архитектурными и этнографическими памятниками и т. д. Когда «земля» воспринимается как «дом» и «дом» — как «родина», а кровь, пролитая национальными героями, формирует национальное самосознание, ощущение своей причастности к родине становится кровной, является условием выживания нации.

Основной составляющей понятия родины являются патриотизм, принадлежность к христианской Апостольской Церкви, причастность к освободительной борьбе Арцаха и связь с армянской диаспорой.

SUMMARY

In 1991, the Republic of Armenia regained its independence, and the ideology of the homeland and the traditional Armenian family became the cornerstone of its

[20] *Տե՛ս անդ, էջ 8։*

system of values. The stronger the homeland and the family are, the more secure the independent state is.

Fundamental principles have been periodically presented by the Catholicoi of All Armenians Vasken I, Karekin I and Karekin II in their Christmas and Easter sermons, speeches during scientific and pan-Armenian conferences, and in historical and philosophical articles. Generalizing the idea of the homeland, the authors define it as a historical territory, in which the people live and which, over the centuries, has become a homeland with established rituals of burial of ancestors, its own national culture, architectural and ethnographic monuments, etc. When “land” is perceived as “home”, and “home” is like “homeland”, and the blood shed by national heroes forms the national identity, then the feeling of belonging to the homeland becomes vital and becomes a condition for the survival of the nation.

The main components of the concept of homeland are the following: patriotism, affiliation to the Armenian Apostolic Church, involvement in the liberation struggle of Artsakh and ties with the Armenian Diaspora.

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

ՁԵՄԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ (2010-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Հայտնի է, որ 2000-ականների առաջին տասնամյակին ճեմարանի՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ղեկավարությամբ իրականացված բարեփոխումների արդյունքում Մայր Աթոռի հոգեւոր ուսումնական հաստատությունը ձեռք բերեց պետականորեն ճանաչված, մասնագիտական կրթություն իրականացնող եւ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ։ ՀՀ պետական կրթական չափորոշիչների պահանջներին լիովին համապատասխան՝ ճեմարանին իրավունք վերապահվեց բակալավրիատի եւ մագիստրատուրայի կրթական ծրագրերով «Աստվածաբանություն» մասնագիտությամբ շրջանավարտներին շնորհել հավատարմագրված մասնագիտության «բակալավրի» եւ «մագիստրոսի» դիպլոմ[1]։

Այսպիսով՝ ճեմարանում ստեղծվեցին բոլոր հիմքերը եռաստիճան կրթության անցնելու եւ եւրոպական միասնական կրթական տարածքին միավորվելու համար։ 2010-ական թվականներին ճեմարանի առջեւ ծառացած հրատապ այդ խնդիրների լուծման ղեկավարությունը կրկին ստանձնեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Մայր Աթոռի կրթական հաստատություններում բարեփոխումների սահուն ընթացքն ապահովելու, ուսումնակրթական գործընթացները կենտրոնացված կազմակերպելու, ղեկավարելու, համակարգելու եւ վերահսկելու, ինչպես նաեւ ծավալված աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ 2012 թ. մարտի 20-ին Հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս. Սարոյանի ղեկավարությամբ *կազմավորվեց Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական հաս-*

---

[1] *Տե՛ս* Ավ. Քալաշյան, *Ճեմարանի կրթական բարեփոխումները Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք (2000–2007 թթ.), «Էջմիածին», 2019, Ե., էջ 115–129։*

տատությունների վերատեսչությունը[2], որի հսկողությամբ էլ ընթացավ կրթության միջազգային չափորոշիչներին համապատասխանող ճեմարանի բակալավրիատի եւ մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի շարունակական կատարելագործումը:

Եւրոպական միասնական կրթական համակարգի պահանջներին համահունչ՝ ճեմարանում լրամշակվեց բարձրագույն կրթության առաջին աստիճանի՝ բակալավրիատի ուսումնական ծրագիրը, որը կազմվել էր Մայր Աթոռի սահմանած կրթական սկզբունքների, ծրագրային պահանջների եւ Հանրապետության կառավարության հաստատած պետական չափորոշիչների ներդաշնակ զուգադրությամբ։ Ճեմարանի բակալավրիատի ուսումնական լրամշակված ծրագիրը չափորոշող *փաստաթուղթ էր, որով սահմանվում էին. ա. կրթական աստիճանի ուսումնական գործընթացների կառուցվածքը, տեւողությունը, շարունակականությունը, ուսանողական գործնական պարապմունքները եւ արձակուրդների տեւողությունը, բ. ուսումնասիրվող առարկաների հաջորդականությունը եւ յուրացման տրամաբանական անցումները, գ. առարկայացանկի բաժանումներն ըստ ուս. տարիների, կիսամյակների եւ շաբաթների, դ. յուրացվող դասընթացների ստորաբաժանումները (ընդհանուր հումանիտար ու հասարակագիտական, ընդհանուր եւ հատուկ մասնագիտական), ե. կրթական աստիճանին համապատասխան շաբաթական, կիսամյակային եւ տարեկան բաշխվածությունը, զ. ուսանողների առավելագույն՝ շաբաթական եւ կիսամյակային պարտադիր բեռնվածությունը, է. դասախոսների շաբաթական, կիսամյակային եւ տարեկան բեռնվածությունը։ Նախատեսված էր նաեւ կրթության մասնագիտական առանձնահատկությունները հաշվի առնող առարկաների փոփոխական հատված*[3]*։*

---

[2] *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսչության կառույցի մեջ էին մտնում Գեւորգյան հոգեւոր ճեմարանը՝ որպես մայր բուհ, Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը, քահանայից պատրաստման լսարանը, ինչպես նաեւ Հառիճի Թրբանճյան ընծայարանը՝ որպես բուհին կից ավագ դպրոց։ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս. Սարոյանի առաջարկով որոշակի փոփոխություններ կատարվեցին նաեւ ճեմարանի ամբիոնների կառուցվածքում, եւ նախկին չորս ամբիոնների միավորմամբ կազմվեցին երկու՝ աստվածաբանության ու պատմական աստվածաբանության եւ հումանիտար առարկաների ամբիոններ։*

[3] *Բակալավրիատի ուսումնական նոր ծրագրով ուս. տարվա ընթացքում ուսանողներին տրվում էր Ս. Ծննդյան եւ Ս. Հարության ամենամյա կարճաժամկետ (1-ական շաբաթ) եւ ամառային (7 շաբաթ) արձակուրդներ։ Ուսումնառության ողջ ընթացքում ուսանողները եկեղեցում պետք է ձեռք բերեին հովվական փորձառություն, ինչը ղեկավարում էին տեսչությունն ու հոգեւոր դաստիարակները։ Կրթական աստիճանի յուրացումը եզրափակվում*

Ուսումնական լրամշակված ծրագրով ուսանողներին առաջադրվող հիմնական պահանջն էր՝ հոգեւոր արդյունավետ ծառայություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ ձեռք բերել: *Այս նպատակով աստվածաբանական բարձրագույն կրթության քառամյա այս ծրագրով առաջնային համարվեց աստվածաշնչագիտության եւ աստվածաբանության հենքային խորացված ուսուցումը։ Նրանում զգալի տեղ էր հատկացվել նաեւ ապագա հոգեւորականներին եկեղեցական սպասավորությանը պատրաստելուն, ինչպես նաեւ հաջորդ՝ մագիստրոսական կրթության ընթացքում մասնագիտական հմտությունները կատարելագործելուն։ Նպատակային այդ խնդիրների իրագործման համար ձեւակերպվել էին նաեւ ուսանողների կողմից առարկայական ծրագրերի յուրացման հիմնական պահանջները. ա. հստակ պատկերացում ունենալ դասընթացների առարկայական տիրույթի, մեթոդների եւ գործիքակազմի վերաբերյալ, հիմնովին յուրացնել դրանց հասկացությունների եւ դատողությունների համակարգը, բ. անհրաժեշտ գիտելիքներ ձեւավորել աստվածաբանության, հայագիտության, հովվագիտության, հումանիտար եւ լեզվաբանական դասընթացների հիմնարար հարցերի վերաբերյալ, գ. յուրացնել կրթական աստիճանի համար սահմանված սկզբնաղբյուրները եւ բնագրերը, դ. Հայ Եկեղեցու ավանդության դիրքերից յուրացնել արեւելյան եւ արեւմտյան աստվածաբանական մտքի եւ դպրոցների զարգացման միտումները, ջատագովության, հայրաբանության եւ ծրագրային այլ գիտակարգերը։*

Ճեմարանի բակալավրիատի ուսումնական լրամշակված նոր ծրագրում նախատեսվող հիմնական բաղադրիչը մասնագիտական գիտելիքներ ձեւավորող ու զարգացնող աստվածաբանական կրթությունն էր: *Կրթական այդ խնդրի իրագործումը պայմանականորեն բաժանված էր երկու մասի՝* տեսական գիտելիքների ձեռքբերում *եւ* գործնական հմտությունների ձեւավորում։ *Առաջինը լուծում էր ուսանողների կողմից աստվածաբանական հիմնարար արժեքների շարունակական յուրացումը, իսկ երկրորդը՝ հոգեւոր գործնական կյանքում դրանց արհեստավարժ կիրառումը։ Այլ կերպ ասած՝ ճեմարանի բակալավրիատի ուսումնական* նոր ծրագիրը կոչված էր ուսանողների շրջանում աստվածաբանական գիտելիքների ձեւա-

---

էր ավարտաճառի պաշտպանությամբ եւ մասնագիտական 5–6 առարկաներից ավարտական որակավորման (պետական) քննություններ հանձնելով։

վորումը եւ աստվածաբանական մշակույթի զարգացումը համակարգելուն, ինչը ենթադրում էր աստվածաբանական ժառանգության յուրացում եւ «սեփականում»։ *Արդի պահանջներին համապատասխան մակարդակ ունեցող մասնագետ-հոգեւորականների պատրաստումն անխուսափելիորեն ենթադրում էր նաեւ աստվածաբանական, եկեղեցագիտական եւ կրոնագիտական եզրերով վերլուծություն եւ մեկնաբանություն կատարելու հմտությունների ձեւավորում։*

Առաջադրվել էին նաեւ բակալավրիատի կրթական աստիճանի պարտադիր չափորոշիչները.

ա. Աստվածաշնչագիտության բնագավառում *պահանջվող մակարդակով ծանոթ լինել Աստվածաշնչի պատմությանը եւ աշխարհագրությանը, Հին եւ Նոր Կտակարանների ներածությանը, Սուրբ Գրքի մեկնողական դպրոցներին, մեկնության հիմնական մոտեցումներին։*

բ. Տեսական աստվածաբանության բնագավառում *հստակ պատկերացում ունենալ Հայ Եկեղեցու դավանաբանության եւ վարդապետության, տեսական աստվածաբանության հիմնարար գիտակարգերի վերաբերյալ, յուրացնել եւ ի հարկի կիրառել Հայ Եկեղեցու՝ դրանց իմաստավորման եւ մեկնաբանության ընդհանրական սկզբունքները։ Տիրապետել եւ կարողանալ հասարակական կյանքում արմատավորել բարոյական աստվածաբանության գլխավոր սկզբունքները, պահանջվող մակարդակով հիմնավորել դրանց կիրառման անհրաժեշտությունը։*

գ. Պատմական աստվածաբանության բնագավառում *հիմնովին յուրացնել Հայ Եկեղեցու պատմությունը եւ այդ դիտանկյունից՝ համաքրիստոնեական պատմության, քրիստոնեական Արեւելքի ու Արեւմուտքի պատմաաստվածաբանական ընթացքը, դպրոցների ձեւավորման հիմնախնդիրները եւ ժառանգորդության սկզբունքները, մասնագիտական գիտելիքներ ձեռք բերել հայ եկեղեցական մատենագրության, հայրաբանության հիմնախնդիրների, գործիքակազմի, ուղղությունների ու դրանց կիրառության վերաբերյալ։*

դ. Գործնական աստվածաբանության բնագավառում *հիմնարար գիտելիքներ ունենալ Հայ Եկեղեցու ծեսի ձեւավորման ու զարգացման, աստվածպաշտության գրքերի եւ հարակից այլ պարագաների կազմության, բովանդակության, կանոնականացման ու ժամասացության մեջ գործածման վերաբերյալ։ Հիմնարար գիտելիքներ ունենալ Հայ Եկեղեցու Խորհուրդների, Սուրբ Պատարագի բաժանումների, խնկարկության,*

Կարգերի, Մաղթանքների, տոնածիսական համակարգի ներմուծման, կիրառման, ժամերգությունների կատարման ժամանակի, պատմական զարգացման, ձեւի ու միավորների, ինչպես նաեւ դրանց ընթացիկ փոփոխությունների եւ այլնի վերաբերյալ։

ե. Հանրակրթական ոչ լեզվական դասընթացների կրթամաս. *1. հիմնովին տիրապետել հայոց հնագույն, հին, միջնադարյան, նոր եւ նորագույն շրջափուլերի պատմությանը, սկզբնաղբյուրներին եւ հիմնական ուսումնասիրություններին, ընդհանուր գծերով ներկայացնել հայ պատմագիտական մտքի զարգացումը, 2. հայ հին, նոր եւ նորագույն գրականության ու դրանց ժանրային առանձնահատկությունների իմացություն, զարգացման հիմնական ուղղությունների վերլուծություն, 3. յուրացնել համաշխարհային գրականության պատմության հիմնական օրինաչափությունները, բացատրել գրական ստեղծագործությունների դերն ու առանձնահատկությունները, քննարկել դրանց առնչվող խնդիրները, 4. ներկայացնել փիլիսոփայության առանձնահատկությունները, հայեցակարգային հիմնախնդիրները, հասկանալ ճշմարտության եւ մոլորության, գիտելիքի եւ հավատի, ռացիոնալի եւ իռացիոնալի սահմանազատման սկզբունքները, վերլուծել աստվածաբանության հետ ունեցած հարաբերությունները, 5. ընդհանուր համակարգված գիտելիքներ ունենալ կրոնի, դրա պատմական դրսեւորումների, հասարակական ու հոգեւոր կյանքում ունեցած դերակատարության մասին։ Հայ Եկեղեցու դավանական ըմբռնումների դիրքերից ներկայացնել ժամանակակից ավանդական եւ ոչ ավանդական կրոնների հավատքային հիմնարար սկզբունքներն ու պաշտամունքային առանձնահատկությունները, կարողանալ զուգահեռներ անցկացնել վարդապետական աստվածաբանության, եկեղեցաբանության եւ կրոնագիտական մտքի հիմնարար ըմբռնումների միջեւ։*

զ. Լեզվական դասընթացների կրթամաս. *1. հիմնարար գիտելիքներ ունենալ հայերենի տարբեր փուլերի, լեզվաոճական վերլուծության, լեզվական այս կամ այն միավորի ընտրության, լեզվի մշակույթի եւ հարակից այլ հիմնախնդիրների վերաբերյալ։ Կարողանալ պահանջվող մակարդակի մայրենիով հաղորդակցվել, ձեւակերպել ու ներկայացնել բանավոր եւ գրավոր տրամաբանված խոսք, 2. մասնագիտական հիմնարար գիտելիքներ ունենալ գրաբարի առանձնահատկությունների, բառապաշարային եւ քերականական իրողությունների վերաբերյալ։ Ձեռք բերել*

գրաբար բնագրերը վերլուծելու եւ աշխարհաբարի փոխադրելու հմտություններ, 3. տիրապետել ընդհանուր եւ մասնագիտական անգլերենի հիմունքներին, յուրացնել մասնագիտական բառապաշարն ու եզրերը, կարողանալ ներկայացնել մասնագիտական հիմնական հասկացությունները։ Կարողանալ հաղորդակցվել ընդհանուր եւ մասնագիտական նյութերի շուրջ, պատրաստել զեկուցումներ, վարել բանավեճեր, 4. ռուսաց լեզվի իմացություն, մասնագիտական բառապաշարի յուրացում եւ հարստացում։ Ձեռք բերված լեզվական իմացությունը կիրառել մասնագիտական եւ այլ ոլորտներում հաղորդակցության համար։ Պատրաստել զեկուցումներ, վարել քննարկումներ եւ բանավեճեր։

Է. Տիրապետել բնագրագիտական աշխատանք կատարելու գործիքակազմին, *հմտանալ աստվածաբանական բնագրերի հետազոտության մեջ, աշխատել արխիվային փաստաթղթերի, ձեռագրերի, բնագրերի եւ բառարանների հետ, պատրաստել ու ներկայացնել աստվածաբանական եւ հայագիտական նյութերով զեկուցումներ, ակնարկներ (էսսե), կուրսային եւ ավարտական (ավարտաճառ) աշխատանքներ։*

Ուսումնական լրամշակված ծրագրի պահանջների յուրացումը շրջանավարտներին թույլ կտար աստվածաբանության ոլորտում հաղորդակից դառնալ ինչպես Հայ Եկեղեցու, այնպես եւ համաքրիստոնեական ու տարածաշրջանային արժեքներին, անցյալի եւ ներկայի աստվածաբանական հիմնական ուղղություններին, ինչը կարող էր նաեւ նպաստել անհրաժեշտ հմտություններ եւ կարողություններ ձեռք բերելուն, միջհավատքային երկխոսություններ իրագործելուն։ Ճեմարանի բակալավրիատի ուսումնական ծրագրով նախատեսված գիտելիքների յուրացումը պետք է էապես նպաստեր նաեւ Հայաստանում գործող տարբեր հարանվանությունների դավանաբանական առանձնահատկությունների եւ հասարակական ուղղվածության նկատմամբ մասնագիտական մոտեցումներ դրսեւորելուն, ինչն ապագա հոգեւորականին թույլ կտար յուրացրած փաստարկումների համակարգը կիրառել դրանց գաղափարաբանության քննական վերլուծության ու արժեւորման գործում։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի հանձնարարությամբ, վերատեսչության ընդհանուր ղեկավարությամբ, ճեմարանի ամբիոնները նախապատրաստեցին նաեւ եւրոպական կրթական ընդհանուր տարածքի բարձրագույն կրթության ակադեմիական չափանիշներին համապատասխանող բակալավրիատի ուսումնական եւ ուսումնամեթոդական

աշխատանքների կարգավորմանը միտված չափորոշող մի շարք փաստաթղթեր։ Դրանք էին՝

- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարանի) բակալավրի կրթական ծրագրով ընդունելության կանոնակարգ,*
- *Ուսանողների՝ կուրսից կուրս փոխադրության, հեռացման (ազատման) եւ վերականգնման կարգ,*
- *Ուսանողների ակադեմիական շարժունության կարգ,*
- *Շրջանավարտների ամփոփիչ որակավորման կանոնակարգ,*
- *ավարտական աշխատանքի (ավարտաճառի) պատրաստման կարգ եւ գնահատման չափանիշներ։*

Վերատեսչության ղեկավարությամբ ճեմարանի ամբիոնները կազմել, մշակել եւ ուսումնական խորհրդի հաստատմանն են ներկայացրել նաեւ ճեմարանի ուսումնական եւ ուսումնամեթոդական աշխատանքների կատարելագործմանը միտված մի շարք այլ կանոնակարգեր եւս։ Դրանք են՝

- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարանի) գիտելիքների ստուգման եւ գնահատման կանոնակարգ,*
- *գնահատման սանդղակ եւ նշագրում,*
- *ակնարկի պատրաստման կարգ եւ գնահատման չափանիշներ,*
- *կուրսային աշխատանքի պատրաստման կարգ եւ գնահատման չափանիշներ,*
- *պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի սկզբունքներ,*
- *գրականության հղումների կարգ։*

Այդ եւ ուսումնական գործընթացները կարգավորող չափորոշիչ այլ կանոնակարգերը քննարկվելով ճեմարանի ուսումնական եւ գիտական խորհուրդներում՝ երաշխավորվել եւ ներկայացվել են Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատմանը։

Հայոց Հայրապետի որոշմամբ սարկավագական ձեռնադրության քննությունները հաստատվեցին բակալավրիատի ավարտական որակավորման քննություններից հետո, ուստի շարունակվեցին վերջինիս ուսումնական ծրագրի լրամշակման աշխատանքները։ Նրանում պահպանվեց բակալավրիատի ընդհանուր կրթական, լեզվագիտական եւ հա-

յագիտական առարկաների լիարժեք ծավալը։ Միաժամանակ, սարկավագական քննությունների հետ կապված, հովվական եւ աստվածաբանական մի շարք ընդհանուր առարկաներ մագիստրատուրայի ծրագրից հանվեցին եւ ներառվեցին բակալավրիատի ուսումնական ծրագրում։ Նախատեսվեց նաեւ հոգեւոր փորձառության ձեռքբերում։ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի առաջադրած պահանջներին համապատասխան՝ բակալավրիատի կրթական ծրագիրն ավարտող ուսանողների հոգեւոր ծառայության համար ուսումնական նոր ծրագրում ավելացվեց նաեւ հովվագիտական մասնագիտական առարկաների թիվը։ Բակալավրիատի ուսումնական լրամշակված ծրագրի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ գործնական հմտությունների կատարելագործման համար Ա.—է. կիսամյակներում նախատեսվեց հովվական խնամքի ու հոգեւոր ծառայության (դիակոնիա) 4-շաբաթյա փորձառություն։ Այդ նպատակին ծառայեց նաեւ նոր առարկաների («Սրբախոսություն եւ ընդհանուր քրիստոնեական հոգեւորություն», «Գործնական հոգեբանություն» եւ այլն) ներդրումը։ Ծրագրում ներառվեցին նաեւ ուսանողների կրթական եւ մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը նպաստող մի շարք նոր դասընթացներ («Աստվածաշնչի մեկնաբանության ներածություն», «Աղանդագիտություն», «Արեւմտահայերեն», «Տնտեսագիտություն», «Ինֆորմատիկա»)։

Կրթական բարեփոխումների այս փուլը եւս ունեցավ իր բնականոն արդյունքը։ Ճեմարանի 140-ամյակի նախօրեին՝ 2013 թ. ապրիլի 17-ին, ՀՀ ԿԳ նախարարը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին բակալավրիատի կրթական ծրագիրն անժամկետ իրականացնելու իրավունք վերապահեց *(լիցենզիա սերիա Ա №0075)*[4]։

Ճեմարանական կրթության երկրորդ աստիճանն իրագործվում էր մագիստրատուրայի ծրագրով, որը կոչված էր բակալավրիատի ընդհանուր

---

[4] *Ճեմարանի կրթական աստիճանների լիցենզավորման անհրաժեշտությունը թելադրված էր բարձրագույն մասնագիտական կրթության լիցենզավորման մասին ՀՀ կառավարության 2000 թ. հուլիսի 7-ի №372 որոշման մեջ փոփոխություն կատարելու եւ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) իրականացման լիցենզավորման կարգի մասին ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի №808-Ն որոշման պահանջներով։ ՀՀ կառավարության նոր որոշման պահանջներին համապատասխան՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարությամբ ՀՀ ԿԳ նախարարություն էր ներկայացվել ճեմարանի լիցենզավորման համար պահանջվող փաստաթղթերի փաթեթ։*

կրթության հենքի վրա ապահովելու աստվածաբանական խորացված եւ հիմնարար մասնագիտական պատրաստություն:

Վերատեսչության ղեկավարությամբ, նոր պայմաններին համահունչ, կազմվեց նաեւ ճեմարանի մագիստրոսական լրամշակված կրթական ծրագիրը: Այն բաղկացած էր կրթական եւ հետազոտական բաղադրիչներից, իսկ չափորոշիչ ուսուցման տեւողությունը 2 տարի էր (4 կիսամյակ): Ուսումնական տարվա համար սահմանված էր 32-շաբաթյա տեւողություն, իսկ կիսամյակային քննություններին եւ ստուգարքներին հատկացված էր 3 շաբաթ[5]: Մագիստրատուրայի լրամշակված ուսումնական ծրագրի կրթական բաղադրիչով նախատեսված էր կառուցվածքային երկու տարր՝ ընդհանուր հիմնարար եւ մասնագիտական կրթություն:

Մագիստրոսական կրթական ծրագրի ընդհանուր հիմնարար կառուցատարրի նպատակը մասնագիտական անհրաժեշտ խորացված գիտելիքներ յուրացնելու ճանապարհով բարձր որակավորման մասնագետներ պատրաստելն էր: Այն ստորաբաժանված էր երկու՝ հիմնարար կրթական («Մասնագիտական ոլորտում հաղորդակցության օտար լեզու», «Համակարգչային տեխնոլոգիաները մասնագիտության մեջ եւ գիտական հետազոտություններում», «Եբրայեցերեն», «Հոգեբանություն», «Հայ փիլիսոփայական մտքի պատմություն», «Եկեղեցական իրավունք») եւ լրացական («Ձեռագրագիտություն», «Եկեղեցական արվեստների պատմություն») դասընթացների: Ուսումնական ծրագրով նախատեսված էր նաեւ մասնագիտական ընդհանուր եւ հատուկ մասնագիտական («Հին Կտակարանի մեկնություն», «Նոր Կտակարանի մեկնություն», «Պողոս առաքյալի աստվածաբանություն», «Ընդհանուր աստվածաբանության հիմունքներ», «Վարդապետական աստվածաբանություն», «Հովվական աստվածաբանություն», «Քրիստոնեական բարոյագիտություն», «Համեմատական աստվածաբանություն», «Եկեղեցաբանություն», «Ծեսի աստվածաբանություն», «Արդի աստվածաբանական ուղղություններ», «Հայ եկեղեցական մատենագրություն», «Հայրաբանություն», «Արդի քրիստոնեական ջատագովություն», «Եկեղեցական երաժշտություն», «Հայ Եկեղեցու պատմություն», «Ընդհանուր Եկեղեցու պատմություն», «Քարոզ-

---

[5] Ուս. տարվա ընթացքում ուսանողներին տրվում էին Ս. Ծննդյան եւ Ս. Հարության ամենամյա կարճաժամկետ (1-ական շաբաթ) եւ ամառային (7 շաբաթ) արձակուրդներ: Ուսումնառության ողջ ընթացքում ուսանողները եկեղեցում ձեռք են բերում հովվական փորձառություն:

խոսություն», «Տոմարագիտություն») դասընթացների դասավանդում։ Միանգամայն հստակ էր, որ ճեմարանի մագիստրոսական ծրագրի հիմնական կառուցատարրերը մասնագիտական կրթությունը եւ մասնագիտացման դասընթացներն էին։ Ինչ վերաբերում է գիտահետազոտական կրթամասին, ապա այն եւս ներառում էր երկու կառուցատարր՝ մագիստրոսական թեզ եւ նախադիպլոմային գործնական փորձառություն («Գիտահետազոտական աշխատանքի մեթոդիկա» դասընթաց եւ գիտահետազոտական աշխատանք 2-րդ կուրսի երկու կիսամյակներում՝ 6-ական շաբաթ)։ Իսկ եզրափակիչ որակավորման համար սահմանվել էին պետական քննություններ եւ մագիստրոսական թեզի պաշտպանություն։

Նախանշված էին նաեւ մագիստրոսական կրթությանն առաջադրվող հետեւյալ խնդիրները. ա. աստվածաբանության ոլորտում պահանջվող մակարդակով տիրապետել հիմնարար գիտակարգերին (դավանաբանական աստվածաբանություն, քրիստոսաբանություն, հայրաբանություն ու հայրախոսություն, ծիսական աստվածաբանություն եւ այլն) ու դրանց մասնագիտական հասկացությունների համակարգին, բ. պատմական աստվածաբանության շարակարգությունում յուրացնել քրիստոնեական աստվածաբանության, քրիստոնեական Արեւելքի ու Արեւմուտքի աստվածաբանական դպրոցների ձեւավորման հիմնախնդիրները, գ. ի մոտո ծանոթանալ գոյություն ունեցող (եւ անցյալում գոյություն ունեցած) աստվածաբանական համակարգերին, դրանք բնորոշող վարդապետություններին, հայեցակարգերին եւ կրոնափիլիսոփայական ուսմունքներին, դ. ձեւավորել աստվածաբանական սկզբնաղբյուրների եւ բնագրերի հետ աշխատելու հմտություններ, յուրացնել դրանց վերլուծության մեթոդները, ե. անհրաժեշտ գիտելիքներ ունենալ համակարգիչների տեխնիկական, ծրագրային ապահովման վերաբերյալ, օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (համացանցային շտեմարաններ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական աշխատանքներ եւ այլն), ստեղծել անհրաժեշտ հիմքեր՝ համակարգչի օգնությամբ մասնագիտական գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար, զ. կարողանալ հաղորդակցվել օտար լեզուներով, ձեւակերպել ու ներկայացնել բանավոր եւ գրավոր տրամաբանված խոսք։

Մագիստրոսական կրթական ծրագրով, ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով, վերատեսչության ղեկավարությամբ ամբիոնները նախապատրաստեցին

նաեւ եւրոպական կրթական ընդհանուր տարածքի բարձրագույն կրթության ակադեմիական պահանջներին համապատասխանող ուսումնական գործընթացի կարգավորմանը միտված մի շարք նոր փաստաթղթեր։ Դրանք էին՝

- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարանի) մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ,*
- *Մագիստրոսական թեզի պատրաստման կարգ եւ գնահատման չափանիշներ,*
- *Մագիստրոսական ակնարկի պատրաստման կարգ եւ գնահատման չափանիշներ։*

Առարկայական ուսումնական ծրագրերի ամբողջական կատարումը եւ ճեմարանական ուսանողների կողմից ծրագրային նյութի յուրացումն ապահովելու նպատակով, տեսչության վերահսկողությամբ ու մասնակցությամբ, ուս. տարվա ընթացքում ամբիոնները պարբերաբար իրականացնում էին դասալսումներ եւ դրանց արդյունքների քննարկումներ։ *Նախապատրաստական մեծ աշխատանք կատարվեց նաեւ խմբային գործնական (սեմինար) պարապմունքների ծրագրերի, հանձնարարվող պարտադիր եւ լրացուցիչ գրականության ցանկ հաստատելու, օտարների՝ Հայ Եկեղեցու պատմության եւ աստվածաբանության վերաբերյալ ոչ ճիշտ եւ նենգափոխված պատկերացումների դեմ պատմական ճշմարտության վեր հանմամբ պայքարելու ուղղությամբ։*

Բուհական կրթության նոր պահանջներին լիովին համապատասխանող Գեւորգյան հոգեւոր ճեմարանի մագիստրատուրայի ուսումնական եւ կրթական ծրագրերը նույնպես գտնվեցին ՀՀ ԿԳ նախարարության մասնագիտական հանձնաժողովի փորձաքննության եւ մշտադիտարկման ոլորտում։ Շուրջ մեկ տարի հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում էին կրթության միջազգային չափորոշիչներին համապատասխանող ճեմարանի մագիստրատուրայի ուսումնական ծրագիրը եւ զուգահեռաբար անցկացնում դասալսումներ։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնարկած՝ ճեմարանի կրթական բարեփոխումների այս փուլի հանգրվաններից մեկն էլ այն էր, որ հոգեւոր հաստատության 140-ամյակի նախօրեին՝ 2013 թ. ապրիլի 17-ին, ՀՀ ԿԳ նախարարը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին իրավունք վերապահեց անժամկետ իրականացնելու մագիստրատուրայի կրթական ծրագիր *(լիցենզիա սերիա Ա №0061)։*

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կրթական բարեփոխումները թեւակոխեցին նոր փուլ, որը կառույցի կյանքում առանձնակի նշանավորվեց. հոգեւոր կրթական հաստատությանն իրավունք վերապահվեց անժամկետ իրականացնելու բակալավրիատի եւ մագիստրատուրայի կրթական ծրագրեր: Բոլոր հիմքերն ստեղծվեցին նաեւ ճեմարանում հետբուհական կրթություն իրականացնելու եւ այդ ոլորտում նույնպես եւրոպական միասնական կրթական տարածքում ներգրավվելու համար:

Կազմակերպչական զուգընթաց նախաձեռնություններով աչքի ընկավ նաեւ Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսչությունը, որը Գարեգին Բ. Հայրապետի արտոնությամբ արդյունավետ քայլեր ձեռնարկեց ճեմարանի միջազգային համագործակցության ծավալման ուղղությամբ:

2011 թ. սեպտեմբերի 25-ին, ի նպաստ միասնական գիտակրթական տարածքի ընդլայնման, կնքվեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սանկտ Պետերբուրգի հոգեւոր ուղղափառ ակադեմիայի աստվածաբանական կրթական, հումանիտար գիտելիքների ու հոգեւոր լուսավորության բնագավառների համագործակցության համաձայնագիր, *որով նախատեսվում էր նաեւ գիտահետազոտական եւ տեղեկատվական-հրատարակչական ծրագրերի եւ նախագծերի իրականացում:* 2013 թ. մայիսի 16-ին պայմանագիր կնքվեց նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ու Գեւորգյան ճեմարանի միջեւ, *որի առարկան աստվածաբանական կրթական, հումանիտար գիտելիքների եւ հոգեւոր լուսավորության բնագավառներում համագործակցությունն էր, իսկ նպատակը՝ կողմերի ուսումնական, գիտական, կրթական եւ տեղեկատվական-հրատարակչական գործունեության ու ջանքերի միավորումը՝ ի նպաստ հումանիտար գիտակրթական միասնական տարածքի ընդլայնման:* Իսկ 2017 թ. հունիսի 17-ին համագործակցության համաձայնագիր կնքվեց նաեւ ԱՄՆ-ի Ս. Վլադիմիրի ուղղափառ աստվածաբանական ճեմարանի ու Գեւորգյան հոգեւոր ճեմարանի միջեւ, *որով նախատեսվում էր իրականացնել նաեւ ակադեմիական անձնակազմի եւ ուսանողների փոխանակման ծրագրեր:*

2013 թ. նախապատրաստական աշխատանքներ էին ծավալվել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Կազանի հոգեւոր ճեմարանի, *իսկ 2015 թ. նաեւ* Կրակովի Հովհաննես-Պողոս Բ.-ի անվան քահանայապետական համալսարանի հետ գիտահետազոտական եւ ուսանողների փոխանակման համաձայնագրեր կնքելու ուղղությամբ:

Վերատեսչությունը գնահատելի գործունեություն է ծավալել նաեւ ճեմարանը պահանջվող դասագրքերով, ուսումնական եւ ուսումնամեթոդական ձեռնարկներով ապահովելու[6], ինչպես նաեւ Գեւորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 200-ամյակը եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 140-ամյա հոբելյանը պատշաճ նշելու ուղղությամբ[7]։ Կառույցի՝ դրվատանքի արժանի նախաձեռնություններից են նաեւ գրաբարի եւ թարգմանական արվեստի մեջ հմտանալը, ինչպես նաեւ հայ եկեղեցական մատենագրության դեռեւս անհայտ էջերը հանրայնացնելու նպատակով ճեմարանում ուսանողական «Սերմնացան» մատենաշարի հիմնադրումը[8]։

---

[6] *Վերատեսչության նախաձեռնությամբ 2013 թ. ընդարձակ ծանոթագրություններով վերահրատարակվել են Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» (հտ. Ա., Հին Եկեղեցին) եւ Վ. Ներսիսյանի «Հայ հին գրականության պատմություն» դասագրքերը։ 2014 թ. լույս են տեսել Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցին» եւ Ս. Արեւշատյանի, Կ. Միրումյանի «Հայ միջնադարյան փիլիսոփայություն» (մաս Ա., Հին շրջան եւ վաղ միջնադար) ուսումնաօժանդակ ձեռնարկները։ 2015 թ. հրատարակվել է Դավիթ Գյուրջինյանի «Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք» ուսումնաօժանդակ ձեռնարկը։ Թարգմանաբար լույս է տեսել նաեւ Գեորգիուս Ֆիլիասի «Եկեղեցական հռետորություն եւ ժամանակակից աստվածաբանական խոսքի փոխանցում» աշխատությունը։ 2015 թ. տպագրվել են «Կենսաէթիկայի հիմնահարցեր» (կազմ.՝ Հրաչ սրկ. Սարգիսյան, Վարդան սրկ. Ասլանյան), 2016 թ.՝ Արշակ Տեր-Միքելյանի «Ուսումն Ս. Գրոց (Ներածութիւն)», 2018 թ.՝ Երեմիա Ֆունդասի «Հին Կտակարան. բովանդակությունը եւ աստվածաբանությունը» թարգմանական ուսումնաօժանդակ ձեռնարկները։ «Ծիսական աստվածաբանություն» դասընթացի համար որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ է ծառայել նաեւ 2015 թ. հրատարակված «Եկեղեցու հայրերը եւ վարդապետները Սուրբ Մկրտության խորհրդի մասին» երկհատորյակը, իսկ «Աստվածաշնչի մեկնություն» դասընթացի համար՝ Սուրբ Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն մարգարեութեանն Երեմիայ» աշխատությունը։*

[7] *Այդ բնագավառում արժանահիշատակ են ճեմարանի բազմավաստակ դասախոս, պրոֆ. Պ. Հովհաննիսյանի աշխատասիրությամբ եւ ծանոթագրություններով հրատարակված* ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ, *Գեւորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց (Դ. հրատ.), Ս. Էջմիածին, 2014 եւ* ՎԱՀՐԱՄ ԵՊՍ. ՄԱՆԿՈՒՆԻ, *Գէորգ Դ. եւ իւր ժամանակը (1814–1882), Ս. Էջմիածին, 2015 արժեքավոր աշխատությունները։ Ճեմարանի հիմնադրման 140-ամյակին նվիրված համալիր միջոցառումների շրջանակում, պրոֆ. Պ. Հովհաննիսյանի ընդհանուր ղեկավարությամբ, աշխատանքներ են տարվել նաեւ «Նշանավոր ճեմարանականներ» մատենաշարի Գ. պրակը եւ «Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչներ» ժողովածուն հրատարակության պատրաստելու համար։ Տպագրության են նախապատրաստվել նաեւ պրոֆ. Կ. Միրումյանի «Հայոց փիլիսոփայություն», գիրք Բ. (Թ.–Ժե. դարերի փիլիսոփայությունը), «Հայ եկեղեցական մատենագրություն» (փիլիսոփայական գիտ. դոկտոր Հ. Քյոսեյան), Ա.–Բ., ինչպես նաեւ «Հայ նոր գրականության քրեստոմատիա» (պրոֆ. Վ. Գրիգորյան), Ա.–Բ. հատորները։*

[8] *Տե՛ս «Սերմնացան» մատենաշար, Ա., Հակոբ պատրիարք Նալյան, Հոգեւոր զրույցներ, Ս. Էջմիածին, 2013, Բ., Գարեգին սրկ. Յովսէփեան, Եկեղեցին եւ աղքատների խնամատարութեան գործը, Ս. Էջմիածին, 2017, Գ., Զգոն ծ. վրդ. Տեր-Հակոբյան, Սեր եւ ամուսնություն. ուղեցույց ընտանեկան երջանկության (փոխադր.՝ Գ. լսարանի սան Գեւորգ դպիր Կարապետյան, խմբ.՝ Գարեգին վրդ. Համբարձումյան), Ս. Էջմիածին, 2018։*

Ճեմարանն իր գործուն մասնակցությունն է բերել նաեւ ՀՀ ԳԱԱ՝ 2013 թ. հոկտեմբերի 17–19-ը Երեւանում կազմակերպած հայագիտական միջազգային երկրորդ համաժողովին[9], ինչպես նաեւ «Արշալույս քրիստոնեության հայոց» միջազգային գիտաժողովին[10]։ 2014 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կազմակերպվել եւ պատշաճ մակարդակով անցկացվել է նաեւ ճեմարանի 140-ամյակին նվիրված միջազգային առաջին գիտաժողովը։

2014 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ նշվեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակը։ Այդ կապակցությամբ Վեհափառ Հայրապետը, գնահատելով «հայկական ոգեկանության դարբնոց» ճեմարանի առաքելությունը, հավաստեց. «Արդարեւ, 140 տարվա ընթացքում Գեւորգյան հոգեւոր ճեմարանը հասակ առավ ու ամրացավ եւ մշտապես վառ պահեց ուղղափառ հավատքի եւ ազգային դպրության լույսը, կրթեց նախանձախնդրության ու ծառայասիրության բարեբեր ոգին.... Մեր ժողովրդին ճեմարանը պարգեւեց ականավոր գիտնականներ, մշակույթի մեծանուն գործիչներ, երախտարժան հոգեւոր առաջնորդներ։ Սերունդները հաջորդեցին միմյանց եւ իրենց անունները դարերին ի պահ տալով՝ անցան մշտնջենություն, իսկ նրանց գործը շարունակվեց, շարունակվում է եւ կշարունակվի միշտ *(ընդգծումը.— Ա. Ք.)»*[11]։

Հոբելյանական այդ հանդիսավանում մեկ անգամ եւս կարեւորելով ճեմարանի կրթական բարեփոխումների ընթացքը՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանի տեսչությանը, հոգեւոր դաստիարակներին ու հաստատության դասախոսական համակազմին։ Եւ կարեւորելով ուսանողների հոգեւոր դաստիարակության ու զարգացման գործում դասախոսների նվիրյալ գործունեությունը՝ նշեց. «Տիրոջ զորակցությունն ենք հայցում ճեմարանում դասավանդող պատվարժան դասախոս մանկավարժներին, որ ամենայն ջանադրությամբ, մեր Եկեղեցու հոգեւոր հզորության, վաղվա լուսավոր օրվա տեսիլքով մասնակիցն են հոգեւոր սպասավորների պատրաստման գործին։ Մաղ-

---

[9] *Տե՛ս «Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. հայագիտությունը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Զեկուցումների ժողովածու, Երեւան, 2014, էջ 552–554, 564–567, 571–575։*

[10] *Տե՛ս «Արշալույս քրիստոնեության հայոց» (միջազգային գիտաժողովի նյութեր), Երեւան, 2017, էջ 77–88, 95–108։*

[11] *«Էջմիածին», 2014, Ժ., էջ 96։*

թում ենք բարի ծառայություն եւ ձեռքբերումներ՝ ի նպաստ ճեմարանի առաքելության առավել ու առավել արդյունավորման»[12]։ Այդ շարակարգում պետք է դիտարկել նաեւ 2014 թ. ճեմարանի ուսումնական տարեմուտի հանդեսին Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված հաստատության մանկավարժներին. «Ճեմարանի առաքելության շարունակողներն այսօր դուք եք, սիրելի՛ դասախոս մանկավարժներ։ Դուք մասնակիցն եք Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորների, վաղվա հոգեւոր առաջնորդների, հայ մտավորականների կերտման գործին՝ ձեր հոգում կրելով վաղվա լուսավոր օրվա տեսիլքն այս հաստատության, ինչպես եւ մեր Եկեղեցու, որ աստվածօրհնյալ ուղիներում պահպանի եւ առաջնորդի մեր ժողովրդին։ Մաղթում ենք, որ դուք այս հաստատության դերի ու կարեւորության նույն գիտակցությամբ, նրա առաքելության հանդեպ նույն հավատով իրականացնեք ձեր աշխատանքները, որպեսզի ձեր նվիրյալ ջանքերը բազում պտուղներ բերեն եկեղեցական եւ ազգային մեր անդաստանում, Ավետարանի խոսքի համաձայն, մեկի դիմաց երեսուն, մեկի դիմաց վաթսուն եւ մեկի դիմաց հարյուր (Մարկ. Դ. 8)»[13]։

Ճեմարանականների նկատմամբ Հայոց Կաթողիկոսի հայրական վերաբերմունքի մեկ այլ վկայությունն այն իրողությունն է, որ միայն 2000–2014 թթ. ընթացքում «Վեհափառ Հայրապետի անմիջական տնօրինությամբ եւ օրհնությամբ Մայր Աթոռի չորս տասնյակից ավելի միաբան սովորել եւ շարունակում է ուսանել արտասահմանյան տարբեր երկրների հեղինակավոր համալսարաններում՝ ստանալով աստվածաբանական համապատասխան կրթություն։ Վերջին տարիներին Նորին Սրբության օրհնությամբ մի շարք հոգեւորականներ ուսանում են նաեւ հայաստանյան բուհերում՝ խորացնելով իրենց գիտելիքները»[14]։ Վեհափառ Հայրապետն այդ մոտեցումը հիմնավորել է նրանով, որ միջեկեղեցական հարաբերություններում էկումենիզմի ոգով հատկանշվող ժամանակակից մեր կյանքը պահանջում է ապահովել համապատասխան իմացությամբ հոգեւորականների պատրաստությունը։ Այս նպատակով մեծ թվով երիտասարդ հոգեւորականների հնարավորություն ընձեռվեց կրթությունը շարունակելու արտասահմանյան տարբեր աստվածաբանական կրթական հաստատություններում[15]։

---

[12] Անդ, էջ 97։
[13] «Էջմիածին», 2014, Ժ., էջ 94–95։
[14] «Էջմիածին», 2014, ԺԱ., էջ 51։
[15] Տե՛ս «Էջմիածին», 2008, Ե., էջ 12։

Այս փուլում ճեմարանական կրթության բարեփոխումների մասին հավաստվում է, որ այդ գործընթացի արդյունքում հոգեւոր հաստատությունը «...դարձել է Հայ Եկեղեցու գիտակից ու պատրաստակամ սպասաւորներ պատրաստող օջախ՝ չկորցնելով, սակայն, համահայկական մշակութային կենտրոնի իր դերն ու նշանակութիւնը»[16]։ Միաժամանակ մատնանշվում է նաեւ, որ «...հայ միջնադարեան գիտական-աստուածաբանական մտասեւեռման մէջ Մայր դպրոցը կամ Մայր դպրեվանքն էր իր սաներով շէնացնում գիտափիլիսոփայական ու կրթական միտքը։ Հայոց Alma Mater-*ները միշտ դէմքով ուղղուած էին դէպի ներկայի ու ապագայի իրագործումներ՝ իրենց իմաստասիրական-աստուածաբանական փնտրտուքի ճանապարհը հարթելով աւանդութեան ու փորձի ապահով եզրագծերով»։ Իրավամբ արձանագրվում է, որ «...այսօր, ահա, այդ Աւանդութեան ջահը կրկին Գէորգեան հոգեւոր ճեմարանի ձեռքին է՝ իբրեւ Հայոց հողի վրայ նոր ժամանակներում հաստատուած ամենահին ու ամենատեւական բարձրագոյն ուսումնական հաստատութիւն։ Մեր* Alma Mater-*ն արդէն 140 տարի իր աշալուրջ հայեացքի ներքոյ, ասես մի անդրի, հսկում է աստուածաբանական-հայագիտական երթի ելած իր սաներին։ Մենք ամենքս նոր լոյս ու ջերմութիւն ենք մաղթում Նրա ձեռքին հուրհրատող գիտութեան ջահին»[17]։*

Ճեմարանի կրթական բարեփոխումների հոլովույթում նաեւ փաստվում է, որ «...անգնահատելի են Վեհափառ Հայրապետի ջանքերը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գործունեության ուղղությամբ. նա անձամբ ղեկավարում է ճեմարանի խնդիրների առավել արդյունավետ լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները, մասնակցում մանկավարժական ժողովներին։ Հայոց Հայրապետի ցուցումով է, որ վերականգնվեցին ավարտաճառերի պաշտպանությունը եւ սարկավագության ձեռնադրության քննությունները։ Նա ջանք չի խնայում, որ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը դառնա գիտաուսումնական կարեւոր կենտրոն եւ համալրվի անհրաժեշտ գրականությամբ, համակարգչային նոր սարքավորումնե-

---

[16] *«Էջմիածին», 2014, Ժ., էջ 5։ Առաջնորդող հոդվածում Շահե վրդ. Անանյանը լիահույս է նաեւ, որ կրթական բարեփոխումների արդյունքում «...ճեմարանի փառապանծ սերունդներից ու սաներից ստացած Աւանդութիւնն սպասում է նոր իրագործումների՝ մանաւանդ հայ աստուածաբանական մտքի անդաստանում։ Այն բացառիկ է իր ազգային խառնուածքով, բայց մեկուսացած չէ համաքրիստոնէական արժէքներին նոր որակներ պարգեւելու առումով». անդ, էջ 6։*

[17] *Անդ։*

րով, որոնք կնպաստեն սաների գիտելիքների հարստացմանն ու մտահորիզոնի ընդլայնմանը»[18]*։*

Հոբելյանական միջոցառումների ավարտից հետո Նորին Սրբության հանձնարարությամբ վերատեսչությունը ձեռնամուխ եղավ մագիստրոսական կրթական ծրագրերի հետագա կատարելագործման աշխատանքների իրագործմանը։ Այդպես ճեմարանի տեսչությունն ու ամբիոնները հերթական անգամ զարկ տվեցին մագիստրատուրայի ուսումնական ծրագրի լրամշակման աշխատանքներին։

Ուսումնական լրամշակված ծրագրով առաջնահերթություն համարվեց *մասնագիտական խորացված կրթությունը։ Նախապատրաստվեցին եւ համակողմանի քննարկումներից հետո Վեհափառ Հայրապետի հաստատմանը ներկայացվեցին ճեմարանի մագիստրատուրայի «Աստվածաշնչագիտություն», «Դավանաբանություն», «Պատմական աստվածաբանություն» եւ «Գործնական աստվածաբանություն» մասնագիտությունների ուսումնական ծրագրերը։ Այդպիսով՝ ճեմարանը Հայ Եկեղեցու նվիրյալ սպասավորներ պատրաստող համահայկական աստվածաբանական կենտրոն դարձնելու, ինչպես նաեւ բարձրագույն կրթությամբ նոր սերնդի հոգեւորականներ պատրաստելու ծրագրերը կյանքի կոչելու միտումով,* մագիստրատուրան անցում կատարեց աստվածաբանական ու եկեղեցագիտական մասնագիտական խորացված ուսուցման։

Մագիստրատուրայի լրամշակված ծրագրում մասնագիտական ընդհանուր դասընթացները պահպանվել էին նախորդ ուսումնական ծրագրից. ընդհանուր եւ մասնագիտական դասընթացները կազմվել էին կրթական նախորդ ծրագրի ընդհանուր դասընթացների տրոհումներով, ինչը թույլ էր տվել ավելի հստակ եւ ամբողջական արտահայտել նրանց բովանդակությունն ու առավել մերձեցնել աստվածաբանական ընդունված մոտեցումներին[19]*։ Մագիստրոսական լրամշակված ծրագրում ներառվեցին նաեւ նախկինում բացակայող «Հայագիտական կրթամասի» մասնագի-*

---

[18] *«Էջմիածին», 2014, ԺԱ., էջ 50։*

[19] *Լրամշակված ուսումնական ծրագրում նախկինում «Հայ Եկեղեցու պատմություն»* ընդհանուր դասընթացը (128 ժամ) *տրոհվեց մի քանի նոր դասընթացների՝ «Հայ Եկեղեցու պատմության աղբյուրագիտություն», «Հայ եկեղեցական մատենագիրներ եւ բնագրեր», «Հայ աստվածաբաններ եւ աստվածաբանական բնագրեր», «Հայ Եկեղեցու երրորդաբանությունը եւ քրիստոսաբանությունը», «Հայ Եկեղեցու էկումենիկ եւ միջկրոնական երկխոսությունները», «Հայ Եկեղեցու պատմության հիմնահարցեր»՝ յուրաքանչյուրը 64 ժամով։*

տական մի շարք նոր դասընթացներ[20]։ Եւրոպական կրթական չափորոշիչներին համահունչ՝ բավարար ժամաքանակով արդյունավետ դասավանդում էր նախատեսվել նաեւ լեզվական դասընթացների համար[21]։

Մագիստրոսական ուսումնական եւ կրթական նոր ծրագրերին համահունչ՝ սահմանվեցին նաեւ ուսանողներին առաջադրվող հետեւյալ հիմնական պահանջները.

ա. Աստվածաշնչագիտության բնագավառում *պահանջվող մակարդակով քաջածանոթ լինել Աստվածաշնչի մեկնողական եւ մեկնաբանական դպրոցներին, տիրապետել մեկնության հիմնական մոտեցումներին, իրականացնել բնագրագիտական, բանասիրական եւ աստվածաբանական մեկնողական աշխատանք.*

բ. Աստվածաբանության բնագավառում *կարողանալ հիմնավորել քրիստոնեության աստվածային հայտնության բացառիկությունը, Հայ Եկեղեցու դավանաբանության եւ վարդապետության դիրքերից ներկայացնել քրիստոնեական ճշմարտությունները, ուսումնասիրել ու քննաբար վերլուծել քրիստոնեության տեղի եւ դերի վերաբերյալ կրոնագիտական արդի հիմնադրույթները։ Կարողանալ քրիստոնեության աստվածային հայտնության բացառիկությունը մեկնաբանել այլ կրոնների, փիլիսոփայական եւ մշակութային երեւույթների շարակարգում, յուրացնել ջատագովության գործիքակազմը, տիրապետել աստվածաբանական փաստարկման սկզբունքներին.*

գ. Ջատագովական աստվածաբանության բնագավառում *կարողանալ քրիստոնեական իրողությունները հստակ սահմանազատել կրոնական այլ երեւույթներից, կարողանալ քրիստոնեական հայտնութենական տարածքում քննաբար ներկայացնել կրոնական տարբեր երեւույթները, պատկերացում ունենալ պարակրոնական համակարգերի մասին եւ կարողանալ հիմնավորել Հայ Եկեղեցու վերաբերմունքը դրանց նկատմամբ.*

---

[20] Ուսումնական լրամշակված ծրագրերում հայագիտական կրթության շրջանակում նախատեսվեցին «Հայկական գաղթօջախների եւ Սփյուռքի պատմություն», «Հայ կրթական կենտրոններ», «Միջնադարյան Հայաստանի դպրոցներն ու վարդապետարանները» եւ այլ դասընթաց-մոդուլներ՝ յուրաքանչյուրը 64 ժամով։ Նույնը պետք է ասել նաեւ մագիստրոսական ուսումնական ծրագրերում ավելացված «Գրաբար բնագրեր եւ սկզբնաղբյուրներ» մասնագիտական ընդհանուր եւ ընտրովի դասընթացի վերաբերյալ։

[21] 128 ժամով նախատեսված էր «Օտար (անգլերեն/ֆրանսերեն/գերմաներեն) լեզուների» դասավանդում, 192 ժամ պարտադիր եւ 128 ժամ ընտրովի ժամաքանակով՝ «Դասական (եբրայեցերեն, հին հունարեն, լատիներեն, ասորերեն) լեզուներ», եւ 192 ժամ՝ «Վրացերեն» (ընտրովի)։

դ. Ծիսական աստվածաբանության բնագավառում *հիմնարար գիտելիքներ ունենալ Հայ Եկեղեցու ծեսի ձեւավորման ու զարգացման, Ս. Պատարագի, հայ եկեղեցական հայրերի եւ ծիսական հանգանակների երրորդաբանության, Պատարագամատույցի, Առաջադրության, Վերակոչման, Հոգեգալստի ընթերցումների եւ շարականների վերաբերյալ։ Յուրացնել եւ կարողանալ մեկնաբանել Պատարագամատույցի աղոթքների քրիստոսաբանությունը, Սուրբ Աստվածածնի տոների եւ դրանց շարականների մարեմաբանությունը, Մեծ պահքի կիրակիների շարականների, Ապաշխարության եւ խոստովանության կարգի մարդաբանական նկարագիրը։ Ներկայացնել Հանգստյան եւ Խաղաղական ժամերգությունների վախճանաբանական, Սուրբ Ծննդյան եւ Սուրբ Հարության ճրագալույցների ընթերցումների, Ճաշոցի հատուկ ընթերցումների (թուղթ, քարոզ, աղոթք) եւ Պսակի խորհրդի փրկագործական նկարագիրը։ Մեկնաբանել Մկրտության եւ Զեռնադրության ծիսակարգերի եկեղեցաբանական նկարագիրը.*

ե. Հոգեւոր գործնական կյանքի բնագավառում *մշակել քրիստոնեական ամբողջական աշխարհայացք։ Հիմնովին տիրապետել Հայ Եկեղեցու դավանաբանության, հոգեւոր կյանքի եւ Ավանդության սկզբունքներին, կարողանալ հավատքի վերաբերյալ յուրացրած գիտելիքները կիրառել արդիական տարբեր հիմնահարցերի լուծման գործում, միջեկեղեցական հարաբերություններում կարողանալ մեկնաբանել Հայ Եկեղեցու դավանաբանական ճշմարտությունները, փաստարկված ժխտել Հայ Եկեղեցու դավանական էությունը նենգափոխող բոլոր մոտեցումները։ Փիլիսոփայական, պատմական եւ ընդհանուր մշակութային համապատկերում տիրապետել քրիստոնեական հայտնութենական ճշմարտությունների վերլուծության սկզբունքներին։ Հիմնարար պատկերացումներ ունենալ կրոնական կյանքի էության, տեսակների եւ դասակարգման մոտեցումների, «սրբություն» հասկացության, ինչպես նաեւ մարդկության պատմության մեջ կրոնական փորձի մասին, կարողանալ կրոնական (այդ թվում՝ խորհրդապաշտական) փորձը գնահատել ճգնակեցության վերաբերյալ Հայ Եկեղեցու ըմբռնման դիրքերից։ Հստակ պատկերացում ունենալ հավատքի եւ բանականության փոխհարաբերության, հավատի եւ անհավատության վերաբերյալ.*

զ. Հոգեւոր-հասարակական գործունեության բնագավառում *հմտություններ ձեռք բերել համաքրիստոնեական եւ Հայ Եկեղեցու դավա-*

նաբանական սկզբունքները պաշտպանելու եւ հիմնավորելու գործում, կարողանալ վերլուծել քրիստոնեական հավատքի հիմնադրույթների նկատմամբ քննադատական մոտեցումները, ջատագովական փաստարկման համակարգն օգտագործել քրիստոնեության արդի քննադատությունների դեմ։ Հասկանալ աստվածային հայտնության տեղը մարդկության, փիլիսոփայական մտքի եւ կրոնական պատկերացումների պատմության մեջ, վերլուծել գիտական ժամանակակից տեսությունները, պատկերացում ունենալ գիտական արդի նվաճումների եւ զարգացման հեռանկարների վերաբերյալ, կարողանալ դրանք օգտագործել ջատագովական նպատակներով.

Է. Գիտահետազոտական աշխատանքի բնագավառում *յուրացնել բնագրագիտական աշխատանք կատարելու մեթոդաբանությունը, հմտանալ աստվածաբանական բնագրերի հետազոտության մեջ, արագ կողմնորոշվել եւ աշխատել արխիվային փաստաթղթերի, ձեռագրերի, բնագրերի ու բառարանների հետ, պատրաստել եւ ներկայացնել աստվածաբանական բովանդակություն ունեցող զեկուցումներ, ակնարկներ ու մագիստրոսական թեզ։*

Այդ ընթացքում վերատեսչության ընդհանուր ղեկավարությամբ ամբիոնների կազմակերպչական աշխատանքների անբաժան մասն է համարվել նաեւ ճեմարանի հաստիքացանկով նախատեսված պաշտոնների աշխատանքային նկարագրություն-կանոնակարգերի մշակումը։ Պատրաստվել, խմբագրվել եւ ճեմարանի ուսումնամեթոդական խորհրդին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսչությանն են ներկայացվել հետեւյալ կանոնակարգերը՝

- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարան) ուսումնական աշխատանքների գծով փոխտեսչի աշխատանքային նկարագիր (կանոնակարգ),*
- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դաստիարակության գծով փոխտեսչի աշխատանքային նկարագիր (կանոնակարգ),*
- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գիտական քարտուղարի աշխատանքային նկարագիր (կանոնակարգ),*
- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ամբիոնի գործավար-օգնականի աշխատանքային նկարագիր (կանոնակարգ),*

- *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գործավար-քարտուղարի կանոնակարգ (աշխատանքային նկարագիր)։*

Այդ ամենով ճեմարանի երկաստիճան կրթության շարունակական կատարելագործման արդյունքում Գարեգին Բ. Հայրապետի գլխավորությամբ նախապատրաստվեցին նաեւ հաստատությունում իրականացնելու բոլոր հիմքերը մասնագիտական հետբուհական կրթության, *որը բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի եւ հայցորդի ծրագրով իրականացվող ուսուցումն էր*[22]։

Այդպես Գեւորգյան հոգեւոր ճեմարանում զարկ տրվեց Հայաստանի Հանրապետությունում սահմանված պետական ուսումնական չափորոշիչներին համահունչ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ նախապատրաստելու գործընթացին։

Խնդիր առաջադրվեց մշակել ճեմարանում հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ հիմնարար այն սկզբունքները, որոնց միջոցով հնարավոր կլիներ սահմանել կրթական այդ աստիճանի համակարգային բնութագրիչները, կրթական ծրագրի իրականացման հիմքերը, ուսուցման որակի վերահսկողությունը, ինչպես նաեւ եւրոպական եւ արտասահմանյան բուհերի կրթական չափորոշիչների հետ համեմատելիության հնարավորությունները։

Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով մասնագիտական հոգեւոր կրթության առանձնահատկությունները՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ մշակվեցին ճեմարանի հետբուհական մասնագիտական կրթության չափորոշիչները։ Դրանք բովանդակում էին կրթական հիմնական ծրագրի ընդհանուր պահանջները, պարտադիր նվազագույնի շեմը, ծրագրի իրականացման պայմանները, հետբուհական մասնագիտական կրթության ուսուցման կազմակերպման ժամկետները, շրջանավարտների պատրաստվածության մակարդակի եւ ամփոփիչ որակավորման ձեւերը։

---

[22] *Տես «ՀՀ օրենքը բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդվ. 3։*

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում հետբուհական մասնագիտական կրթությունը պետք է իրականացվեր Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատած «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարան) ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուցման կարգով»։ Նրանում սահմանված «Աստվածաբանություն» մասնագիտության ասպիրանտական կրթության չափորոշիչները լիովին համահունչ էին ՀՀ կառավարության 2016 թ. փետրվարի 25-ի №238-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուցման, դոկտորանտուրայի եւ հայցորդության ձեւակերպման» կարգին, ինչպես նաեւ եւրոպական միասնական կրթական տարածքի համար հաստատված պահանջներին։ Մայր Աթոռում մշակված կարգի համաձայն՝ ճեմարանում հետբուհական մասնագիտական կրթություն իրագործելու հիմնական նպատակը բարձր որակավորման մասնագետներ պատրաստելու միջոցով աստվածաբանության զարգացումն էր, որը նաեւ կարող էր դառնալ հիմք՝ ճեմարանը աստվածաբանական, գիտակրթական եւ հետազոտական կենտրոնի վերածելու գործում: *Առկա ուսուցման համար ծրագրի յուրացման չափորոշիչ ժամանակը 3 տարի էր։*

Հաստատված կարգի համաձայն՝ ճեմարանի ասպիրանտուրայում ընդունելությունը պետք է կատարվեր մրցութային կարգով։ Համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում մրցույթին կարող էին մասնակցել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցողները[23]։ Ճեմարանի ասպիրանտուրայի ընդունելությունը սահմանված ժամանակահատվածում պետք է իրականացնեին Ամենայն Հայոց Հայրապետի հաստատած ընդունող եւ մասնագիտական հանձնաժողովները[24]։ Ճեմարանում ասպիրանտական ուսուցումն անվ-

---

[23] *Ընդունելության մրցույթին մասնակցելու պարտադիր պայման էր հաստատված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի կամ առնվազն տպագրական 20 էջի ծավալով գիտական ռեֆերատի առկայությունը։ Գրախոսվող գիտական ամսագրերում դիմորդի հրատարակած գիտական հոդվածը եւ/կամ հոդվածներն ընդունելի էին համարվում ըստ հաստատված ցուցակի, իսկ գիտական ռեֆերատը՝ միայն մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի առկայության դեպքում։*

[24] *Ասպիրանտուրայի ընդունելության հայտարարությունը պետք է փակցվեր ճեմարանի կողմից նախատեսված վայրում եւ տեղադրվեր հաստատության պաշտոնական կայքէջում։ Նրանում մասնագիտական քննությունն սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ պետք է տեղադրվեր նաեւ քննական հարցաշարը, իսկ յոթ աշխատանքային օր առաջ՝ մասնագիտական քննության անցկացման օրը, տեղը, ժամը եւ ընթացակարգային*

ճար է, իսկ ընդունելությունն իրականացվում է դիմորդի մրցութային ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա։ Ճեմարանի ընդունող հանձնաժողովը թեկնածուին մասնագիտական քննությանը մասնակցելու իրավունք պետք է վերապահեր միայն «Օտար լեզու» եւ «Ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաներից պահանջվող միավորը հավաստող վկայականի եւ (կամ) տեղեկանքի առկայության դեպքում։ Մասնագիտական քննությունը գնահատվում է 20 (քսան) միավորանոց սանդղակով։ Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդն ստացել է առնվազն 13 (տասներեք) միավոր։ Դիմորդի գիտելիքները գնահատվում են հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի նշանակած գնահատականի միջին թվաբանականով։ Սահմանված էին նաեւ մասնագիտական քննության բողոքարկման եւ ասպիրանտների հրամանագրման ընթացակարգերը, ինչպես նաեւ դիմորդների հավասար գնահատականների դեպքում՝ հաշվի առնվող հաջորդական ցուցանիշները։

Ըստ ճեմարանի ասպիրանտական ուսուցման կարգի՝ հրամանագրումից հետո ասպիրանտը պետք է ունենար հաստատության գիտական խորհրդի հաստատած աշխատանքային ծրագիր, գիտական ղեկավար եւ տարեկան առնվազն 36 ժամ գիտամանկավարժական ծանրաբեռնվածություն։ Աշխատանքային ծրագրով նախատեսված շրջանում ամբիոնը եւ գիտական խորհուրդը պարբերաբար պետք է լսեին եւ քննարկեին ասպիրանտների ու նրանց գիտական ղեկավարների հաշվետվությունը, իսկ տարեկան մեկ անգամ ասպիրանտը պետք է որակավորվեր ամբիոնի, ապա ճեմարանի գիտական խորհրդի կողմից։ Որակավորումը չանցած ասպիրանտը հրամանով պետք է ազատվեր ասպիրանտուրայից։ Հեռացված ասպիրանտի վերականգնումն ուսումը շարունակելու համար կարող էր իրագործվել ըստ գործող կարգի։ Սահմանված էր նաեւ ասպիրանտների գիտական ղեկավարի աշխատանքի վարձատրության չափը։ Առկա ուսուցման յուրաքանչյուր տարվա համար սահմանված էր նաեւ երկամսյա արձակուրդ։

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարան) ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուց-

պահանջները։ Մասնագիտական քննության անցկացման ձեւը (գրավոր կամ բանավոր) սահմանում էր ընդունող հանձնաժողովը։ Բանավոր քննությունը պետք է ձայնագրվեր եւ քննության արդյունքները հրապարակելուց հետո պահպանվեր առնվազն 24 ժամ։

ման կարգով» սահմանված էին նաեւ փոխկապակցված երկու՝ կրթական եւ հետազոտական մասերից բաղկացած ասպիրանտական ուսուցման չափորոշիչները: *Կրթական ոլորտում ասպիրանտը պետք է հանձներ ուսումնական ծրագրով նախատեսված քննություն (քննություններ) եւ ստուգարք (ստուգարքներ), այդ թվում՝ մասնագիտական քննություն, սահմանված ժամկետում պետք է կատարեր թեկնածուական ատենախոսության ծրագրով նախատեսված աշխատանքներ, գրեր ատենախոսությունը եւ ամբիոնում անցկացներ դրա նախնական քննարկում: Ուսուցման ընթացքում ասպիրանտը կարող էր լիարժեք օգտվել Մայր Աթոռի մատենադարանից, գրադարաններից, արխիվից, ճեմարանի համակարգչային սարքավորումներից, գործուղումների իրավունքից եւ այլն:*

Ասպիրանտական կրթության եզրափակիչ արդյունք էր հաստատված թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը, որի իրավունքն ունեին այն ասպիրանտները, որոնք կատարել էին թեկնածուական որակավորման բոլոր պահանջները: *Ատենախոսություն պաշտպանած ասպիրանտները պետք է ստանային «աստվածաբանության (աստվածաբանական գիտությունների) թեկնածուի» գիտական աստիճան: Թեկնածուական որակավորման պահանջները կատարած, բայց ատենախոսություն չպաշտպանած ասպիրանտին, իր ցանկությամբ, անվճար պետք է տրվեր ճեմարանի սահմանած ակադեմիական տեղեկանք՝ հաստատության ղեկավարին դիմում ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:*

Տեւական քննարկումներից ու համակողմանի ուսումնասիրությունից հետո ճեմարանի՝ հետբուհական կրթություն իրագործելու փաստաթղթերի փաթեթը ներկայացվեց ՀՀ ԿԳ նախարարություն, իսկ Մայր Աթոռը 2016 թ. սեպտեմբերի 30-ին դիմեց ՀՀ ԿԳ նախարարին՝ առաջարկելով թույլ տալ ճեմարանում իրականացնել հետբուհական կրթություն եւ բացել ասպիրանտուրա:

Հարցի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարը, «Հայաստանի Հանրապետության ասպիրանտուրայի եւ դոկտորանտուրայի բացման եւ դադարեցման փորձաքննության չափանիշներ» №694-Մ հրամանով հաստատված պահանջներին համապատասխան, հանձնարարեց անցկացնել համապատասխան փորձաքննություն: Այնուհետեւ հիմք ընդունե-

լով անցկացված փորձաքննության արդյունքները՝ ՀՀ ԿԳ նախարարի 2016 թ. հոկտեմբերի 6-ի №987-Ա/2 հրամանով Գեւորգյան հոգեւոր ճեմարանում (աստվածաբանական համալսարան) բացվեց ասպիրանտուրա՝ «ԻԵ-00.01 Աստվածաբանություն» մասնագիտությամբ: *Այդպես Վեհափառ Հայրապետի հետեւողական գործունեության արդյունքում հոգեւոր ճեմարան-աստվածաբանական համալսարանը վերածվեց աստվածաբանական, գիտակրթական եւ հետազոտական կենտրոնի։* Ճեմարանում ստեղծվեցին բոլոր հիմքերը բազմակողմանի զարգացած հոգեւորականներ, աստվածաբան-գիտնականներ, կրոնագիտական բարձրագույն որակավորման այլ մասնագետներ, ինչպես նաեւ հոգեւոր կրթական հաստատությունների համար մանկավարժական համակազմ պատրաստելու համար:

Ճեմարանի կրթական բարեփոխումների հոլովույթում մնում էր կատարել եւս մեկ քայլ՝ ատենախոսություններ պաշտպանելու համար հաստատությունում բացել պետականորեն ճանաչված *«Աստվածաբանություն» մասնագիտության մասնագիտական խորհուրդ։* Այդ նպատակին հետամուտ՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2016 թ. հոկտեմբերի 3-ին պահանջվող հայտ ներկայացրեց ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ առաջարկելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանում «Աստվածաբանություն» մասնագիտությամբ բացել թեկնածուական ատենախոսություններ պաշտպանելու մասնագիտական խորհուրդ:

Հիմք ընդունելով ճեմարանի աստվածաբանական գիտակրթական եւ հետազոտական կենտրոն լինելու փաստը՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովը 2016 թ. հոկտեմբերի 7-ի 84-Ա կարգադրությամբ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում ստեղծեց Աստվածաբանության 058 մասնագիտական խորհուրդը, որին իրավունք վերապահվեց ԻԵ.00.01 — Աստվածաբանություն (աստվածաբանական գիտություններ) մասնագիտությամբ կազմակերպել թեկնածուական ատենախոսությունների պաշտպանություն։ ԲՈՀ-ի որոշմամբ հաստատվեց նաեւ մասնագիտական խորհրդի կազմը։

Այդ ամենը փաստում են, որ աչքի առջեւ ունենալով ապագայի հզոր ու միաձույլ Հայ Եկեղեցու տեսլականը՝ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետն իր կազմակերպչական անխոնջ ջանադրությամբ 2010-ական թվականներին հետեւողականորեն շարունակեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կրթական բարենորոգումների գործըն-

թացը։ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետեւողական ու նախանձախնդիր գործունեությունն *այդ* ուղղությամբ *ճեմարանի կյանքում նշանավորվեց նրանով, որ՝*

ա. Հանրապետության կառավարության հաստատած պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան ճեմարանին տրվեց բակալավրի եւ մագիստրոսի անժամկետ կրթական ծրագրեր իրականացնելու իրավունք,

բ. Ճեմարանը սահուն անցում կատարեց կրթական եռաստիճան համակարգի, պետական կրթական չափորոշիչների պահանջներին համահունչ սկսեց իրագործել հետբուհական (ասպիրանտական) կրթություն,

գ. Ճեմարանը վերածվեց գիտակրթական եւ հետազոտական կենտրոնի ու այդ ոլորտներում նույնպես միացավ Հանրապետության ու եւրոպական միասնական կրթական տարածքին,

դ. Գեւորգյան հոգեւոր ճեմարանում բացվեց «Աստվածաբանություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ պաշտպանելու մասնագիտական խորհուրդ։

Այդ ամենով ի կատար ածվեց նաեւ Նորին Սրբության՝ կրթական բարեփոխումների միջոցով Գեւորգյան հոգեւոր ճեմարանում «իրական բովանդակություն ունեցող բարձրագույն կրթական գործունեություն կազմակերպելու» ծրագիրը։

Այսօր եւս շարունակվում են ճեմարանի սաների կրթական ու դաստիարակչական մակարդակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք մշտապես գտնվում են Նորին Սրբության ուշադրության կենտրոնում։

Р Е З Ю М Е

На основе анализа фактического материала в статье исследуется процесс образовательных перемен духовной академии «Геворкян» Первопрестольного Святого Эчмиадзина при Католикосе Всех Армян Гарегине II в 2010-х годах.

Показывается, что в результате последовательной преобразовательной деятельности Гарегина II в Духовной академии, во-первых, было введено двухуровневое обучение (бакалавриат, магистратура), а учебные программы бакалавриата и магистратуры в своей концептуальной основе полностью стали

соответствовать армянским государственным и европейским образовательным стандартам. Вследствие этого Духовной академии было дано право осуществлять бессрочные образовательные программы «бакалавра» и «магистра» по аккредитованной специальности «богословие».

Во-вторых, были созданы все основания для повышения уровня профессиональной подготовки выпускников, была основана программа послевузовского профессионального образования (аспирантская подготовка).

В-третьих, вследствие вышеназванных перемен Духовная академия «Геворкян» стала научно-образовательным и научно-исследовательским центром по аккредитованной специальности «богословие», чем был сделан существенный шаг для дальнейшей интеграции в единое европейское образовательное пространство.

И, в-четвертых, ВАК РА дал Духовной академии разрешение на открытие специализированного совета по защите кандидатской диссертации по специальности «богословие».

Показывается также, что вопросы привлекательности, эффективности и дальнейшего повышения качества, расширения доступа к получению высшего духовного образования и контроля качеством образования, а также расширение мобильности высшего образования по сей день занимают должное место в повседневной деятельности Католикоса Всех Армян Гарегина II.

SUMMARY

This article is an investigation of educational reforms undertaken under the leadership of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the Gevorkian Theological Academy of the Mother See of Holy Etchmiadzin during the decade commencing in 2010.

It demonstrates that during the Pontificate of the Catholicos of All Armenians and as a result of His Holiness' reforms, the two-degree academic program was introduced, namely, baccalaureate and master's programs, and the contents of the academic program were made to conform to the requirements of both the authorities of the Republic of Armenia and the standards of the European integrated educational program. As a result of these reforms, the Academy was granted accreditation, with no time limits, to undertake Bachelor's and Master's degree programs with the

specialization of theology; secondly, measures were taken to ensure a higher level of competence among the graduates, and the Academy was able to lay the foundations of postgraduate studies; thirdly, as a result of the preceding steps, the Academy, now accredited as a specialized institution, became a center for scholarly, educational and research activities, which was a major step in its integration into the European integrated educational space; fourthly, a specialized committee was established by the Supreme Certifying Commission to oversee and supervise the process of conferring PhD degrees in theology.

The article also confirms the fact, that the academic and educational reforms are ongoing, and that these efforts are continually within the purview of His Holiness.

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊԿԱ

ՄԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՀ ՊԿԱ, ԱԵԳՄՄ

ՀՈԳԵՒՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆ

Արդի ժամանակաշրջանում տեղեկատվության ձեւավորման եւ ստացման այլընտրանքային գործոնը վճռորոշ դերակատարում է ստանձնել անհատի, հասարակության, պետության եւ ազգի կենսագործունեության կազմակերպման եւ կառավարման գործընթացներում։ Ըստ ազգային եւ քաղաքացիական ինքնության արժեհամակարգի՝ այդ երեւույթը հնարավորություն է ընձեռում մի դեպքում համարժեք արձագանքելու արագ փոփոխվող աշխարհի իրողություններին, մեկ այլ դեպքում՝ մեքենայորեն ընդունելու եւ նույնանալու գերակա այլընտրանքային հնարավորություններին։ Մինչդեռ տեղեկատվահաղորդակցական նոր միջոցների զարգացմամբ, «նոր սերնդի» պատերազմներով եւ այլընտրանքային տեղեկատվությամբ պայմանավորված՝ մարդն իրեն նետված մարտահրավերներին պատասխանելու եւ, ինչու ոչ, նոր մարտահրավերներ նետելու անհրաժեշտությամբ պարտավոր է բնականոն արդիականացնել իր անվտանգության ապահովման համակարգը։ Տարածաշրջանը, որտեղ ապրում ենք մենք, խառնածին (հիբրիդային) պատերազմի[1] հարթակներից մեկն է, եւ առկա անորոշ իրավիճակն ամբողջությամբ բնութագրում է ցանցային կառավարման հիմնախնդիրները՝ բացահայտելով անվտանգային համակարգին սպառնացող վտանգներն ու բնականոն արդիականացման անհրաժեշտությունը։

---

[1] *Գաղտնի եւ քողարկված պատերազմների միախառնում, երբ համակցվում են քայքայիչ գործողությունները, նենգագուլը (սաբոտաժ), տեղեկատվական պատերազմը, հակառակորդի տարածքում գտնվող ապստամբներին ցուցաբերվող աջակցությունը եւ այլն։ Տե՛ս* О. Половенко, О. Грозный, Гибридная война: миф или реальность?, «Красная звезда». А. В. Манойло, Цветные революции в контексте гибридных войн, «Право и политика», 2015, №10, *էջ 1400–1405։*

1991 թ. սեպտեմբերի 21-ին վերականգնելով իր անկախությունը՝ Հայաստանի Հանրապետությունն առ այսօր չի կարողացել ձերբազատվել անցումային ժամանակաշրջանին բնորոշ կերպափոխման առանձնահատկություններից, որոնցով եւ պայմանավորված են ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները։ Տեղեկատվության ստացման այլընտրանքային հնարավորությունները փոխել են մարդու ընկալումներն ազգային եւ քաղաքացիական ինքնության, ազատության վերաբերյալ[2]։

Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են պետության, հասարակության, ընտանիքի եւ անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երեւույթները, գործողություններն ու անգործությունը[3]։ Վերջիններս առկա են և՛ համաշխարհային (գլոբալ), և՛ համաշխարհայինի ու տեղայինի (գլոկալ) տարածություններում։ Ակնհայտ է, որ պետությունն իր քաղաքացիների եւ հասարակության անվտանգության ապահովման հիմնախնդիրները պետք է լուծի՝ համադրելով համաշխարհայինն ու տեղայինը՝ ստեղծելով համաշխարհայինին գումարած տեղային տարածությունների անվտանգայնացման արժեքաբանությունը։

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առանցքային խնդիրն է հոգեւոր անվտանգության ապահովումը։

Կերպափոխումների տրամաբանությունը, 2020 թ. 44-օրյա հետպատերազմական եւ համավարակային խոր ցնցումները հրամայական են առաջադրել՝ նորովի գնահատելու հայերի ազգային ինքնության բնականոն արդիականացման, քաղաքական եւ քաղաքացիական դաստիարակության ռազմավարական զարգացման անհրաժեշտությունը։ Ավանդական եւ արդիական արժեքները երկվության մեջ ընկալելը եւ գծային ազատականացմամբ հրապուրված սեփական տեսակի նկատմամբ մերժողական վերաբերմունքն ստիպում են կարեւորել՝ ա) փոխկապակցված աշխարհում համամարդկային շահերի եւ ազգային առանձնահատկությունների, համաշխարհայնացման եւ նույնականացման ձգտումների, ինչպես նաեւ ազգերի, հանրույթների եւ անհատների ինքնորոշման միջեւ հակասությունները, բ) տարբեր տեղային քաղաքակրթությունների

---

[2] *Այս մասին տե՛ս* Է. Լեւինաս, *«Ժամանակը եւ այլը. այլ մարդու հումանիզմը», թարգմ.՝ Շահե Ծ. վրդ. Անանյան, Երեւան, 2020, էջ 167։*

[3] *ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 2007 թ.* https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189 *(վերջին մուտք՝ 21.07.2021 թ.)։*

համատեղելիության կամ անհամատեղելիության հիմնահարցերը, որոնք ավելի ակնառու են բացահայտվում՝ պայմանավորված համաշխարհայնացման թափի արագացմամբ եւ հատվածայնությամբ։ Կարեւորելով այս հակասությունները՝ փորձել ենք ներկայացնել այն միջավայրը, որում գտնվում է Հայաստանի Հանրապետությունը եւ ստիպված է հրատապ լուծել իր լինելիության դժվարին հիմնախնդիրները։ Հայաստանի եւ հայության համար, երբ ընկերային-քաղաքական համակարգի կերպափոխումը հղի է տարաբնույթ անորոշություններով, արմատապես փոխվել է ազգային ինքնության արդիականացման արտաքին միջավայրը, հոգեւոր անվտանգության ապահովման հիմնախնդրի ուսումնասիրությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն։

Հայ ազգի հոգեւոր առողջությունը սաստկացող վտանգներից եւ սպառնալիքներից պաշտպանելու գործընթացում կենսական է ինքնության բնականոն արդիականացումը։ *Հոգեւոր անվտանգության ոլորտի կարգավորումը հիմք է՝ գործնական քաղաքականություն մշակելու համար։ «Հոգեւոր Հայաստան»-ի գաղափարն այն տեսականն է՝ արժեքաբանական ուղենիշը, որը կարող է դառնալ քաղաքական ինստիտուտների կառավարման ոգեղենությունն ապահովող խթան*[4]։ Ունենալով բարդ կառուցվածք՝ հոգեւոր անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ, «...բնութագրում է հասարակության կենսակերտվածքի, պատմության եւ մշակույթի ավանդույթները, հասարակության բարոյաքաղաքական միասնության մակարդակն արտացոլող ազգային ինքնագիտակցության պաշտպանվածությունը, ինչպես նաեւ առանց ազգային ինքնությանը վնաս պատճառելու իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ եւ գաղափարներ ընդունելու ազգի կարողությունը»[5]։ *Ելակետ ընդունելով տրված սահմանումը՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ հոգեւոր անվտանգության հիմքում դրված բարոյահոգեբանական եւ հայրենասիրական կանոնակարգված արժեքների միջոցով ժողովուրդն արտահայտում է կառավարող վերնախավի քաղաքականության նկատմամբ ոչ միայն իր վստահությունն ու աջակցությունը, այլեւ պատրաս-*

---

[4] Մ.Մ.Մարգարյան, *Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Երեւան, 2019, էջ 246։*

[5] Դ.Ս.Զիլինգարյան, Ե.Լ.Երզնկյան, *Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն—ռուսերեն—անգլերեն, ռուսերեն—հայերեն, անգլերեն—հայերեն մեծ բառարան, Երեւան, 2015, էջ 74։*

տակամությունը՝ պաշտպանելու իրեն եւ իր պետությունն ու պետականությունը։ Նմանօրինակ շեշտադրումն արդարացված է, քանի որ «նոր սերնդի» պատերազմների փորձը վկայում է, որ ազգերի եւ պետությունների դժբախտությունն սկսվում է այն ժամանակ, երբ քայքայվում է ժամանակի ընթացքում ձեւավորված նրանց ինքնության մշակութային չափորոշիչների եւ բարոյահոգեբանական համակարգի քաղաքական էությունը, երբ իշխանական հարաբերությունների օրինականության ցածր մակարդակը, լուսանցքային դարձնելով հասարակությանը, քաղաքացուն հիվանդացնում է ջղախտով եւ ստեղծում ապագայաբանական ցնցակաթված (ֆուտուրշոկ)[6]։ Դրա հետեւանքով տրոհվում եւ փոշիացվում են ազգի ոգին եւ իշխանությունը։

ՀՈԳԵՒՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԲԱՂՄԱՁԱՓՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոգեւոր անվտանգությունն ազգային անվտանգության ապահովման հիմքն է։ Որպես այդպիսին՝ նրա միջոցով են ձեւավորվում եւ գործավում անվտանգության համակարգի քաղաքական, տնտեսական, բնապահպանական, տեղեկատվական, ռազմական եւ այլ բաղադրիչները։ *Ասվածը հիմնավորում ենք՝ ելակետ ընդունելով գիտական գրականության մեջ առկա «հոգեւոր անվտանգություն» հասկացության բազմաթիվ ձեւակերպումների վերլուծությունները։ Համաձայնելով Բ. Բուզանի հետ՝ ընդհանրացնենք. «...Ազգային անվտանգության խնդիրը, պարզվում է, համակարգային անվտանգության խնդիր է, որում անհատները, պետությունները եւ համակարգը կարեւոր դեր ունեն, եւ որի տնտեսական, հասարակական եւ շրջակա միջավայրի գործոնները նույնքան կարեւոր են, որքան քաղաքականը եւ ռազմականը»[7]։ Ըստ Դ. Զերկալովի՝ «Հոգեւոր անվտանգությունը հասարակական կյանքում անհատների միջեւ հարաբերությունների համակարգ է, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ստեղծագործ հոգեւոր կյանքի եւ հասարակական, բարոյական առողջ զարգացման համար»[8]։ Ապա քահանա Ա. Խվիլյա Օլինգերը միանգամից մի քանի լրացնող սահմանումներ է առաջարկում, ըստ որոնց՝ հոգեւոր անվտանգությունը՝*

---

[6] *Տես* Э. Тоффлер, Шок будущего, Москва, 2002, *էջ 11–13։*

[7] B. Buzan, People, States and Fear, p. 368.

[8] Д. В. Зеркалов, Духовная безопасность, Киев, 2012, с. 4.

1. հասարակական կյանքում անհատների միջեւ հարաբերությունների համակարգ է, որը բարենպաստ պայմաններ է ապահովում ստեղծագործ հոգեւոր կյանքի եւ ճիշտ զարգացման համար,

2. անհատի, ընտանիքի, հասարակության եւ պետության կենսական հոգեւոր շահերի եւ կարիքների պաշտպանության վիճակ է, վերջիններիս դրական ստեղծագործական հոգեւորությունը պահպանելու եւ զարգացնելու կարողություն[9]։

Ներկայումս հոգեւոր հայեցակարգի ամենատարածված տարբերակը բնութագրում են խոստովանահեն ուղղվածություն ունեցող հետազոտողները։ Այս պարագայում ոգեղենության, հոգեւոր առողջության, հոգեւոր կյանքի, հոգեւոր եւ բարոյական դաստիարակության, լուսավորության եւ այլնի մեջ են մտնում միայն այն երեւույթները, որոնք ուղղակիորեն առնչվում են ընդհանրապես կրոնին եւ մասնավորապես ցանկացած խոստովանությանը։ Սակայն Ա. Խվիլյա Օլինգերը հոգեւորականության կրոնական ըմբռնումը ձեւակերպում է հետեւյալ կերպ. «...դա մարդու կամ մարդկանց կապն է երկրպագության այս կամ այն առարկայի (ոգու) հետ (Աստված, աստվածներ, ոգիներ, կուռքեր եւ այլն), իսկապես գոյություն ունեցող հոգեւոր աշխարհ, եթերային հոգեւոր էակներ, ինչպես նաեւ այդ հարաբերությունների արտացոլումը հասարակական գործունեության այլ ոլորտներում»[10]։ Ըստ Վ. Իլարիոնի՝ «անհավատությունը հիվանդություն է, հոգեւոր կուրություն, իսկ հավատքը՝ հոգեւոր առողջություն»[11]։ Հոգեւոր անվտանգության էության դավանաբանական լուսաբանման առավելությունները, ներառելով կրոնական գիտակցության դրսեւորման տարբեր ձեւերի խոր վերլուծությունը, ազդում են անհատական եւ հասարակական կյանքի զարգացման վրա։ Միեւնույն ժամանակ որոշակիացնում են կրոնական (աղանդավորական-հարանվանական) խմբերի եւ նրանց հետեւորդների կործանարար գործունեության փաստերի բացահայտումը, միջդավանաբանական հարաբերությունների բարելավումը եւ ՀՀ քաղաքացիների շահերի եւ ազատությունների պաշտպանությանը միտված պետական-դավանաբանական քաղաքականության սկզբունքների հիմ-

---

[9] *Տե՛ս* Х. А. Олингер, Духовная безопасность и духовное здоровье человека, семьи, общества, Москва, 2008, *էջ 120։*

[10] *Անդ, էջ 42։*

[11] Митрополит Илларион (Алфеев), Неверие — это болезнь, а вера — духовное здоровье, http://hilarion.ru/2011/08/01/3742/.

նավորումը։ Հոգեւոր անվտանգության հիմնախնդիրների վերլուծման եւ համակարգման գործընթացում կարեւորագույն դերակատարում ունի քաղաքացիական հասարակության գործառութային կայացումը։ Այս առումով ՀՀ-ում հոգեւոր անվտանգության եւ քաղաքական հանրայնացման փուլերի միջեւ առկա խզումը աճպարարություններով կեղծում եւ անհատին դուրս է թողնում հասարակական հարաբերություններից ու կյանքից եւ նրան նետում է մշակութային եւ գաղափարական դեգերումների մեջ։

Սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական, արժեքաբանական եւ գոյաբանական վերափոխումներն էապես փոխել են բնակչության կենսամակարդակը՝ արտացոլվելով անհատի հոգեւոր անվտանգության մեջ։ Հասարակական-քաղաքական անկայունության, զարգացման անորոշություններով հագեցված հոգեւոր եւ բարոյական արժեքների համակարգը խզում է առաջացրել աշխարհայացքի ուղենիշների եւ ապագայի իմաստի կառավարման միջեւ։ Այս դիտանկյունից անհատի հոգեւոր անվտանգության ուսումնասիրումը դարձել է ռազմավարական խնդիր։ Ավելին՝ անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգն առաջադրած կոպենհագենյան դպրոցը, հոգեւոր անվտանգության խնդիրը դիտարկելով բազմաչափության մեջ, շեշտադրում է նրա հիմնականում թաքնահարույց (լատենտ) դրսեւորումները։ Որպես ազգի անցյալի, ազգային կերպարի, նկարագրի ու կեցության, հոգեկերտվածքի, ինչպես նաեւ ճանաչողության եւ իմացության ամբողջություն՝ հոգեւոր անվտանգությունը համակարգում է.

— տվյալ հասարակության գոյաբանության փորձը, որն անցյալ—ներկա—ապագա եռաչափության մեջ պատմության կարեւորագույն իրադարձությունների ընկալման եւ արժեքների վերարտադրման հարատեւ գործընթաց է,

— պետականաշինության մշակույթի զարգացման շնորհիվ ձեւավորված եւ համագործակցության համար իրական պայմաններ ապահովող ստեղծարար գործունեությունը՝ օտարման ու եզրահանգման չեզոքացմամբ,

— պետության եւ հասարակության անվտանգ ապագայի կանխատեսումն ու ռազմավարական տեսլականի մշակումը՝ ապահովելով ազգի ժողովրդավարական համախմբման եւ քաղաքացիավարական պատասխանատվության զարգացումը։

Այս համապատկերում հոգեւոր անվտանգության ապահովումը ոչ միայն պատասխան է նոր մարտահրավերներին, այլեւ կարող է իր տե-

սակի մրցունակությունն ապացուցելու համար ձեւավորել նոր որակի համագործակցության մշակույթ[12]։

Ի մի բերելով ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացը՝ փաստենք, որ պետության, հասարակության եւ ազգի հոգեւոր անվտանգության սպառնալիքներն անմիջապես տեսանելի չեն, այստեղ կրած կորուստների հետեւանքներն սկզբում գուցե չեն գիտակցվում, բայց որոշակի փուլում դառնում են անշրջելի։ *Հոգեւոր անվտանգության ապահովումը ոչ միայն պատասխան է նոր մարտահրավերներին, այլեւ իր տեսակի մրցունակությունն ապահովելու նպատակով նոր որակի համագործակցության մշակույթի ձեւավորման ընթացք է[13]։ Ցավոք, մեր պատմական զարգացման մեջ առկա է տեղեկատվության խաթարում (պետության եւ պետականության կորուստ, օտարների կողմից նվաճումներ, քաղաքական խաղեր եւ այլն), ինչն էլ հայությանը զրկել է սեփական գաղափարախոսության արդիականացման հիմքի վրա կայուն կենսագործունեություն կազմակերպելու հնարավորություններից։ Բայց դա չի նշանակում, որ հայ մարդը ծանոթ չէ իր գաղափարախոսությանը։ Այն ազգային մտածելակերպի տեսքով հանդես է եկել բոլոր դարերում[14]։*

ՀՈԳԵՒՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԻ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ

Ազգի, պետության եւ հասարակության անվտանգությունը բնականոն ապահովվում է առաջին հերթին կենսաքաղաքականության[15] մշակման եւ իրականացման հիմքով։ Այս շարակարգում փաստենք, որ դեռեւս վաղ ժա-

---

[12] Մ. Մ. Մարգարյան, *Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. հոգեւոր անվտանգություն, «Հայկական բանակ», 3. 2018, էջ 70,* https://razmavaraget.files.wordpress.com/2018/12/armenian_army_n3_2018.pdf?fbclid=IwAR3JTlBgwolrf0uE9vCNhkUQubAk6W2Lbdfck1QyptKlqpS5FBPraj9AYPE։

[13] Մ. Մ. Մարգարյան, *Հոգեւոր անվտանգության հիմնախնդիրները ՀՀ ԶՈՒ-ի զարգացման համատեքստում, «Հայկական բանակ», 3. 2019, Երեւան, էջ 122,* https://razmavaraget.files.wordpress.com/2019/11/hb-3—2019.pdf։

[14] Մ. Մ. Մարգարյան, *«Հոգեւոր Հայաստանի գաղափարախոսությունը արդիականացման գործընթացում», «Բազմավէպ», թիվ 1—4, 2004, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 186։*

[15] *Կենսաքաղաքական գործընթացները վերլուծելիս Ագամբենը նշում է հունական* zoe *եւ* bios *բառերը, որոնք նա օգտագործում է տարբերելու համար «կյանքի բուն փաստը (*zoe*) եւ անհատի կյանքի ուղին (*bios*)»։ Տե՛ս* Дж. Агамбен, Homo Sacer. Суверенная власть и голая жизнь. Москва, 2011, *էջ 7։*

մանակներից «ազգ» գաղափարը բնութագրելիս հիմքում դնում էին հոգեւոր սկզբունքն ու բաղադրիչը, որը գալիս է ներսից, եւ դրա բաղկացուցիչ սկզբունքն արտաքին միջավայրի նկատմամբ որակական տարբերությունն է, որն իր արտահայտությունն է գտնում ազգային գաղափարախոսության մեջ։ «Ազգային գաղափարախոսությունը տվյալ ազգի կենսահասարակական ինքնությունն ու էությունը համակողմանիորեն արտացոլող, որոշակի մտածելակերպով ձեւավորված իդեալների, ռազմավարական շահերի, նպատակների հարատեւման փիլիսոփայությունը ներառած միաձույլ, ամբողջական, կուռ եւ մշտապես արդիականացում պահանջող հայացքների հանրագումարն է։ Տրամաբանորեն կարելի է ընդհանրացնել. եթե առկա է համակարգը (դիցուք՝ ազգը), ապա գոյություն ունի «Ես»-ին տեղ, կարգ, ինքնություն, էություն ապահովող հարատեւության մեջ ձեւավորված գաղափարախոսությունը»[16]։ «Ազգը հոգի է, հոգեւոր սկզբունք։ Որպես առանձին երեւույթ՝ ազգը համարվում է հեռավոր անցյալի վերջնակետ՝ կազմված տանջանքներից, զոհերից, ինքնամերժումից։ Ընդհանուր հոչակն անցյալում է, ընդհանուր կամքը՝ ներկայում՝ ուղղված մեծ բաների իրականացմանը եւ այդպիսի բաներ անելու ցանկությանը. այս ամենը ժողովուրդ համարվելու էական հիմքերն են»[17]։ Փաստորեն՝ հոգեւոր անվտանգությունն առաջին հերթին ենթադրում է աշխատանք գիտակցության հետ՝ լեզվի, դավանանքի, տեղեկատվության, գիտելիքների եւ մշակույթի միջոցով։

Արդի աշխարհաղաքական զարգացումները վկայում են, որ կրոնական գործոնը նշանակալի դեր է խաղում. այն կարող է լինել ե՛ւ կայունության հիմք, ե՛ւ բարձր բարոյականության, ե՛ւ մարդասիրության հենակետ, ե՛ւ միաժամանակ տրոհել հանրույթը՝ դառնալով հակամարտության պատճառ։ *Այնուամենայնիվ, «պետությունները եւ ամբողջատիրական վարչակարգերը ժամանակ առ ժամանակ ձգտել են պատմականությամբ ճնշել դավանանքի կամ հավատի ազատությունը, երբ կարծել են, որ դավանանքը վտանգում է բնակչության նկատմամբ իրենց վերահսկողությունը կամ սպառնում իրենց քաղաքական իշխանությանը։ Այդ նպատակով նրանք արդարացնելու էին իրենց գործողությունները քաղաքացիների «հոգեւոր առողջությունը» պաշտպանելու անհրաժեշտությամբ կամ, երբ գերակշռող Եկեղե-*

[16] Մ. Մ. Մարգարյան, *«Հոգեւոր Հայաստանի գաղափարախոսությունը արդիականացման գործընթացում», «Բազմավէպ», թիվ 1–4, 2004, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 186։*

[17] P. Manent, What is a Nation? The Intercollegiate Review—-Fall 2007, p. 23—24. https://home.isi.org/what-nation.

ցիներին ապավինելն ուժեղացնում է իրենց քաղաքական ուժը, ժողովրդի «հոգեւոր անվտանգությունը»։ Նշենք, որ կրոնական փոքրամասնություններն սպառնալիք էին համարվում հոգեւոր անվտանգությանը կամ առողջությանը կամ քաղաքացիների բարեկեցությանը, եւ շարունակում էին համակարգված պիտակավորվել որպես «պաշտամունք» եւ ճնշվել»[18]։ Այս շարակարգում էլ ներկայացնենք աղանդավորական (հարանվանություններ) շարժումները՝ որպես հետխորհրդային երկրներում (այդ թվում՝ ՀՀ-ում) հասարակության հոգեւոր առողջությունը քայքայող անջատողականություն։ Վերջինս, պայմանավորված աղքատության, կոռուպցիայի (կաշառակերություն եւ հովանավորչություն), սոցիալական քաղաքականության եւ երիտասարդությանը հասարակարգի մեջ ընդգրկելու միակողմանիությամբ, բողոքի բոլոր կրիչներին եւ դժգոհներին ներգրավեց՝ դարձնելով նրանց նոր՝ բարեկեցիկ համայնքի անդամ։

Այսօր ՀՀ-ում գործող հարանվանությունների թվաքանակի ճշգրտման հետ կապված կան որոշակի բարդություններ։ Հայաստանում կրոնական կազմակերպությունները գրանցվում են որպես կրոնական համայնքներ (այլ ոչ թե որպես հարանվանություններ), եւ գրանցված կազմակերպությունների քանակը չի արտացոլում հարանվանությունների քանակը։ Ըստ ՀՀ կառավարության[19] կայքում առկա 2017 թ. տվյալների՝ ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունները 67-ն են, որոնց գերակշռող մասը հարանվանություններ են, եւ ըստ լրատվամիջոցների մշտադիտարկման տվյալների՝ շուրջ 60 չգրանցված, բայց գործուն համայնք կա։ Այստեղ կարեւոր ենք համարում պետության համագործակցային քաղաքականությունը հասարակական խոցելի խմբերի (գինեմոլություն, թմրամոլություն[20], խաղամոլություն, բանտարկյալներ եւ բանտից վերադարձածներ, ապօրինածնություն, հոգեորսություն եւ այլն), երիտասարդության եւ Եկեղեցու հետ։ Հոգեորսության իրավական կարգավորումն անմիջականորեն աղերս-

---

[18] P. Duval, The Concept of Spiritual Security and The Rights of Religious Minorities, Human Rights Attorney, Paris, 2019, https://freedomofbelief.net/articles/the-concept-of-spiritual-security-and-the-rights-of-religious-minorities (21.07.2021).

[19] *ՀՀ-ում կրոնական կազմակերպությունների ցանկ* https://www.e-gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos%2019_05_08.pdf?fbclid=IwAR0l6FVbpaPebe6uNrKIoCPW7hho8XmXo_uh3wi3fct3eHhiiH-uog1FOz8 *(վերջին մուտք՝ 21.07.2021)։*

[20] *Ամփոփ տեղեկատվություն 2020 թ. ընթացքում ՀՀ-ում թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ* https://www.police.am/fight-against-drug-trafficking/statistics1.html։

ներ ունի խղճի եւ կրոնի ազատության՝ առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով սահմանափակման սահմանադրական հիմքերի հետ[21]*։*

Հայ Եկեղեցին պետության բացակայության պայմաններում դարեր շարունակ եղել է այն հաստատությունը, որը պահպանել է հայ մարդու հոգեւոր անվտանգությունը։ Համոզված ենք, որ նշված մակարդակներում պետության իրականացրած համակարգված քաղաքականությունը հնարավորություն կտա ոչ միայն պաշտպանել ավանդական արժեքներն ու մշակութային ժառանգությունը, այլեւ բնականոն արդիականացնել վերջիններս՝ նպաստելով հայկական ընտանիքի գործառմանը, ժողովրդագրական իրավիճակի զարգացմանը եւ ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության խնդիրների ապահովմանը։

Փաստորեն՝ հոգեւոր անվտանգության համար կրոնական գործոնի կարեւորությունն իր դրական եւ բացասական նախադեպերն ունի։ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը[22]: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում[23]: *«Կրոնական ինքնությունը շրջապատի մարդկանց հետ անհատական մակարդակում հոգեւոր կապի եւ ամբողջ հասարակության ինքնորոշման հնարավոր ուղիներից է շրջապատող հասարակությունների հետ հարաբերությունների մեջ (մակրո-սոցիալական մակարդակում)»*[24]*։* Այնուամենայնիվ, ներկայիս գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում հոգեւոր անվտանգությունը՝ որպես ընդարձակված օրակարգով անվտանգության բաղադրիչի հիմք, իր արժեքային համակարգով բազմաչափ է: *Այս տեսանկյունից, առաջնահերթ նշանակություն ունեն* Հայ Առաքելական եկեղեցին, հայ ըն-

---

[21] Գ. Դանիելյան, *Մտքի, խղճի եւ կրոնի ազատության կառուցակարգային եւ իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում, էջ 38* http://ysu.am/files/03G_Danielyan.pdf *(վերջին մուտք՝ 21.07.2021)։*

[22] *Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 17* https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510*։*

[23] *Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 18* https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510*։*

[24] А. Жаде, Е. С. Куква, СА. Ляушева, А. Ю. Шадже, Многоуровневая идентичность, Москва, 2006, с. 220.

տանիքի ավանդույթների բնականոն արդիականացումը եւ ազգային դաստիարակության արժեքաբանությամբ գործառող դպրոցը: Դարերի մեջ հայ մարդու հոգեւոր անվտանգության եւ հայ ժողովրդի բոլոր հաղթանակների աղբյուրը եղել եւ մնում են ազգային դիմագիծ ունեցող ընտանիքներում դաստիարակված սերունդները: *Պետականազուրկ հայ ազգին ուծացումից փրկել եւ ԻԱ. դար է հասցրել Հայ Առաքելական Եկեղեցին։ Հայկական պետականության վերականգնումից հետո նորաստեղծ պետությունը եւ Հայ Եկեղեցին ներքաշվել են իրենց նետած մարտահրավերներին պատասխանելու ցանցային գործընթացի մեջ։ Խղճի ազատության եւ ցանկացած կրոն ազատ դավանելու պատրվակով ՀՀ եւ ԱՀ են թափանցել կրոնական կազմակերպություններ եւ կրոնական խմբեր, որոնք թաքնահարույց աղճատում են հասարակությունը։* Կարծում ենք՝ հոգեւոր անվտանգության հիմնախնդիրների բացահայտումը եւ վերլուծությունը՝ որպես համազգային հարցեր, ենթադրում են հայության ջանքերի համախմբում։ *Հայապահպանության խնդիրն առավելապես կարգավորող հաստատություն է եղել եւ կա քրիստոնեական Եկեղեցին, որը Սփյուռքում բնակվող հայությանն առավելապես համախմբում է ազգային արժեքների շուրջ, որի միջոցով էլ ինքնությունը եւ ազգային արժեհամակարգը (լեզու, կրոն, ավանդույթներ, բարոյահոգեբանական արժեքներ, ընտանիքի դերի կարեւորում եւ այլն) փոխանցվում են սերունդներին եւ հնարավորինս զերծ պահում ձուլման վտանգից։ Եկեղեցուն կից հայկական կրթօջախները եւս լրջագույն առաքելություն ունեն համախմբման եւ հայապահպանության գործընթացում։* Մեր ժողովրդի երկու երրորդն ապրում է Հայաստանից դուրս, եւ մենք պետք է միասնական կրթական գաղափարախոսություն մշակենք՝ մեր երիտասարդությանը հայկական դաշտում պահելու համար: Այսօր հայության ուծացման եւ տարրալուծման արագությունը հասել է ահռելի չափերի: Դպրոցը հասարակության առանցքն է, որտեղ ձեւավորվում է մարդը՝ որպես հասարակության անդամ ու որպես որոշակի ազգային գիտակցության կրող, որտեղ սերունդներին են փոխանցվում տվյալ ժողովրդի ժառանգության եւ համամարդկային արժեքները, ներդրվում է քաղաքացու պատասխանատվության եւ զարգացումների կարեւորման առաջնային մակարդակը: *Կարեւորելով դպրոցի դերն ու նշանակությունը հայապահպանության գործում՝ պետք է որակապես բարձր եւ միջազգային հարթակում մրցունակ կրթություն ապահովող դպրոցներն ավելացնել Եվ ՀՀ-ում, Եվ Սփյուռքում՝ շեշտադրելով «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Հայոց Եկեղեցու պատմություն», «Ազգային մշակույթ» առարկաները, սփյուռքահայ*

երիտասարդներին կապելով հայրենիքին եւ ազգային արժեքներին։ Այս համատեքստում նպատակահարմար է հոգեւոր անվտանգության ապահովման գործիքակազմի մշակումը, որտեղ կներկայացվեն դերակատարների (հատկապես՝ առաջնորդների եւ վերնախավերի) հասարակական պատասխանատվության արժեքային բազմաչափությունը, եւ կառուցվածքագործառութային դիտանկյունից կհիմնավորվի ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը՝ պետության եւ քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների զարգացման գործընթացում։

ԻԱ. դարի մարտահրավերներին համարժեք պատասխանելու եւ ներկայիս անորոշ վիճակը գիտավերլուծական եղանակով կառավարելու նկատառումով ՀՀ հոգեւոր անվտանգության ապահովումը եւ ոլորտի կայացումը հնարավոր է միայն հասարակություն—պետություն—եկեղեցի *սերտ համագործակցության միջոցով։ Մեր կողմից առաջադրված թեզը հիմնավորում ենք՝ նկատի ունենալով «Հոգեւոր Հայաստանի» պատմականորեն ձեւավորված եւ մինչ օրս առկա գաղափարախոսությունը, որովհետեւ այն իր ոգեղենությամբ ձեւավորվել, զարգացել եւ բնականոն արդիականանալու հնարավորություններ ունի Հայ Եկեղեցու միջոցով։ Եկեղեցու, քանի որ հայ ազգային ինքնության հավաքական պահպանման պատասխանատուն, համակարգողը ողջ աշխարհում (Սփյուռք) Եկեղեցին է։ Եկեղեցի—պետություն փոխհարաբերությունների համար վճռորոշ եղան 2005 թ. նոյեմբերի 27-ին ընդունված սահմանադրական փոփոխությունները, որոնց համաձայն՝ պետությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ճանաչեց ազգային Եկեղեցի եւ հնարավոր համարեց Եկեղեցի—պետություն փոխհարաբերության կարգավորումը հատուկ օրենքով*[25]*։*

Հոգեւոր անվտանգությունը ենթադրում է սոցիալ-մշակութային այնպիսի միջավայր, որը, ներառելով հասարակական գիտակցությունը, հոգեւոր արժեքները, մշակույթը, հանրայնացնում է հայ անհատին՝ իր մարդաբանական տեսակի, պատմական հիշողության եւ ապագայի նկատմամբ ունեցած ռազմավարական մտածողությամբ։ Հետեւաբար, հասարակություն—պետություն—եկեղեցի *եռաչափության բնականոնությունը*

[25] Տ. Շահէ Վարդապետ Անանեան, *Եկեղեցի—պետություն փոխհարաբերությունները. Հայաստանյայց Եկեղեցու տեղը, դերն ու օրենսդրական կարգավիճակը, էջ 11։* http://www.roundtable-act.am/library/277453402_ART%20discussion%206%20Church&state.pdf *(վերջին մուտք՝ 21.07.2021)։*

կարիք ունի փոխհամաձայնեցված հարաբերությունների, որպեսզի քաղաքական իրավիճակի որեւէ փոփոխություն չխոչընդոտի, չխաթարի նրանց կողմից իրականացվող ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի իրականացումը, պետության հոգեւոր բարելավումը եւ առաջընթացը՝ ազգային ինքնության եւ դրա պահպանման հիմքով։

Պատմության հոլովույթում հայ մշակույթի մեջ պաշտամունք է ձեւավորվել եւ զարգացել ոգեղենության նկատմամբ։ Մեր կարծիքով՝ դա էլ օգնել է հայ մարդուն դիմակայել արտաքին եւ ներքին քայքայիչ ազդեցություններին՝ արարիչ գործունեություն ծավալելով շրջապատի նկատմամբ։ Փաստորեն, ոգեղենությունը՝ որպես հասարակական զարգացման ժամանակակից միտումների արտացոլում, հնարավորություն է տալիս արդի մարտահրավերներին համահունչ բարձրացնել մշակույթի, պատմական հիշողության եւ ապագա սերունդների նկատմամբ պատասխանատվության մակարդակը։ Դա հնարավորություն կտա ապահովել հայոց լեզվի եւ հայ ժողովրդի ժառանգության բազմազանությունը, նորացնել գիտական ներուժը եւ բարձրացնել երիտասարդների մրցունակությունը։

Վերոնշյալներն են այն հիմնական դրույթները, առանց որոնց անհնար է խոսել ներկայիս ՀՀ հոգեւոր անվտանգության եւ որպես ինքնիշխան պետության գոյության հեռանկարների մասին։ «Պատմության ընթացքում մարդիկ համաշխարհային ցանց են հյուսել եւ ամեն բան գնահատել են ըստ այդ ցանցում ունեցած գործառույթի։ Քանի որ այս համաշխարհային ցանցի գլխավոր դերակատարները մարդիկ էին, նրանք հեշտությամբ ցանցի ընդհանուր հաջողությունները վերագրում էին իրենց եւ իրենց համարում էին արարման պսակ։ Մյուս բոլոր կենդանի արարածների կյանքն ու ապրումները թերագնահատվում էին, քանի որ նրանց կատարած գործառույթները պակաս կարեւոր էին»[26]։ Կարծում ենք՝ հենց այս մոտեցմամբ էլ ընդհանուր շահը ստորադասվեց անհատականին եւ բերեց նորագույն անվտանգային մարտահրավերների։ Մշակույթի պահպանման եւ զարգացման հետ կապված մտահոգությունը միշտ հասարակության եւ յուրաքանչյուր անձի ինքնության մաս է։ Հանրագումարի բերեմ։ Ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովումը եւ այդ համակարգում հոգեւոր անվտանգության գերակայությունն ուղղված պետք է լինեն հասարակության եւ հատկապես երիտասարդության

[26] Յ. Ն. ՀԱՐԱՐԻ, Homo Deus. *Ապագայի համառոտ պատմություն, Երեւան, 2020, էջ 471։*

քաղաքական, քաղաքացիական եւ ազգային ինքնության փոխհարաբերությունների ձեւավորման ռազմավարությանը։

Այս դեպքում հոգեւոր անվտանգության ապահովումն ու բնականոն գործառումը միակ հնարավորությունն են, որը հասարակություն—պետություն—եկեղեցի համակարգը զերծ կպահի լուսանցքային վարքագիծ ունեցող զանգվածների գերակայությունից։ Ակնհայտ է, որ լուսանցքայինները քաղաքական իրականության իրենց պատրանքային գնահատմամբ սպառնալիք են հասարակության լիարժեք անդամ դառնալու եւ ինքնության բնականոն արդիականացման համար։ *Գաղտնիք չէ, որ տնտեսական եւ քաղաքական շատ ձախողումներ, ժողովրդավարության որակի խնդիրներ եւ պետության կառուցումն անմիջականորեն կապված են ազգային ինքնության հոգեւոր արժեքաբանության ճգնաժամի հետ։* Ազգային ինքնության քայքայումը, «ձախողված» պետության առաջացումն ու երկարակեցությունը պայմանավորված են ոգեղենության եւ մշակույթի հիմքերի քայքայմամբ, քաղաքական եւ քաղաքացիական մշակույթի խզմամբ, ինչպես նաեւ սերունդների համերաշխության եւ հասարակական պատասխանատվության բացակայությամբ։

ՀՀ հոգեւոր անվտանգության սպառնալիքներն են.

- *հոգեւոր արժեքների իմաստազրկում, նյութականության պաշտամունք,*
- *բնակչության հոգեւոր, բարոյական եւ ստեղծագործական ներուժի նվազում,*
- *տեղեկատվության շահարկում՝ աճպարարություններ (ապատեղեկատվություն, տեղեկատվության աղավաղում),*
- *աղանդավորական (հարանվանություններ) կազմակերպությունների տարածում,*
- *ընտանիքի եւ ամուսնության ինստիտուտի ոչնչացում,*
- *հասարակության բեւեռացում,*
- *երիտասարդության շրջանում ծայրահեղ նորազատական արժեքների տարածում (այլընտրանքային ընտանիք, դավանանք, անպատասխանատու ազատություն),*
- *սահմանազատման խնդիրներ,*
- *ժողովրդագրական խոր ճգնաժամ,*
- *հայրենասիրության, ազգային դաստիարակության անկում,*
- *հասարակության քրեականացում,*
- *հասարակական հոռետեսության աճ։*

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս առաջարկել կենսաքաղաքականություն մշակելիս նրա կառուցվածքում ներառել հայ հասարակության հոգեւոր անվտանգության ամրապնդման հետեւյալ ուղիները.

1. երիտասարդության՝ հասարակությանը լիարժեք անդամակցելու կարեւորում, սերունդների երկխոսություն, սահուն սերնդափոխություն՝ պատմական, ազգային, հոգեւոր-մշակութային արժեքների հիմքով,

2. մշակութային, հոգեւոր եւ բարոյական ժառանգության, հասարակական կյանքի, պատմական ավանդույթների եւ չափորոշիչների պաշտպանություն,

3. բնակչության հոգեւոր եւ բարոյական կրթության ոլորտում պետական քաղաքականության ձեւավորում,

4. աշխատանքների իրականացում մշակութային եւ տեղեկատվական միասնական տարածքի ձեւավորման ուղղությամբ՝ դրանում պետականամետ հայրենասիրական բնույթի լրատվամիջոցների գործուն մասնակցությամբ,

5. հակազդեցություն ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների բացասական ազդեցությանը։

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել.

ՀՀ հոգեւոր անվտանգության ոլորտն անցյալ—ներկա—ապագա եռաչափության մեջ ձեւավորված համակարգ է, որը հայ հասարակությանը թույլ է տալիս պահպանել իր կենսաքաղաքականության ներդաշնակումը, արժեքաբանությունը, չափանիշները (առաջին հերթին՝ մշակութային, ազգային եւ մտավոր բնույթի)՝ պատմականորեն հաստատված չափորոշիչների սահմաններում։ Հասարակության ոգեղենությունը նրա անձեռնմխելիությունն է, որն օգնում է դիմակայել հասարակական ներքին հիվանդություններին եւ արտաքին վարակներին։ Ըստ էության՝ կրոնական եւ հոգեւոր աշխարհը շատ բարդ, բազմազան եւ բազմաբեւեռ է, եւ դրանում նավարկելու անկարողության հետեւանքները կարող են աղետի վերածվել ոչ միայն առանձին անձի, այլեւ ամբողջ պետության համար։

Իհարկե, ՀՀ ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներն են հայկական ավանդական հոգեւոր, մշակութային եւ բարոյական արժեքների քայքայումը, ՀՀ միատարր ժողովրդի միասնության թուլացումն արտաքին՝ մշակութային եւ տեղեկատվական ընդլայնման միջոցով, ներքին բեւեռացումը, ամենաթողությունը, ռասայական, ազգային եւ կրոնական անհանդուրժողականությունը, աղանդավորական շարժման եւ համասե-

ռամոլության լայնածավալ տարածումը, կրթության որակի անկումը, հայոց լեզվի դերի նվազումը, ՀՀ եւ ԱՀ պատմության կեղծումը կամ աղավաղումը։ Սակայն գաղտնիք չէ, որ արմատական հասարակական միավորումների եւ խմբերի գործունեությունը, որոնք օգտագործում են ազգային եւ կրոնական ծայրահեղական գաղափարախոսությունը, եւս սպառնալիք է հոգեւոր անվտանգությանը։ «Տեսակն իրավունք չունի ոչնչացնելու տեսակին. աշխարհը դրանից աղքատանում է»[27]։ «Նոր աշխարհակարգի գաղափարախոսությունը չպետք է մերժի պատմականությունը, քանի որ անցյալ—ներկա—ապագա եռաչափության մեջ պատմական անցյալն իշխում է ներկայի վրա այն չափով, ինչ չափով պատմական ներկան իշխում է ապագայի վրա»[28]։

Կարեւոր է զարգացնել հոգեւոր անվտանգության ոլորտը եւ բարձր մակարդակով իրականացնել հոգեւոր անվտանգության ապահովումը։ *Ժամանակակից աշխարհում աշխարհաքաղաքական առճակատման աճը, ընկերային-տնտեսական եւ մշակութային կյանքում ճգնաժամային երեւույթները մեծ ազդեցություն ունեն ժամանակակից մարդու անհատականության վրա՝ ընկղմելով նրան գաղափարական դատարկության մեջ եւ հաճախ բերելով բազմաթիվ կործանարար հետեւանքների։ Մարդկության ընդհանրական (գլոբալ) խնդիրները, որոնցից շատերը բխում են ոգեղենության պակասից, միջազգային մակարդակում որոշում են հոգեւոր զարգացման եւ ճգնաժամի հաղթահարման միջոցները։ Հենց դա էլ հանգեցրեց հոգեւոր անվտանգությունը՝որպես պետության ազգային անվտանգության հիմնական բաղադրիչներից մեկը լինելուն։ Ազգային գաղափարի արդիականացման ակնկալիքով էլ ՀԱՅ միտքը համակարգել է հայ ոգու Սահմանադրությունը, որի սկզբունքներն են՝ ազատ անհատ, անկախ հայրենիք, արդարադատ պետություն, պատիժ չարին։*

Այսպիսով՝պետք է ընդգծել՝ հոգեւոր անվտանգության ապահովումն օրակարգային խնդիր է, որտեղ անվիճելի են հայապահպանության եւ պետականաշինության գործընթացներում եկեղեցու՝ պատմականորեն որպես գերակա համախմբողի դերակատարումը, երիտասարդության դերը, սահուն եւ համագործակցային սերնդափոխությունը, պետական կառավարման համակարգի կենսունակությունն ու ազգամետ նպատակադրվածությունը։

---

[27] Մ. Մ. Մարգարյան, *«Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում», Երեւան, 2019, էջ 274։*

[28] Մ. Մ. Մարգարյան, *«Հոգեւոր Հայաստանի գաղափարախոսության արժեքաբանությունը»,* https://mmmargaryan.wordpress.com/2017/05/12/հոգեվոր-հայաստանի-գաղափարախոսության/, *Երեւան, 2017 (վերջին մուտք՝ 21.07.2021)։*

РЕЗЮМЕ

Адекватно реагировать на вызовы XXI века и научно-аналитическое управление нынешней неопределенностью, обеспечивая духовную безопасность Республики Армения, а также становление сферы возможно только через тесное сотрудничество общества, государства и Церкви. Духовная безопасность — основа национальной безопасности. Через это формируются и действуют политические, экономические, экологические, информационные, военные и другие компоненты системы безопасности.

Обеспечение духовной безопасности и нормального функционирования — единственный способ предотвратить доминирование маргинализированных масс в системе общество—государство—Церковь. Обеспечение духовной безопасности является одним из вопросов повестки дня, где роль Церкви, как исторически доминирующего объединителя в процессах сохранения армянской идентичности и государственного строительства), роль молодежи, плавная и совместная смена поколений, жизнеспособность системы государственного управления и пронационализм являются неоспоримыми.

SUMMURY

To adequately respond to the challenges of the 21st century and manage the current uncertainty scientifically and analytically (by ensuring the spiritual security of the Republic of Armenia and formation of the sphere) is possible only through close cooperation between the society, the state and the church. The spiritual security is the basis of the national security. Through it, political, economic, environmental, informational, military and other components of the security system are formed and operated. The ensuring of the spiritual security and normal functioning is the only way to prevent the dominance of the marginalized masses in the society-state-church system. The ensuring of the spiritual security is one of the issues on the agenda, in which the role of the church as the historically dominant uniter in the processes of preserving the Armenian identity and of the state formation, the role of youth, the smooth and joint change of generations, the viability of the public administration system and pro-nationalism are undeniable.

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ ՈԿ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (1991–2017 ԹԹ.)

Եկեղեցական ճարտարապետությունը հայոց բազմադարյա մշակույթի ինքնատիպ եւ կարեւոր բնագավառներից է։ Հայկական եկեղեցական ճարտարապետության բազմաթիվ կառույցներ աչքի են ընկնում իրենց յուրօրինակությամբ, գեղարվեստական հարուստ ավանդների կիրառմամբ ու զարգացմամբ, ներքին ու արտաքին հարդարանքի ուրույն լուծումներով, կառուցողական արվեստի բարձր մակարդակով։

Հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության պատմության մեջ, հիրավի, պատվավոր տեղ ունի Շիրակի (Անի–Շիրակ) ճարտարապետական դպրոցը՝ իր տաղանդաշատ շինարարներով ու խաչքարագործ վարպետներով։ Այս դպրոցի ներկայացուցիչները հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետությունը բարձրացրել են որակական մի նոր աստիճանի ու հարստացրել այնպիսի կոթողներով, ինչպիսիք են Երերույքի տաճարը, Դպրեվանքը, Լմբատավանքը, Հոռոմոսի, Արգինայի, Խծկոնքի, Մարմաշենի, Հառիճի վանական համալիրները, Լեռնակերտի, Սարալանջի, Պեմզաշենի, Սառնաղբյուրի, Տեկորի, Մրենի, հազարաշեն Անիի ու Գյումրիի գեղակերտ եկեղեցիները եւ բազմաթիվ այլ հոյաշեն կառույցներ։ Ուշագրավ եւ արժեքավոր են Շիրակի հուշարձանները, որոնք լրացնում եւ ամբողջացնում են հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության հուշարձանաբույլը։

Այս հոդվածի շրջանակներում փորձել ենք ներկայացնել ՀՀ Շիրակի մարզի նորակառույց (1991–2017 թթ. կառուցված) եկեղեցիներն ու մատուռները՝ Գյումրիի Ս. Հռիփսիմե, Ս. Հակոբ Մծբնեցի, հակաօդային պաշտպանության զորամասի Ս. Սարգիս, Ս. Մինաս, Սրբոց Նահատակաց, Ս. Սարգիս, Անուշավանի Ս. Վարդան, Արթիկի ՔԿՀ-ի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Գտաշենի Ս. Կարապետ, Եղնաջրի Ս. Սարգիս, Ջույգաղբյուրի Ս. Խաչ, Լեռնակերտի Սրբոց Վարդանանց, Կաքավասարի Ս. Նարեկ, Կրասարի Ս. Բարսեղ, Հայկավանի Ս. Խաչ Ավետարան, Ղարիբջանյանի Ս. Հոգի, Շիրակավանի Ս. Աստվածածին, Սպանդարյանի Ս. Ամենափրկիչ, Ոս-

կեհասկի Ս. Նարեկ եւ Ս. Ոսկեկող Ավետարան։ Հոդվածում անդրադարձել ենք վերոհիշյալ եկեղեցիների ու մատուռների ճարտարապետական ձեւերին, կառուցման պատմությանն ու հարակից այլ հարցերի։

1991 թ. հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիներին վերելքի նոր շրջան ապրեց։ ՀՀ մարզերում եւ քաղաքամայր Երեւանում կառուցվեցին նոր եկեղեցիներ։ Անմասն չմնաց նաեւ Շիրակի մարզը։

Գյումրիի Սուրբ Հռիփսիմե եկեղեցի

1988 թ. դեկտեմբերի 7-ի՝ Հայաստանի տարածքի շուրջ 40%-ն ընդգրկած աղետալի երկրաշարժի հետեւանքով զոհվեցին հազարավոր մարդիկ, ավերվեց հանրապետության ամբողջ բնակմակերեսի շուրջ 17%-ը, դադարեց գործելուց մոտ 170 արդյունաբերական ձեռնարկություն, մեծ վնաս կրեցին բնակավայրերն ու գյուղատնտեսական եւ արդյունաբերական համալիրը։ Ամբողջովին կամ մասամբ ավերվեցին նաեւ պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ եւ արվեստի ստեղծագործություններ, տուժեց շուրջ 917 կրթօջախ[1]։ Տարերային աղետը ծանր ու անամոք կորուստներ պատճառեց նաեւ հանրապետության՝ մեծությամբ երկրորդ քաղաքին՝ Գյումրիին։

Արհավիրքից դեպի վերածնունդ ընթացող Գյումրիում կառուցված առաջին պաշտամունքային կառույցը Սուրբ Հռիփսիմե եկեղեցին է[2], որի շինարարությունն սկսվել է 1991 թ., ավարտվել 1992 թ.։ Արտաքնապես

---

[1] *1988-ի Սպիտակի երկրաշարժի մասին տե՛ս* http://www.nssp-gov.am/spitak.htm։

[2] *Ամենայն հավանականությամբ՝ կառույցի համեստ չափերը նկատի ունենալով՝ Սուրբ Հռիփսիմեն համարում են մատուռ, ոչ թե եկեղեցի։ Մատուռները (վկայարաններ) քրիստոնեական պաշտամունքային կառույցներ են, որոնք ստեղծվում են վկայի՝ մարտիրոսի, նահատակի գերեզմանի կամ մասունքների վրա։ Մատուռները, ըստ էության, պարզ հորինվածքով փոքրաչափ եկեղեցիներ են՝ ուղղանկյուն հատակագծով, թաղածածկ, երկթեք կտուրով, որոնք հաճախ կառուցվել են բնակավայրերում, ճանապարհների, աղբյուրների ակունքների մոտ, գերեզմանատներում, վանական համալիրներում։ Հետագայում մատուռ են անվանել ընդհանրապես փոքրածավալ եկեղեցիները, սակայն իրականում մատուռի եւ եկեղեցու տարբերությունը ոչ թե մեծությունն է, չափերը, այլ մատուռի հիմքերն օրհնված եւ օծված քարերով նվիրագործված չլինելը։ Մատուռներ են կոչվում նաեւ եկեղեցիների օծված ավանդատները, որոնք պատարագամատույց անշարժ սեղան ունեն։ Տե՛ս* Մաղաքիա արք. Օրմանեան, *Ծիսական բառարան, Անթիլիաս—Լիբանան, 1979, էջ 157—158. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 696։*

եւ ճարտարապետական հորինվածքով հայկական եկեղեցական շինություններից տարբերվող, ավստրիական կաթոլիկ եկեղեցիների նմանությամբ կառուցված այս եկեղեցին ունի ուղղանկյուն հատակագիծ, չորս ուղղանկյուն սյուներով շքամուտք, կարմիր կղմինդրե տանիք։ Շքամուտքը, որից բացվում է դեպի աղոթասրահ տանող դուռը, տանիքին ունի փոքրիկ զանգաշտարակով սոխուկանման գմբեթ։ Եկեղեցին լուսավորվում է հյուսիսային եւ հարավային պատերին գտնվող երեքական լուսամուտներով։ Պարզ հորինվածքով Ս. Հռիփսիմե եկեղեցին զարդարում են սուրբ Տիրամոր, սուրբ Միքայել հրեշտակապետի, սրբոց Գայանյանց կույսերի եւ սուրբ Հռիփսիմեի բարձրաքանդակները[3]։

Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ Տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանը Գյումրիի Ավստրիական թաղամասում գտնվող Ս. Հռիփսիմե եկեղեցու ուխտի օր է հռչակել Հոգեգալստյան տոնին հաջորդող երկուշաբթի օրը՝ «Տօն Սրբոց Կուսանացն Հռիսիմեանց», որը Հայ Առաքելական Եկեղեցին տոնում է Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնի նախընթաց երկուշաբթի օրը (կամ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Խորվիրապից տոնին նախորդող երկուշաբթի օրը)։ Այդ օրը Ս. Հռիփսիմե եկեղեցում մատուցվում է ուխտի սուրբ եւ անմահ պատարագ[4]։

Գյումրիի Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի

Հայաստանի Երրորդ Հանրապետության փառահեղ եկեղեցական կառույցներից է Գյումրիի Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցին, որի շինարարությունն ավարտվել է 2002 թ. եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ձեռամբ օծվել 2002 թ. օգոստոսի 29-ին։ Եկեղեցին կառուցվել է ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգի Խթոն քաղաքի բնակիչներ Սարգիս եւ Բաբի Հակոբյան ամուսինների բարերարությամբ[5]։ Խաչաձեւ կենտ-

---

[3] *Տե՛ս* Գ. Նավասարդյան, *Գյումրի քաղաքի հայկական եկեղեցիների ճարտարապետությունը (հատված դիպլոմային աշխատանքից),* http://deesim.blogspot.com/2014/07/blog-post_5593.html։

[4] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *Հռիփսիմե մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի... ուխտի սուրբ պատարագ Սուրբ Հռիփսիմե մատուռում, Ս. Յոթ Վերք, Ժ. տարի, թիվ 6 (114), հունիս, 2009,* http://yotverk.am/datei/090631/s090603.htm. *նույնի՝ «Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր Փեսային, դատերք Վերին Սիոնի...». ուխտի սուրբ պատարագ Սուրբ Հռիփսիմե մատուռում, Ս. Յոթ Վերք, ԺԲ. տարի, թիվ 6 (138), հունիս, 2011.* http://www.yotverk.am/datei/110631/s110605.htm։

[5] *Տե՛ս* Մ. Մարտիրոսյան, Վ. Սարուխանյան, *Շիրակի նոր եկեղեցիները. «սիրուն ժամից» մինչեւ բանտի աղոթատուն.* https://hetq.am/hy/article/73775։

րոնագմբեթ հորինվածքով Ս. Հակոբ Մծբնեցի եկեղեցին նախագծել է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը[6], հոյակերտ քանդակները հեղինակել է Գետիկ Բաղդասարյանը, իսկ շինարարական աշխատանքները ղեկավարել՝ Մկրտիչ Լամբարյանը։ Ընդարձակ աղոթասրահով եկեղեցու գլխավոր մուտքն արեւմտյան, մյուս մուտքը հարավային կողմից է։ Եկեղեցուն մի առանձին վեհություն են հաղորդում վեղարն ու 16-նիստանի թմբուկով գմբեթը։ Առաջին հարկում խաչաթեւերն ու անկյունային չորս ավանդատներն են, երկրորդ հարկում՝ խաչաթեւերը միացնող անկյունային սենյակները, որոնք որպես վերնատուն են ծառայում, իսկ երրորդ հարկում երեք հարկ միասնական բարձրացող գմբեթածածկ կենտրոնական շրջանաձեւ աղոթասրահն է։ Ուշագրավ է նաեւ եկեղեցու գետնահարկը, որը նախատեսված է բազմամարդ հավաքների ու հանդիսությունների համար։

Եկեղեցու տարածքում 2010 թ. տեղադրվել է երկրաշարժի զոհերին նվիրված հուշակոթող (քանդակագործ՝ Զավեն Կոշտոյան)[7]։

Ամեն տարի Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի տոնի[8] առիթով Գյումրիի նույնանուն եկեղեցում մատուցվում է սուրբ եւ անմահ պատարագ։ Տարիներ առաջ Մծբին քաղաքից՝ Սուրբ Հակոբ Մծբնեցու մասունքների վրա կառուցված եկեղեցուց, Տ. Միքայել եպս. Աջապահյանը բերել եւ Գյումրիի Ս. Հակոբ Մծբնեցի եկեղեցուն է նվիրել քարեր[9]։

Գյումրիի Սուրբ Սարգիս մատուռ

Շիրակի մարզի նորակերտ քրիստոնեական պաշտամունքային կառույցներից է Գյումրիի Սուրբ Սարգիս մատուռը, որը կառուցվել է նշանա-

---

[6] *Ճարտարապետ Բ. Արզումանյանի կյանքն ու գործունեությունը հանգամանալից ներկայացված են հետեւյալ աշխատության մեջ՝* Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Նորօրյա Ոսկեձեռիկը. Ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի կյանքն ու ստեղծագործական վաստակը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004։*

[7] *Տե՛ս* Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, *Գյումրի քաղաքի հայկական եկեղեցիների ճարտարապետությունը (հատված դիպլոմային աշխատանքից), Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի.* http://deesim.blogspot.com/2014/07/blog-post_8.html։

[8] *Հայ Առաքելական Եկեղեցին սուրբ Հակոբ Մծբնեցի Հայրապետի, Մարուգե ճգնավորի եւ Մելիտոս եպիսկոպոսի հիշատակը տոնախմբում է Հիսնակաց երրորդ կիրակին հաջորդող շաբաթ օրը (Հիսնակաց նշանակում է հիսունօրյա պահք։ Սուրբ Ծննդյանը նախորդող այս հիսնակը, որի միջակայքում է գտնվում «Սուրբ Հակոբի շաբաթապահք»-ը, սկսվում է նոյեմբերի 18-ի մերձակա կիրակիից հետո)։*

[9] *Տե՛ս* Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, *Նշվեց Սուրբ Հակոբի տոնը նույնանուն եկեղեցում, Ս. Յոթ Վերք, ԺԹ. տարի, թիվ 12 (224), դեկտեմբեր, 2018.* http://www.yotverk.am/datei/181231/s181209.htm։

վոր Սեւ ղուլից քիչ հեռու՝ նախկին մանկական երկաթուղու տարածքում։ Սուրբ Սարգիսը համեստ չափերով, միախորան, խաչաձեւ կենտրոնագմբեթ պարզ կառույց է։ Միակ մուտքն արեւմտյան կողմից է։ Մատուռը լուսավորվում է թմբուկի չորս եւ արեւմտյան ու արեւելյան կողմերին բացված երկուական նեղ, երկարավուն, քանդակազարդ պսակներով լուսամուտներով։ Մատուռը նախագծել է ճարտարապետ Ռաֆիկ Եղոյանը, իսկ կառուցումը հովանավորել է բարերար Արտաշես Սարգսյանը[10]։ Մատուռի հիմնարկեքը տեղի է ունեցել 2005 թ.[11], իսկ օծման հանդիսավոր արարողությունը՝ 2011 թ. փետրվարի 19-ին՝ Ս. Սարգիս Զորավարի տոնին[12]։

Գյումրիի հակաօդային պաշտպանության զորամասի Սուրբ Սարգիս մատուռ

Շիրակի մարզի հաջորդ նորակառույց սրբավայրը Գյումրիի հակաօդային պաշտպանության զորամասի Սուրբ Սարգիս մատուռն է, որը կառուցվել է ժամկետային զինծառայողներ Սարգիս Ասատրյանի եւ Թորգոմ Խաչատրյանի նախաձեռնությամբ եւ նրանց ծառայակից ընկերների ու ծնողների աջակցությամբ։ 2012 թ. ապրիլի 12-ին տեղի է ունեցել Ս. Սարգիս զորամասային մատուռի հիմնարկեքի արարողությունը[13]։ Նույն թվականի հոկտեմբերի 29-ին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանն ու բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը մատուռն օծել են[14]։

Գյումրիի Սուրբ Մինաս մատուռ

Մարզի հաջորդ նորակառույց աղոթատունը Գյումրիի Ս. Մինաս մատուռն է։ Կարմիր սրբատաշ տուֆով կառուցված մատուռը խաչաձեւ

---

[10] *Տե՛ս* Գ. Նավասարդյան, *Գյումրի քաղաքի հայկական եկեղեցիների ճարտարապետությունը (հատված դիպլոմային աշխատանքից), Գյումրու Սբ Սարգիս մատուռը.* http://deesim.blogspot.com/search/label/Սբ. Սարգիս մատուռ։

[11] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *«Եթէ ոչ տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինօղք նորա». օծվեց Սուրբ Սարգիս մատուռը. Ս. Յոթ Վերք, ԺԲ. տարի, թիվ 2 (134), փետրվար, 2011.* http://www.yotverk.am/datei/110231/s110219.htm։

[12] *Տե՛ս «Օծվեց Գյումրու Սբ Սարգիս մատուռը».* https://armenpress.am/arm/news/640975.html։

[13] *Տե՛ս «Զորամասային Ս. Սարգիս մատուռի հիմնարկեք».* https://ter-hambardzum.do.am/news/2012-04-20-1016։

[14] *Տե՛ս* Հ. Մոսինյան, *Օծվեց զորամասի մատուռը, Ս. Յոթ Վերք, ԺԳ. տարի, թիվ 10 (154), հոկտեմբեր, 2012 կամ* http://www.yotverk.am/datei/121031/s121011.htm։

կենտրոնագմբեթ հորինվածք ունի, հարավային պատին կա շինարարական արձանագրություն[15]։ Մուտքն արեւմտյան կողմից է։ Օծվել է 2013 թ. դեկտեմբերի 3-ին՝ սուրբ Մինասի հիշատակության օրը։ Մատուռը կառուցվել է ճարտարապետ Մաքսիմ Եշիլբաշյանի նախագծով եւ ՌԴ Խաբարովսկ քաղաքում բնակվող գործարար, ծնունդով գյումրեցի Սամվել Սողոյանի բարերարությամբ[16]։

Գյումրիի Սրբոց Նահատակաց եկեղեցի

Գյումրիի Սրբոց Նահատակաց նորակառույց եկեղեցին Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելյան Եւրոպայի հայ կաթողիկեների առաջնորդանիստ եկեղեցին է, որը հիմնադրվել է Սուրբ Խաչ անվամբ[17]։ Շինարարական աշխատանքներն սկսվել են 2010 թ.՝ առաքելական պատվիրակ նշանակված Տ. Վահան ծ. վրդ. Օհանյանի օրոք՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, ՀՀ կառավարության աջակցությամբ եւ ավարտվել 2015 թ. սեպտեմբերին։ Եկեղեցու շինարարական աշխատանքները շարունակել եւ ավարտին է հասցրել 2011 թվականից թեմի առաջնորդի պաշտոնն ստանձնած Գերաշնորհ Տեր Ռաֆայել արքեպս. Մինասյանը։ Նրա որոշմամբ՝ որպես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանիշ եւ ի նշան նահատակների անմար հիշատակի՝ եկեղեցին օծվել է Սրբոց Նահատակաց անունով[18]։

---

[15] *Տե՛ս* Ա.Լ. ԿԱՂՋՎԱՆՅԱՆ, *«Խոստովան եղիցուք անուան Քում սրբոյ եւ պարծեսցուք յօրհնութիւնս Քո». ուխտի սուրբ պատարագ Ս. Մինաս մատուռում, Ս. Յոթ Վերք, ԺԵ. տարի, թիվ 12 (180), դեկտեմբեր, 2014 կամ* http://www.yotverk.am/datei/141231/s141209.htm. *նույնի՝ «Խոստովան եղիցուք անուան Քում սրբոյ եւ պարծեսցուք յօրհնութիւնս Քո». ուխտի սուրբ պատարագ Ս. Մինաս մատուռում, Ս. Յոթ Վերք, ԺԹ. տարի, թիվ 12 (224), դեկտեմբեր, 2018 կամ* http://yotverk.am/datei/181231/s181205.htm. *նույնի՝ «Ոչ միայն ի Նա հաւատայ, այլեւ վասն Նորա չարչարիցէ». ուխտի սուրբ պատարագ Սուրբ Մինաս մատուռում, Ս. Յոթ Վերք, ԺԷ. տարի, թիվ 12 (204), դեկտեմբեր, 2016 կամ* http://www.yotverk.am/datei/161231/s161203.htm։

[16] *Տե՛ս* ԱՐԱՐԱՏ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ, *«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ...». ձեռամբ առաջնորդ սրբազանի օծվեց Սուրբ Մինաս եկեղեցին — Ս. Յոթ Վերք, ԺԴ. տարի, թիվ 12 (168), դեկտեմբեր, 2013 կամ* http://www.yotverk.am/datei/131231/s131205.htm։

[17] *Տե՛ս «Տեղի ունեցավ Գյումրիի Սուրբ Խաչ կաթոլիկ եկեղեցու հիմնարկեքը».* https://armenpress.am/arm/news/631750/arm/։

[18] *Տե՛ս «ՀՀ նախագահը Գյումրիում ներկա է գտնվել Հայ Կաթողիկե Սրբոց Նահատակաց եկեղեցու օծման»,* https://news.am/arm/news/287557.html. Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Սուրբ Նահատակաց եկեղեցի. ինչպես Հայաստանի կաթոլիկները Մայր տաճար ունեցան,* https://armeniasputnik.am/exclusive/20190203/17098850/gyumri-katolikner-trndez.html։

Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Հակոբ Ջիվանյանի նախագծով, շինարարական աշխատանքները ղեկավարել է Հակոբ Բաղդասարյանը, իսկ քանդակների հեղինակը Ռազմիկ Ավագյանն է[19]։ Սրբոց Նահատակաց եկեղեցու կառուցմանն աջակցել են Վատիկանի Սուրբ Աթոռի Արեւելյան Եկեղեցիների ժողովը, Իտալիայի կաթողիկե եպիսկոպոսների խորհուրդը, ԱՄՆ-ի կաթողիկե եպիսկոպոսների խորհուրդը, «Ռենովաբիս» բարեսիրական միջազգային կազմակերպությունը, Քյոլնի թեմը, «Church in Need» *կազմակերպությունը, «Աշխատանք Արեւելքում» միությունը, Հռոմի Լեւոնյան վարժարանը եւ Հռոմի Սուրբ Վլաս եկեղեցին։ Սրբոց Նահատակաց եկեղեցին ութանիստ եռահարկ զվարթնոցատիպ կառույց է, որի նավակատյաց հանդեսը կատարվել է 2015 թ. սեպտեմբերի 24-ին Հռոմի Սրբազան Պապի ներկայացուցիչ կարդինալ Լեոնարդո Սանդրիի (Արեւելյան Կաթողիկե Եկեղեցիների ժողովի նախագահ) եւ Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Գրիգոր Պետրոս Ի. հանդիսապետությամբ[20]։*

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում տեղադրվել է նահատակների հիշատակը հավերժացնող խաչքար[21]։

2016 թ. Հռոմի Ֆրանցիսկոս Պապը Գյումրիի Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ հայ կաթողիկե տաճարին խորհրդանշական քար է նվիրել, որը վերցված է Հռոմի Ս. Պետրոս Մայր տաճարի պատից[22]։ Պապի նվիրած քարը զետեղված էր Ս. Պետրոսի տաճարի պատին 2000 թ.՝ ձեռամբ Նորին Սրբություն Ս. Հովհաննես Պողոս Բ. Պապի։ Քարը Ս. Պետրոսի տաճարից վերցվել է Ողորմության հոբելյանական տարվա բացման առթիվ՝ 2015 թ. դեկտեմբերի 8-ին՝ Անարատ հղության տոնին։ Քարը նվիրվել է «որպես նշան սերտ հաղորդության Սրբազան Քահանայապե-

---

[19] *Տե՛ս* Գ. Նավասարդյան, *Գյումրի քաղաքի հայկական եկեղեցիների ճարտարապետությունը (հատված դիպլոմային աշխատանքից), Սբ Խաչ հայ կաթոլիկների եկեղեցի.* http://deesim.blogspot.com/2014/08/blog-post_77.html։

[20] *Տե՛ս «Օծվեց Գյումրիի Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ եկեղեցին»,* http://shirak.mtad.am/news/item/2015/09/24/katolik/. *Նաեւ՝ «Գյումրիում օծվեց Հայ կաթողիկե Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ եղեկեղեցին»,* https://www.youtube.com/watch?v=ef2iLHLjN0U, *«Օծվել է Հայ Կաթողիկե Սրբոց Նահատակաց աթոռանիստ եկեղեցին»,* https://www.youtube.com/watch?v=oX_xVN7mdOs։

[21] *Տե՛ս «ՀՀ նախագահը Գյումրիում ներկա է գտնվել Հայ Կաթողիկե Սրբոց Նահատակաց եկեղեցու օծմանը»,* https://news.am/arm/news/287557.html, *նաեւ՝ «Գյումրիում օծվել է Հայ Կաթողիկե Սրբոց Նահատակաց եկեղեցին»,* https://mediamax.am/am/news/society/15475/։

[22] *Տե՛ս «Հռոմի Պապը միության խորհրդանիշ քար է նվիրել Գյումրիի Սրբոց Նահատակաց եկեղեցուն»,* http://1lur.am/am/archives/250908։

տի հետ, որը հաջորդն է Պետրոս առաքյալի, եւ որպես մասնակցություն հոգեւոր շնորհների հոբելյանական տարվա»[23]։ Խորհրդանշական քարն ագուցվելու էր Գյումրիի Սրբոց Նահատակաց եկեղեցու պատին։

Անուշավանի Սրբոց Վարդանանց (Սուրբ Վարդան) մատուռ

Անուշավան գյուղի Սրբոց Վարդանանց (Սուրբ Վարդան) մատուռը գտնվում է գյուղամիջում։ Մատուռը կառուցվել է 2009 թ. Մոսկվայում բնակվող Արտաշես Հարությունյանի եւ Աբգար Մկրտչյանի նախաձեռնությամբ եւ տրամադրած միջոցներով։ Մատուռի օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 2009 թ. մայիսի 7-ին[24]։

«Արթիկ» ՔԿՀ-ի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Հառիճ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2010 թ. մայիսի 13-ին՝ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ձեռամբ եւ ընթերակայությամբ Հառիճավանքի վանահայր Տ. Կորյուն աբեղա Առաքելյանի ու Լմբատավանքի հոգեւոր հովիվ Տ. Լեւոն քահանա Հովհաննիսյանի[25]։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցվել է ՔԿՀ-ի վարչակազմի նախաձեռնությամբ եւ դատապարտյալների գործուն մասնակցությամբ[26]։ Եկեղեցու կառուցման գործում մեծ ներդրում է ունեցել ՔԿՀ-ի նախկին պետ, արդարադատության գնդապետ Վարդան Սարգսյանը[27]։ Եկեղեցու քանդակագործն է Տիգրան Հակոբյանը։ Եկեղեցին ունի մեկ մուտք, յուրաքանչյուր խաչաթեւի ճակատային մասում՝ մեկական նեղ, երկարավուն

---

[23] *«Հռոմի Ֆրանցիսկոս պապը միության խորհրդանիշ քար է նվիրել Գյումրիի Սրբոց Նահատակաց եկեղեցուն»,* https://shabat.am/am/article/33836/Hromi-Franciskos-Papy-miutyan-khorhrdanish, https://www.panorama.am/am/news/2016/03/08Հռոմի-Պապ/1541268?fbclid=IwAR2l6DDU6OZIiacRjIQ3JwHgqWacsfL87v_YWzawlsQmmJ6UfyQhi73Lew4։

[24] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *«Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն Նորա ի բերան իմ». եպիսկոպոսական սուրբ պատարագ Անուշավանում, Ս. Յոթ Վերք, ԺԳ. տարի, թիվ 6 (150), հունիս, 2012.* http://yotverk.am/datei/120631/s120608.htm։

[25] *Տե՛ս* Լ. Յուզբաշյան, *Մատուռի հիմնարկեք «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում, Ս. Յոթ Վերք, ԺԱ. տարի, թիվ 5 (125), մայիս, 2010.* http://www.yotverk.am/datei/100531/s100502.htm։

[26] *Տե՛ս «Արթիկ ՔԿՀ-ի կալանավորներն իրենց միջոցներով եկեղեցի են կառուցելու»,* https://news.am/arm/news/66103.html:

[27] Մ. Մարտիրոսյան, Վ. Սարուխանյան, *Շիրակի նոր եկեղեցիները. «սիրուն ժամից» մինչեւ բանտի աղոթատուն,* https://hetq.am/hy/article/73775։

լուսամուտ։ Հյուսիսային կողմում զանգակատունն է, իսկ հարավային կողմում՝ մոմավառության սրահը։ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին օծվել է 2010 թ. դեկտեմբերի 11-ին[28]։

Գտաշենի Սուրբ Կարապետ եկեղեցի

Մարզի հաջորդ նորակառույց եկեղեցին Գտաշենի Ս. Կարապետն է, որի հիմնարկեքի արարողությունը կատարել է 2010 թ. դեկտեմբերի 6-ին[29]։ Մոսկվայում հաստատված ջավախեցի գործարար Կարապետ Պողոսյանի բարերարությամբ եկեղեցին կառուցվել է 2011 թ.։ Վարդագույն սրբատաշ տուֆով կառուցված եկեղեցին միանավ բազիլիկ է՝ քառասյուն փոքրիկ գմբեթով. միակ մուտքն արեւմտյան կողմում է։ Հյուսիսային, հարավային եւ արեւմտյան ճակատներում կան մեկական նեղ, երկարավուն լուսամուտներ։ Ս. Կարապետ եկեղեցին հանդիսավորապես օծվել է 2011 թ. սեպտեմբերի 3-ին[30]։

Եղնաջրի Սուրբ Սարգիս եկեղեցի

Եղնաջրի Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է 2006 թ. «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի բարերարությամբ[31]։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ Ս. Սարգիս եկեղեցու մուտքն արեւմտյան կողմից է։ Եկեղեցին լուսավորվում է խաչաթեւի հյուսիսային եւ հարավային ճակատների մեկական նեղ, երկարավուն եւ գմբեթի թմբուկի լուսամուտներով։ Ս. Սարգիս եկեղեցին օծվել է 2007 թ. օգոստոսի 8-ին[32]։

---

[28] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *«Նորոգող հնութեանց, նորոգեա՛ եւ զիս, նորոգ զարդարեա՛». օծվեց «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի մատուռը, Ս. Յոթ Վերք, ԺԱ. տարի, թիվ 12 (132), դեկտեմբեր, 2010.* http://www.yotverk.am/datei/101231/s101204.htm. *տե՛ս նաեւ* https://armenpress.am/arm/news/632207։

[29] *«Մատուռի հիմնարկեք Գտաշենում», Ս. Յոթ Վերք, ԺԱ. տարի, թիվ 10 (130), հոկտեմբեր, 2010.* http://www.yotverk.am/datei/101031/s101003.htm։

[30] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *«Եղիցի ձեռն Քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս Քո ընտրեցի». օծվեց Գտաշեն գյուղի Սուրբ Կարապետ մատուռը, Ս. Յոթ Վերք, ԺԲ. տարի, թիվ 9 (141), սեպտեմբեր, 2011.* http://www.yotverk.am/datei/110931/s110907.htm. *նույնի՝ «Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ Հայրդ, գթած...». սուրբ պատարագ Գտաշենի Սուրբ Կարապետ մատուռում, Ս. Յոթ Վերք, ԺԸ. տարի, թիվ 3 (207), մարտ, 2017,* http://yotverk.am/datei/170331/s170301.htm։

[31] *Տե՛ս ««ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ», «Հաշվետվություն 1997—2017», էջ 28.* http://kasa.am/wp-content/uploads/2015/12/KASA_report_arm.pdf։

[32] *Տե՛ս* Լ. Գրիգորյան, *Ամառը Եղնաջուրի ճամբարում, Ս. Յոթ Վերք, Ը. տարի, թիվ 8 (92), օգոստոս, 2007.* http://www.yotverk.am/datei/070831/s070804.htm։

Զույգաղբյուրի Սուրբ Խաչ եկեղեցի

Զույգաղբյուրի Ս. Խաչ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվել է 2007 թ.։ Նորակերտ խաչաձեւ կենտրոնագմբեթ եկեղեցին կառուցվել է ծագումով զույգաղբյուրցի Վոլոդյա Մաթեւոսյանի բարերարությամբ։ Ս. Խաչ եկեղեցին օծվել է 2008 թ. հունիսի 28-ին[33]*։*

Լեռնակերտի Սուրբ Վարդան (Սրբոց Վարդանանց) եկեղեցի

Լեռնակերտ գյուղի մուտքը զարդարող Ս. Վարդան (Սրբոց Վարդանանց) եկեղեցու կառուցումը նախաձեռնել եւ իրագործել է Եկատերինբուրգում հաստատված լեռնակերտցի գործարար Գագիկ Հովհաննիսյանը։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցին կառուցվել է 2005—2006 թթ.[34]*։ 2006 թ. հոկտեմբերի 28-ին*[35] *օծվել է Ս. Վարդան եկեղեցու խաչը, իսկ 2007 թ.՝ եկեղեցին*[36]*։*

Կաֆավասարի Սուրբ Նարեկ եկեղեցի

Շիրակի մարզի նորակառույց Ս. Նարեկ եկեղեցու շինարարական աշխատանքները սկսվել են 2008 թ. օգոստոսի 23-ին եւ ավարտվել նույն թվականի հոկտեմբերի 30-ին[37]*։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցու կառուցումը հովանավորել է ծնունդով կաքավասարցի, արդարադատության գեներալ-մայոր Աշոտ Մարտիրոսյանը։ Ս. Նարեկ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 2009 թ. օգոստոսի 1-ին։*

---

[33] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *Զույգաղբյուրում օծվեց Սուրբ Խաչ մատուռը, Ս. Յոթ Վերք, Թ. տարի, թիվ 7 (103), հուլիս, 2008.* http://www.yotverk.am/datei/080731/s080703.htm, *նույնի՝ «Ուղիղ եղիցին աղաչանք մեր որպես խունկ առաջի քո, Տէր». եպիսկոպոսական սուրբ պատարագ Զույգաղբյուրում, Ս. Յոթ Վերք, ԺԷ. տարի, թիվ 9 (201), սեպտեմբեր, 2016.* http://www.yotverk.am/datei/160931/s160901.htm։

[34] *Տե՛ս* Լ. Սողոյան, *Լեռնակերտի 4—5-րդ դարերի բազիլիկ եկեղեցին արդեն զանգակատուն ունի,* https://hetq.am/hy/article/78330։

[35] *«Օծվեցին Ս. Սարգիս եւ Ս. Վարդան մատուռների խաչերը», «Ս. Յոթ Վերք», Է. տարի, թիվ 10 (82), հոկտեմբեր, 2006.* http://www.yotverk.am/datei/061031/s061004.htm։

[36] *Տե՛ս* Մ. Վարդանյան, *«Հայի մեր պարտքն է օրերից վեր թեւել, պատմություն կերտել եւ դառնալ հավերժի ճամփորդ», Ս. Յոթ Վերք, Ը. տարի, թիվ 12 (96), դեկտեմբեր, 2007.* http://www.yotverk.am/datei/071231/s071202.htm։

[37] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *Օծվեց Կաքավասարի Սուրբ Նարեկ մատուռը, Ս. Յոթ Վերք, Ժ. տարի, թիվ 8 (116), օգոստոս, 2009.* http://www.yotverk.am/datei/090831/s090807.htm, *նույնի՝ «Գոտայ այնոցիկ, որ զԻսն ոչ խնդրէին եւ յայտնի եղէ այնոցիկ, որ զԻսն ոչ ճանաչէին». եպիսկոպոսական սուրբ պատարագ Կաքավասարում, Ս. Յոթ Վերք, ԺԱ. տարի, թիվ 1 (121), հունվար, 2010.* http://www.yotverk.am/datei/100131/s100107.htm։

Կրասարի Սուրբ Բարսեղ եկեղեցի

Կրասարի Ս. Բարսեղ եկեղեցին կառուցվել է Գառնիկ, Գագիկ, Տարոն եւ Տավրոս Պապիկյանների բարերարությամբ։ Կարմիր սրբատաշ տուֆով կառուցված եւ քառանկյուն սյուներով երեք նավերից բաղկացած սրահի (բազիլիկ) հորինվածքով եկեղեցուն արեւմտյան կողմից կից է զանգակատունը, որն ունի ութսյունանի բոլորաշեն գմբեթ։ Եկեղեցու մուտքն արեւմտյան կողմից է։ Հարավային ճակատին կան երեք նեղ, երկարավուն լուսամուտներ. եւս երկու լուսամուտներ կան դռան աջ ու ձախ կողմերին։ Կրասարի Ս. Բարսեղ եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը կատարվել է 2016 թ. օգոստոսի 17-ին[38], իսկ օծման հանդիսավոր արարողությունը՝ 2017 թ. հուլիսի 29-ին[39]։

Հայկավանի Սուրբ Խաչ Ավետարան եկեղեցի

Մարզի հաջորդ նորակառույցը Հայկավանի Ս. Խաչ Ավետարան եկեղեցին է, որը կառուցվել է 2008 թ. Աբրահամ եւ Սպարտակ Խաչատրյան եղբայրների բարերարությամբ։ Ս. Խաչ Ավետարան եկեղեցին խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածք ունի։ Մուտքն արեւմտյան կողմից է։ Հյուսիսային եւ հարավային ճակատներին կան մեկական նեղ, երկարավուն լուսամուտներ։ Հայկավանի Ս. Խաչ Ավետարան եկեղեցին օծվել է 2008 թ. նոյեմբերի 15-ին[40]։

Ղարիբջանյանի Սուրբ Հոգի եկեղեցի

Մարզի նորակառույցներից է Ղարիբջանյանի Ս. Հոգի եկեղեցին, որը կառուցվել է 2008 թ. Սամվել Տոնոյանի բարերարությամբ՝ ի հիշատակ իր վաղամեռիկ կնոջ՝ Սաթենիկ Տոնոյանի։ Եկեղեցին նախագծել է «Երանգ» ՍՊԸ

---

[38] *Տե՛ս* Սամվել Սարկավագ Սարգսյան, *Հիմնարկեքի արարողություն Կրասար համայնքում, Ս. Յոթ Վերք, ԺԷ. տարի, թիվ 8 (200), օգոստոս, 2016.* http://www.yotverk.am/datei/160831/s160804.htm։

[39] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *Ապաշխարենք կառուցելով. Կրասար գյուղում օծվեց Սուրբ Բարսեղ եկեղեցին, Ս. Յոթ Վերք, ԺԸ. տարի, թիվ 7 (207), հուլիս, 2017.* http://www.yotverk.am/datei/170831/s170801.htm, *տե՛ս նաեւ* Ա. Մխոյան, *Կրասար գյուղը նոր եկեղեցի ունի.* https://armenpress.am/arm/news/900282/krasar-gyuxy-nor-ekexeci-uni.html. *«Կրասարը նոր եկեղեցի ունի».* http://shirak.mtad.am/news/item/2017/07/29/krasarek/, https://www.youtube.com/watch?v=HGB_T0TNn90&feature=emb_logo։

[40] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *Հայկավանում օծվեց Սուրբ Խաչ եկեղեցին, Ս. Յոթ Վերք, Թ. տարի, թիվ 11 (107), նոյեմբեր, 2008.* http://yotverk.am/datei/081131/s081104.htm։

տնօրեն Անատոլի Դոգուզովը[41]։ Ղարիբջանյանի Ս. Հոգի եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարել է 2007 թ. մայիսի 4-ին[42], իսկ օծման հանդիսավոր արարողությունը՝ 2013 թ. օգոստոսի 31-ին[43]։ Ս. Հոգի եկեղեցին խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածքով կառույց է։ Մուտքն արեւմտյան կողմից է։ Եկեղեցին լուսավորվում է խաչաթեւի հյուսիսային եւ հարավային ճակատների մեկական նեղ, երկարավուն եւ գմբեթի թմբուկի լուսամուտներով։

Նշենք, որ հայ իրականության մեջ շատ չեն Սուրբ Հոգի անունով եկեղեցիները։ Այս անունով եկեղեցիներ են հիշատակված Կիլիկիայում՝ Սիս մայրաքաղաքում, Գոշավանքի համալիրի կազմում մի փայտաշեն եկեղեցի, որը չի պահպանվել, եւ 1714 թվականից Ամստերդամում հիշատակվող եւ այժմ էլ գործող հայկական եկեղեցին։

Շիրակավանի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Շիրակավանը վաղուց եկեղեցի ունեցել է։ Սակայն Ախուրյանի ջրամբարի կառուցման հետեւանքով, երբ գյուղը տեղափոխեցին, եկեղեցին միայնակ, առանց աղոթքի ու աղոթողի է մնացել, դարձել «արտասվող» եկեղեցի, հետո անցել ջրի տակ։ Պատմում են, որ մի օր սահմանապահները եկել հայտնել են, թե ջրի տակից լույս է ճառագում։ Գյուղից ու այլ բնակավայրերից շատերն են գնացել ու տեսել այդ իրական հրաշքը. ջրի տակից վառ լույս էր արձակվում՝ հենց նույն տեղից, որտեղ եկեղեցու խորանն էր։ Հետագայում եկեղեցու բոլոր քարերը մեկ առ մեկ դուրս են բերվել՝ նոր եկեղեցի կառուցելու նպատակով[44]։

Շիրակավանի Ս. Աստվածածին եկեղեցին 2016 թ. կառուցվել է Մոսկվայում հաստատված, ծնունդով շիրակավանցի Արթուր, Վահան եւ Արման Թավրիզյան եղբայրների բարերարությամբ ու համայնքապետ Մարատ Մկրտչյանի ջանքերով՝ ի հիշատակ բարերարների հոր՝ Ստյոպա Թավրիզյանի։ Եկեղեցին նախագծել է ճարտարապետ Ռաֆայել Եղոյանը։ Եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվել է 2015 թ. հունիսի

---

[41] *Տե՛ս* Մ. Մարտիրոսյան, Վ. Սարուխանյան, *Շիրակի նոր եկեղեցիները. «սիրուն ժամից» մինչեւ բանտի աղոթատուն.* https://hetq.am/hy/article/73775։

[42] *Տե՛ս «Հիմնարկեք Ղարիբջանյան գյուղում», Ս. Յոթ Վերք, Ը. տարի, թիվ 5 (89), մայիս, 2007.* http://www.yotverk.am/datei/070531/s070505.htm։

[43] *Տե՛ս* Ալ. Կաղզվանցյան, *«Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ». Ղարիբջանյանում օծվեց Սուրբ Հոգի եկեղեցին, Ս. Յոթ Վերք, ԺԴ. տարի, թիվ 9 (165), սեպտեմբեր, 2013.* http://www.yotverk.am/datei/130931/s130903.htm։

[44] *Տե՛ս «Լույս արձակող եկեղեցին»,* https://armeniasputnik.am/society/20160604/3745359.html։

4-ին[45]։ Ս. Աստվածածին եկեղեցին երկու սյունաշարով բաժանված քառանկյունի սրահ է (բազիլիկ հորինվածք), կառուցված է կարմիր ու սեւ սրբատաշ քարերով, ունի երկու դուռ։ Հարավային կողմում կա մեծ կամարակապ երեք լուսամուտ, իսկ դռան աջ եւ ձախ կողմերում՝ եւս երկուսը, որոնք նեղ են ու երկարավուն։ Արեւմտյան կողմին կից է զանգակատունը, որի վրա բարձրանում է ութսյունանի բոլորաշեն գմբեթը։ 2016 թ. փետրվարի 6-ին Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանն օծել է եկեղեցու խաչը եւ զանգը[46], իսկ հունիսի 4-ին[47] կատարել Ս. Աստվածածին եկեղեցու նավակատյաց հանդեսը։

Սպանդարյանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի

Սպանդարյանի Ս. Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է 2001 թ.՝ համայնքի նախկին բնակիչ Արտուշ Մկրտչյանի եւ իր որդիների բարերարությամբ։ Պարսպապատման աշխատանքները կատարվել են Հովիկ Սարգսյանի հովանավորությամբ։ Ս. Ամենափրկիչ եկեղեցին օծվել է 2001 թ. նոյեմբերի 6-ին[48]՝ ձեռամբ Տեր Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի։ Ավելի ուշ Ակսել Ստեփանյանը, որը 2016 թ. եկեղեցու խաչքավորն էր, խաչ ու զանգ է նվիրել Ս. Ամենափրկիչ եկեղեցուն[49]։ Զանգն օծվել է 2016 թ. մայիսի 23-ին[50]։

---

[45] *Տե՛ս* Ա. ՄԽՈՅԱՆ, *Շիրակավան համայնքում եկեղեցի է կառուցվում.* https://armenpress.am/arm/news/807950.html. ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ, *Կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքի արարողություն Շիրակավան համայնքում, Ս. Յոթ Վերք, ԺԶ. տարի, թիվ 6 (186), հունիս, 2015.* http://www.yotverk.am/datei/150631/s150604.htm։

[46] *Տե՛ս* ԱՐԱՐԱՏ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Խաչի եւ զանգի օծում Շիրակավան համայնքում, Ս. Յոթ Վերք, ԺԷ. տարի, թիվ 2 (194), փետրվար, 2016.* http://www.yotverk.am/datei/160231/s160202.htm։

[47] *Տե՛ս* ԱԼ. ԿԱՂՋՎԱՆՅՅԱՆ, *«Տէր, բարւոք է մեզ աստ լինել». օծվեց Շիրակավանի նորակառույց եկեղեցին, Ս. Յոթ Վերք, ԺԷ. տարի, թիվ 6 (198), հունիս, 2016.* http://www.yotverk.am/datei/160631/s160603.htm. *«Շիրակավան համայնքում բացվեց «Սուրբ Աստվածածին» եկեղեցին»,* http://shirak.mtad.am/news/item/2016/06/04/sirakavan/. https://www.youtube.com/watch?v=oCBEPJlaCYg. https://www.youtube.com/watch?v=5Fe6KqxyoHc։

[48] *Տե՛ս «Գ. Հոգեւոր-եկեղեցական կյանք», Էջմիածին, Ա., 2002, էջ 32. Շիրակի թեմ—Էջմիածին, Ա., 2002, էջ 62.* http://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2002/2002(1).pdf։

[49] *Տե՛ս* Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, *Շիրակի նոր եկեղեցիները. «սիրուն ժամից» մինչեւ բանտի աղոթատուն,* https://hetq.am/hy/article/73775. *նաեւ՝ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու զանգի տեղադրումը,* https://www.youtube.com/watch?v=E2gOTYOBhJI։

[50] *Տե՛ս* ԼԵՒՈՆ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *Զանգի օծում Արթիկի թեմի Սպանդարյան համայնքում, Ս. Յոթ Վերք, ԺԷ. տարի, թիվ 5 (197), մայիս, 2016,* http://www.yotverk.am/datei/160531/s160506.htm։

Ոսկեհասկի Սուրբ Նարեկ եկեղեցի

Ոսկեհասկի Ս. Նարեկ եկեղեցին կառուցվել է Մոսկվայում բնակվող Մխիթարյան ընտանիքի բարերարությամբ։ Եկեղեցին, ձեռամբ Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Զուլչյանի, օծվել է 2005 թ. հուլիսի 10-ին[51] եւ իր հյուրընկալ դռներն է բացել բարեպաշտ հայորդիների առջեւ։

Ոսկեհասկի Սուրբ Ոսկեկող Ավետարան եկեղեցի

Ոսկեհասկի Ս. Ոսկեկող Ավետարան եկեղեցին կառուցվել է 2015 թ.՝ Վարդան Ասատրյանի բարերարությամբ։ Եկեղեցին կառուցվել է ընտանեկան սրբություն «Ոսկեկող Ավետարան»-ի[52] պատվին։ Ավետարանը տպագրվել է 1732 թ. Վենետիկում, ապա հայտնվել Մշո Ալվառինջ գյուղում, անցել գաղթի ճամփաներով, հասել Գյումրի, այնուհետեւ հանգրվանել Ոսկեհասկում։ Եկեղեցին նախագծել է ճարտարապետ Վարդան Շախուլյանը, իսկ շինարարական աշխատանքները ղեկավարել է Գուրգեն Մարտիկյանը[53]։ Ս. Ոսկեկող Ավետարան եկեղեցին ունի խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածք։ Կառուցվել է սրբատաշ դեղնավուն տուֆով։ Մատուռը մեծ հանդիսությամբ բացվել է 2017 թ. հունվարի 13-ին[54]։

Այսպիսով՝ 1991 թ. հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիներին՝ ունենալով Վեհափառ Հայրապետի օրհնանքն ու հոգածությունը մեր հավատքի հնօրյա եւ նորօրյա տաճարների հանդեպ։ Ժամանակակից հայ ճարտարապետներն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր հնարներ, լուծումներ ու մտահղացումներ, նորակառույց եկեղեցիները, այդ թվում նաեւ Շիրակի մարզի

---

[51] *Տե՛ս* Ա. Կաղզվանցյան, *Օծվեց Ոսկեհասկի Ս. Նարեկ մատուռը, Ս. Յոթ Վերք, Զ. տարի, թիվ 7 (67), հուլիս, 2005,* http://webcache.googleusercontent.com/search?q=cache:vS8zzB2euJgJ:www.yotverk.am/datei/050731/s050704.htm+&cd=2&hl=en&ct=clnk&gl=am։

[52] *Ավետարանի մասին տե՛ս «Ոսկեկող Ավետարան եկեղեցի (Ոսկեհասկ)» ֆիլմը (սցենարի հեղինակ եւ ռեժիսոր՝ Արթուր Էդար, գլխավոր օպերատոր՝ Մարտին Սուքիասյան).* https://www.youtube.com/watch?v=nAzbvAGbblQ։

[53] *Տե՛ս* Ռ. Ավագյան, *Ոսկեկող Ավետարան, Երեւան, 2017, էջ 12–13։*

[54] *Տե՛ս «Մատուռի բացման արարողություն Ոսկեհասկ գյուղում»,* http://shirak.mtad.am/news/item/2017/01/13/voske/. https://www.youtube.com/watch?time_continue=35&v=rQczsM30RaE&feature=emb_logo:

եկեղեցիները, գլխավորապես նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարյան եկեղեցական ճարտարապետության լավագույն ավանդները։

РЕЗЮМЕ

Архитектурная школа Ширака (Ани-Ширак) с ее талантливыми архитекторами, мастерами-строителями и мастерами хачкаров занимает поистине почетное место в истории средневекового армянского церковного зодчества. Представители этой архитектурной школы оставили свой бессмертный след в монастырях средневекового армянского церковного зодчества и подняли армянскую церковную архитектуру на новый уровень.

С 1991 года современные армянские архитекторы и мастера-строители, применяя новые технологии, решения и идеи, главным образом проектируют и строят новые церкви, в том числе храмы Ширакской области, сохраняя и развивая лучшие традиции средневековой армянской церковной архитектуры.

В рамках статьи мы попытались представить нововозведенные церкви и часовни Ширакской области Республики Армения (Св. Рипсиме в Гюмри, Св. Акопа Мцбнеци, Св. Саркиса в воинской части противовоздушной обороны, Св. Саркиса, Св. Минаса, Свв. Мучеников, Св. Вартана в Анушаване, Св. Григория Просветителя в Уголовно-исполнительном центре в Артике, Св. Иоанна Предтечи (Карапет) в Гташене, Св. Саркиса в Егнаджуре, Св. Креста в Зуйгагбюре, Свв. Вардананц в Лернакерте, Св. Нарека в Какавасаре, Св. Барсега в Красаре, Сурб Хач Аветаран в Айкаване, Св. Духа в Гарибджаняне, Пресвятой Богоматери в Ширакаване, Св. Всеспасителя в Спандаряне, Св. Нарека и Сурб Воскекох Аветаран в Воскехаске). В статье мы коснулись архитектурных форм вышеупомянутых церквей и часовен, истории строительства и связанных с этим других вопросов.

SUMMARY

In the history of the medieval Armenian church architecture, the architectural school of Shirak (Ani-Shirak), with its talented architects, master builders and khachkar (cross-stone) masters, has a truly honorable place. Representatives of this

architectural school left an ever-living memory in the medieval Armenian church architecture and raised it to a new level.

In 1991, in the newly independent Republic of Armenia, the Armenian church architecture experienced a revival, a new period of growth. So far, modern Armenian architects and master builders, applying new technologies, solutions and ideas, newly built churches, including the churches of Shirak province, have been mainly engaged in designing and building, by preserving and developing the best traditions of the medieval Armenian church architecture.

In this article we tried to present the newly built churches and chapels of Shirak province of Armenia, and touched upon their architectural forms, history of construction and other related issues.

ԷԼԵՆ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

ՈՂ ՄԻԱՅՆ ՀԱՅԻՒ...

«Ինքնաճանաչ, քրիստոնէական արժէքները կարեւորող, աստուածասէր եւ հայրենասէր սերունդ կրթելով՝ մենք պիտի զօրանանք, զարգանանք ու առաջադիմենք եւ ընթանանք դէպի մեր նուիրական նպատակների իրագործումը»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս

Պատմական իրողութիւն է, որ անաստուածութեան տարիները խզում էին առաջացրել Աստծու եւ մարդկային աստուածատեսք հոգու միջեւ: Փակուել կամ աւերուել էին նաեւ խօսքի ճանապարհները: Հա՛յը, որ իր արեան մէջ քրիստոնէութեան երկհազարամեայ յիշողութիւնն էր կրում, կորցնում էր իր Արարչի, իր պապերի, իր Եկեղեցու եւ պատմական անցեալի հետ կապը: Անհրաժեշտ էր հայ մարդու, հայ մանկան սրտում անթեղուած հոգեւոր կայծը բոցավառել...

2002 թուականի օգոստոսի 22-ին համաձայնագիր կնքուեց ՀՀ կառավարութեան եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ՝ ի դէմս ժամանակի վարչապետ Ա. Մարգարեանի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի[1]: Սոյն համաձայնագրով նախատեսւում էր ՀՀ հանրակրթական դպրոցներում ներդնել նոր առարկայ՝ Հայոց Եկեղեցու պատմութիւն: 2002 թուականի համաձայնագիրն ամրապնդւում է 2005 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ՀՀ ԿԳ նախարարի միջեւ կնքուած համաձայնագրով, ըստ որի՝ կարգաւորւում էին իւրաքանչիւր կողմի պարտականութիւններն ու աշխատանքները՝ կապուած ՀԵՊ առարկայի դասաւանդման հետ: 2005—2006 թթ. առարկան ընդգրկուեց հանրակրթական դպրոցների պետական պարտադիր ուսումնական ծրագրում՝ 10-ամեայ կրթական համակարգի 4—10-րդ դասարանների առարկայացանկում: Այժմ առարկան ընդգրկուած է 12-ամեայ կրթակարգի 5—11-րդ դասա-

[1] *Տե՛ս «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ»,* 1d Hamadzaynagir.doc (e-gov.am):

բանների առարկայացանկում։ 2005 թ. նոյեմբերի 16-ին Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ Երեւանի Առնօ Բաբաջանեանի անուան համերգասրահում տեղի ունեցաւ ՀՀ եւ Արցախի հանրակրթական դպրոցների 4—10-րդ դասարանների ՀԵՊ առարկայի դասագրքերի շնորհանդէսը։ Ամենայն Հայոց Հայրապետն այդ օրուայ իր ելոյթում իրաւամբ նշում է. «Մեր կրթական համակարգը կլիներ թերի ու անկատար առանց Հայ Եկեղեցու պատմութեան, որովհետեւ մեր Եկեղեցու պատմութիւնը միայն կրօնական հաստատութեան պատմութիւն չէ։ Մեր Եկեղեցու պատմութիւնը մասն է մեր ժողովրդի պատմութեան, նրա ոգին, ամրութեան շաղախն է այդ պատմութեան.... Հայ Եկեղեցու պատմութիւնն անհրաժեշտաբար պէտք է ուսուցանուի հայ դպրոցում, որպէսզի մեր ընթացքը միշտ Աստծու ճանապարհների վրայ լինի, մեր կեանքի հունը քրիստոնէական բարոյական արժէքները լինեն, որպէսզի միշտ ընթանանք Աստծու հետ, որովհետեւ պատմութեամբ վկայուած է, գիտէք, որ Աստծուց հեռանալ, նշանակում է հեռանալ ազգութիւնից, նշանակում է յանձնել մեզ պատմութեան բեմից անհետանալու վտանգներին»[2]։

2011 թ. մարդահամարի տուեալներով՝ ՀՀ բնակչութեան 96 %-ն իրեն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետեւորդ է համարել։ Ուստի զարմանալի չէ, որ գրեթէ միակրօն, մօնօէթնիկ հասարակութիւնն իր հանրակրթական դպրոցների առարկայացանկում ներառել էր ՀԵՊ առարկան եւ ծանօթանում էր իր իսկ Եկեղեցու պատմութեանը։

Երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի օրօք՝ 1991 թ. հիմնադրուած Քրիստոնէական դաստիարակութեան եւ քարոզչութեան կենտրոնը 2005 թ. սեպտեմբերի 1-ից վերակազմաւորուեց Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի, որը ՀԵՊ առարկայի ուսուցման խնդիրների լուծման պատասխանատու գործին լծուեց։ Նոյն ուսումնական տարուանից ԿԳՆ կրթութեան ազգային ինստիտուտի եւ Հայաստանի աստուածաշնչային ընկերութեան հետ համատեղ կեանքի կոչուեցին ՀԵՊ դասաւանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացները ողջ ՀՀ տարածքում։ Այս վերապատրաստումները մեծ խթան հանդիսացան ուսուցիչների ազգային-եկեղեցական գիտելիքների կատարելագործման եւ ամրապնդման համար։ Իրենց յուզող հարցերի պատասխանները նրանք յաճախ ստանում էին հոգեւորականների հետ կազմակերպուած հանդի-

---

[2] *«Հայոց Եկեղեցու պատմութիւն» առարկայի դասագրքերի շնորհանդէսը, «Էջմիածին», Ժ.—ԺԱ., 2005, էջ 39—40։*

պումների ժամանակ։ Նրանց գիտելիքներն առաւել առարկայական էին դառնում ուխտագնացութիւնների ընթացքում[3]։

Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ կազմակերպւում են սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ուխտագնացութիւններ դէպի եկեղեցիներ եւ վանական համալիրներ, նշանաւոր սրբավայրեր։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ, 2004 թուականից սկսեալ, կազմակերպւում է նաեւ «Լաւագոյն ուսուցիչ» ամէնամեայ մրցոյթը, որին մասնակցում են թէ՛ հայագիտական եւ թէ՛ բնագիտական առարկաների ուսուցիչները[4], քանի որ Հայրապետը խրախուսում է գիտութեան համալիր, բովանդակ զարգացումը դպրոցներում։

Ոգեւորութիւն եւ շփոթմունք էր միաժամանակ... Խորհրդային երկարատեւ թմբիրից յետոյ ասես վերազարթօնք էր ուղենշւում։ Քանի՛ սերունդ մնաց անճանաչ իր արմատներին եւ ապրեց բնազդով։ Քանի՛ սերունդ սնոտիապաշտութեանն աւելի ամուր կառչեց։ Քանի՛ սերունդ եկեղեցի չմտաւ, չմկրտուեց, անհաղորդ մնաց երկնքին։

Անգնահատելի է Վեհափառ Հայրապետի դերն ու նուիրումը ՀԵՊ առարկայի՝ հանրակրթական ոլորտում ներդրման, դասընթացների կազմակերպման եւ կատարելագործման, աշակերտների համար տարբեր ծրագրերի իրականացման մէջ։ Հայրապետի մտահորիզոնում ընդգծուած էր այդ ուղին, որի համար շատ յստակ եւ անվարան քայլեր էին կատարւում։ Պարզ էր ու յստակ, որ ազգապահպանման ծանր եւ պատասխանատու առաքելութիւնն ընկած է մեր Եկեղեցու առաջնորդի ուսերին։ Հայոց Հայրապետի տարաբնոյթ գործունէութեան ծիրում ընդգծւում են նրա սէրն ու նուիրումը. աշակերտների եւ ուսանողութեան հետ յաճախակի հանդիպումներից արդէն իսկ պարզ է նրա մտահոգութիւնը՝ պահպանել հայի ազգային նկարագիրը։

Գիտելիքը փոխանցել, ուսուցանել յաջորդ սերնդին, ինչպէս հայ միջնադարեան մատենագիր Կիրակոս Երզնկացին է ասում, մտաւորականի սրբազան պարտականութիւնն է։ Անառարկելի է այն իրողութիւնը, որ երեխաները մշտապէս փորձում են նմանուել եւ ընդօրինակել։ Երեխա-

---

[3] *Առաւել մանրամասն տե՛ս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնէական դաստիարակութեան կենտրոն. Մեր մասին՝* qdk-edu.blogspot.com։

[4] *«Տարուայ լաւագոյն ուսուցիչ» մրցանակաբաշխութիւն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, «Էջմիածին», ԺԱ., 2008, էջ 40—41 (+3 լուսանկար)։*

յին մեծացնելու, իմացական ու բարոյական կրթութիւն տալու համար նախ եւ առաջ դրական օրինակ ու գործ է հարկաւոր, որից յետոյ՝ խօսք ու խրատ։ Ինչ է քրիստոնէութիւնը, եթէ ոչ կենսաձեւ։ Եթէ այն լիներ միայն խօսք, որ հնչում է խորաններից, չէր ունենայ ամուր հիմք ու երկարատեւ կեանք։ Այն խօսք եւ կեանք է միաժամանակ, ուստի քրիստոնէութիւնը ոչ թէ իբրեւ հանդերձ է մեզ՝ հայերիս համար, այլ իբրեւ մարմնի գոյն (Եղիշէ պատմիչ)։

Ինչպէս շեշտում է Եղիշէն, ամէն չար բան մարդու մէջ է մտնում անտեղեակութիւնից եւ անուս լինելուց։ ՀԵՊ առարկայի դասաւանդման նպատակն է սերունդների առջեւ բացել գիտելիքի յորդահոս աղբիւրների ակունքները, որպէսզի վերջիններս իրենց հոգու եւ մարմնի աչքերով սովորեն, կենսական մասնիկը դառնան իրենց պատմութեան։ Մերժելով առարկայի բովանդակային վերլուծութիւնը՝ մերժում ենք մեր պատմութիւնը։

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...». *Ինչ է այս խօսքը. սոսկ թարգմանուած առաջին նախադասութիւն, թարգմանութեան ստուգո՞ւմ, հնչիւնային արտասանութեան ելեւէջ։ Վստահաբար ո՛չ։ Այն ուղենիշ, չափանիշ ու կեանք է բոլոր դարերի ուսուցիչների եւ աշակերտների համար։ Սուրբ Սահակը, Սուրբ Մեսրոպը եւ նրանց աշակերտները հիանալի գիտակցում էին այս նախադասութեան կարեւորութիւնը, նրանց մտքում իրապէս ուղեգծւում էր սոյն խօսքերի կենսական նշանակութիւնը։ Եւ աստուածաշնչեան իմաստութիւնն ի մտի ունենալով՝ ուսուցանում եւ «խրատում» էին իրենց սաներին, սովորեցնում Հանճարի խօսքի անջնջելի յաւիտենութիւնը, ապրեցնում տիրաւանդ վարդապետութեամբ։ Աստուածամերժութեան տարիներին այս նախադասութիւնը մնացել էր միայն դպրոցների պատերին կամ, լաւագոյն դէպքում, գրականութեան դասընթացին էին յիշում։ Այո՛, ճանաչենք իմաստութիւնը եւ իմանանք Հանճարի խօսքերը, որպէսզի անուսներին խորագիտութիւն, երիտասարդներին՝ գիտելիք ու «խրատ» պարգեւենք, չլինենք ամբարիշտ եւ անզգամ, այլ իմաստութեան սկիզբը՝ Տիրոջ երկիւղը ներդնենք մեր մանուկների հոգիներում ու մտքերում։*

Ահա սա աչքի առաջ ունենալով էր, որ Վեհափառ Հայրապետը փորձեց վերականգնել այն խզուած կապը, կառուցել այն քանդուած եւ այրուած կամուրջները, որոնք անաստուածութեան տարիների հետքերն էին։ Նոր սերնդին պէտք էր ուսուցանել, թէ ինչ է աստուածային իմաս-

տութիւնը, ինչ՝ սուրբգրային խրատը, Տիրոջից երկիւղ ունենալու հետեւանքը, ով է Հանճարը, ովքեր են իմաստունները, ում խօսքով պէտք է առաջնորդուեն իրենց կեանքի շաւիղներում։ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը յորդորում է. «Ամուր պահել հայրենանուիրումի եւ ազգանուիրումի ոգին, համախմբել համազգային մեր ողջ ներուժը՝ պաշտպանելու մեր հայրենիքը եւ թոյլ չտալու ոտնահարումը մեր ազգային արժանապատուութեան, թանկ գնով ձեռք բերուած մեր ազատութեան ու անկախութեան եւ ազգային մեր իրաւունքների»[5]։

Զարմանալին այն է, որ շատերս անհատականի մէջ ենք փնտրում ընդհանուրի շահը եւ շատ բան ենք կորցնում հէնց այս պատճառով։ «Ես»-ը, «իմ»-ը յայտնուել են առաջին տեղում։ Ինչպէս երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսն էր նշում. «Եթէ ընդհանուր մարմինս առողջ չլինի, իմ թեւը չի կարող երկար առողջ մնալ։ Մարմին է ազգը։ Այդ մարմինն իր ամբողջութեան մէջ եթէ առողջ չլինի, ես՝ մի մասնիկս, չեմ կարող այդ վատառողջ մարմնի մէջ առողջ լինել.... Եթէ իմը նախընտրեմ, մի օր ընդհանուրի հիւանդութիւնն իմ տանը կհասնի»։ *Յաւօք, այսօր շեշտադրելով անհատի առաջնային դերը՝ կորցնում ենք մեր ազգային «ես»-ը, ազգային ինքնութիւնն ու ազգային դէմքը։ Քրիստոնէութեան մէջ անհատն ու հասարակութիւնը ներդաշնակ են ապրում. առողջ հասարակութիւնն առողջ անհատներ է կրթում, դաստիարակում։ Երբեմն էլ անհատն է կարողանում հասարակութեանը բարձրացնել ընկած վիճակից՝ նշանակալի օրինակ լինելով։ Այն հասարակութիւնը, որը մարդու մէջ միայն «ես»-ն է զարգացնում՝ անտեսելով ընդհանուրի շահը, չի կարող առողջ լինել։*

Երանի՜ այն ազգին, որի օգնականը Տէր Աստուած է (հմմտ. Սաղմ. ԼԲ. 12)։ Յիշե՛նք մեր առաջնորդներին, հետեւող լինե՛նք մեր նախնիների հաւատի օրինակին, ուսուցանենք միակ եւ անփոփոխ ճշմարտութիւնը, ինչպէս բարբառում է Աստուածաշունչը (հմմտ. Եբր. ԺԳ. 7)։ Այս առընչութեամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծում է. «Գիտելիքն ու ուսումը միշտ էլ առաջնահերթութիւն են եղել մեր եկեղեցու առաքելութեան ծիրում։ Սահակ-մեսրոպեան դպրոցը ժամանակին համահունչ կրթութիւն ապահովելու իր դարաւոր աւանդներով դարձել է գրականը մեր ազգային-քրիստոնէական ինքնութեան եւ մեր ժողովրդի գոյատեւման ու յա-

[5] *«Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայաստանի եւ Արցախի խաղաղութեան եւ անսասանութեան համար հանրապետական մաղթանքի ընթացքում» (29 սեպտեմբերի 2020 թ., Ս. Գայանէ վանք), «Էջմիածին», թ., 2020, էջ 12։*

ռատեւութեան: Այսօր նոյնպէս մեր եկեղեցին իր պարտքն է նկատում հայրենի պետութեանը աջակցել՝ կրթելու մեր ժողովրդի արժանաւոր զաւակներ եւ մեր երկրի գիտակից քաղաքացիներ, զարգացած, նպատակասլաց եւ պատասխանատուութեան բարձր զգացումով սերունդ, որը պատրաստ կլինի դիմագրաւելու ժամանակի մարտահրաւէրներին, տէր լինելու մեր երկրի ու ժողովրդի ապագային»[6]։

Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ եւ տնօրինութեամբ լոյս ընծայուած հսկայածաւալ գրականութեան կողքին առանձնացան ՀԵՊ դասագրքերը. բովանդակային հարուստ տեղեկութիւններ՝ պատմական տուեալներ, աշխարհաճանաչողական հարցեր, բարոյագիտական խորհուրդներ, ազգային հոգեկերտուածք, անհատի բացայայտում եւ ճշմարիտ ինքնաճանաչում։ Աշակերտների կողմից սիրուած առարկայ դարձաւ ՀԵՊ-ը, որի միջոցով նրանք իրենց ընտանիքներ էին տանում իրական քրիստոնէական կենցաղն ու պապերի հաւատը։ Աշակերտն ստացաւ տարրական գիտելիքներ իր քրիստոնէական ակունքների, նախնեաց Եկեղեցու, իր հաւատի վերաբերեալ։ Նա իր սովորածը կեանքի կոչեց տարբեր միջոցառումներով, հասկացաւ ազգայինի եւ աւանդոյթի իմաստն ու կարեւորութիւնը։ Կազմակերպուած միջոցառումների շրջանակում սերտ կապեր ստեղծուեցին համայնքների հոգեւոր հովիւների եւ դպրոցների միջեւ, ինչը մեծապէս նպաստեց սաների ինքնագնահատականի ձեւաւորմանը։

Աշակերտը ՀԵՊ դասագրքում փնտրեց իր նախնեաց ուղին, փորձեց գտնել խզման առանցքը եւ վերականգնել այն կէտը, որտեղից կտրուել էր անցեալն ու ներկան իրար կապող շղթան. ՀԵՊ առարկան դարձաւ այդ շղթան ագուցող միջոցը։

Դեռեւս վաղ միջնադարից սկսած դասագրքեր են գրւում, խմբագրւում, ընդօրինակւում եւ վերատպւում։ Մեր օրերում ՀԵՊ առարկայի դասագրքի հրատարակումն առաջին փորձն էր։ Այո՛, առկայ են ՀԵՊ-ի դասագրքերում արծարծուող նիւթերի բովանդակային խնդիրներ, երբեմն՝ կրկնութիւններ, երբեմն՝ աշակերտի համար բարդութիւն ներկայացնող մտքեր։ Բայց սա առիթ չպէտք է հանդիսանայ ՀԵՊ-ն այլ՝ հայրենագիտութիւն եւ հասարակագիտութիւն առարկաներում ներառելու։ Արդեօք այդ

---

[6] *«Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը կրթութեան մշակների օրհնութեան արարողութեանը» (11 սեպտեմբերի 2020 թ.), «Էջմիածին», Թ., 2020, էջ 7–9 (+1 ներդիր նկար)։*

պատճառով պէ՞տք է ջնջել ամբողջական մի առարկայ։ Հայաստանի անկախացումից ի վեր քանի՞ անգամ են փոխուել հայոց լեզուի, գրականութեան, մաթեմատիկայի, օտար լեզուների եւ այլ առարկաների դասագրքերը։ Ինչո՞ւ դրանք չեն հանուել դպրոցական ծրագրից, այլ լրացուել, փոփոխուել են բովանդակային առումով։ Ինչո՞ւ նոյնը չի կարելի անել ՀԵՊ առարկայի դէպքում։ Այս առընչութեամբ իրենց խօսքն են գրել նաեւ Մայր Աթոռի կրթական հարցերով ենթախմբի ներկայացուցիչները[7]*։*

Եթէ ՀԵՊ-ը հանրակրթական առարկայացանկից հանելու պատճառը որոշ նիւթերի կրկնութիւնն է պատմութեան դասագրքերում, ապա պէտք է նշել, որ բովանդակային կրկնութիւններ աւելի շատ կան այլ առարկաների դասագրքերում։ Արդեօք չե՞ն տեսնում հայոց լեզուի, հայ գրականութեան, հայրենագիտութեան եւ հայոց պատմութեան դասագրքերում տեղ գտած կրկնութիւնները։ Ինչո՞ւ են աչք փակում այն իրողութեան առջեւ, որ այդ նոյն հայրենագիտութեան գրեթէ բոլոր նիւթերը կրկնւում եւ ուսուցանւում են տարբեր դասարանների տարբեր առարկաների դասագրքերում, իսկ հայոց լեզու, գրականութիւն եւ հայոց պատմութիւն առարկաների՝ հիմնական դպրոցում անցած բոլոր թեմաները կրկնւում են աւագ դպրոցի 10–12-րդ դասարաններում։ Եթէ շարժւում ենք «Կրկնութիւնը գիտութեան մայրն է» կարգախօսով, ապա ինչո՞ւ ենք բացարձակ այլ սկզբունք որդեգրում ՀԵՊ առարկայի նիւթերի կրկնութեան դէպքում։ Կա՞ արդեօք գիտամանկավարժական լուրջ վերլուծութիւն հայրենագիտութեան, ինչպէս նաեւ «ինտեգրուած» կոչուող միւս դասագրքերի վերաբերեալ (դպրոցի հետ քիչ թէ շատ առընչուող իւրաքանչիւր մարդ՝ ուսուցիչ կամ ծնող, դժգոհութիւնների երկար ցուցակ կարող է ներկայացնել)։ Բացայայտ է նաեւ, որ ՀԵՊ-ը հանելով՝ ժամաքանակ է ապահովւում վերջերս ընդունուած օրէնքին համապատասխանող մէկ այլ առարկայի համար։ «Բնական» է, որ դա պէտք է արուի քրիստոնէութեան հետ առընչութիւն ունեցող առարկայի փոխարէն, որպէսզի հայ մանուկն առաւել հեշտութեամբ ընդունի օրէնքի ուժ ստացած եւ յետոյ ընդունուելիք նման օրէնքների, համաձայնագրերի (կոնվենցիա) ապազգային գաղափարները եւ ձեւաւորուի որպէս «աշխարհիկ» պետութեան, «բաց» հասարակութեան, «աշխարհիկ» (ըստ էութեան սանձարձակ) քաղաքացի։ Փաստ է, որ աշխարհը ձգտում է սրան, բայց պատմական իրո-

[7] *Տե՛ս «Մայր Աթոռը յորդորում է ՀԵՊ առարկան դպրոցական ծրագրից հանելու հարցում չշտապել»* (1lurer.am)*։*

ղութիւն է նաեւ, որ այդ նոյն աշխարհն աւելի քան 1700 տարի առաջ նայեց մեզ եւ մեր ընտրած ուղուն, քայլեց նոյն ճանապարհով եւ միեւնոյն ուղղութեամբ. գուցէ այժմ էլ պէտք է լինենք առաջնորդողը։

Անաստուածութիւնը հազարամեակների ընթացքում շատ անուններ է ունեցել։ Այժմ էլ անկրօն (սեկուլեար) հասարակութիւնն սկսել է կոչուել նոր բառով՝ «բաց հասարակութիւն»։ Անզէն աչքով էլ կարելի է տեսնել, որ «բաց» կոչուող այս հասարակութիւնն աւելի շատ «փակում», քան «բացում» է։

«Բաց» հասարակութիւնն առաջին հերթին փակում է Աստծու եւ մարդու իրական յարաբերութիւնների ճանապարհը. Աստծու պատկերով եւ նմանութեամբ ստեղծուած մարդը կորցնում է նմանութիւնն Արարչի հետ. «Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից եւ նմանեաց նոցա» *(Սաղմ. ԽՀ. 21)։*

Նշեալ հասարակութեան գաղափարախօսութիւնը փորձում է խզել կապը Եկեղեցու եւ անհատի միջեւ։ Քրիստո՛ս է Եկեղեցու հիմքն ու գլուխը, Նա՛ է մեր Փրկիչը, մկրտութեան սուրբ Աւազանից նոր մարդ արարողը։ Քրիստո՛ս է Եկեղեցու Սուրբ Խորանից Պատարագուողը, Իր մարմնով եւ արեամբ քաւութիւն ու թողութիւն տուողը։ Աստծու Որդին է երկինք տանող դուռը, եւ այդպիսի հասարակութիւնը նախ երկնքի ճանապարհն է փակում (առաջին հերթին մանկան համար)։

Փակում է ճանապարհները ազգայինի առջեւ, բերում է օտար մշակոյթ։

Փակում է դռները բարութեան, հայրենասիրութեան առջեւ՝ տուրք տալով անձնասիրութեանը։

Հաւատի՛ դռներն են փակւում, որովհետեւ բացւում են անհաւատութեան ու կռապաշտութեան դռները։ Սիրո՛յ դռներն են գոցւում, որովհետեւ ատելութեան մուտքն է բացւում։ Կողպւում են յոյսի՛ դռները, որովհետեւ եթէ փակ են Աստծու՝ հաւատի, յոյսի, սիրոյ դռները, թագաւորելու է անյուսութիւնը։

Որպէս այս բոլորի արդիւնք՝ կունենանք այնպիսի անհատ, ինչպիսին Պօղոս առաքեալն է նկարագրում. «Զայս գիտասջիր, եթէ յաւուրս յետինս եկեսցէն ժամանակք չարք, զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, աննուէրք, անգութք, բանսարկուք, անժոյժք, վէսք, անբարեսէրք, մատնիչք, յանդգունք, ամբարհաւաճք, ցանկասէրք մանաւանդ, քան աստուածասէրք։ Որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, եւ ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն. եւ խորշեսջիր ի նոցանէ» *(Բ. Տիմ. Գ. 1–5)։*

Պէտք է միշտ յիշել, որ հաւա՛տը հային հայ պահեց, Եկեղեցի՛ն հային հայ պահեց, դպրոց ստեղծուեց Եկեղեցու ծոցում եւ պահպանեց հայկականութիւնը, հայեցին։

Հաւատով է լեցուն Վեհափառ Հայրապետի սիրտն ու օրը, որ նոր դռներ պիտի՛ բացուեն, նոր տեսիլքներ պիտի՛ իրագործուեն, ու այս մարտահրաւէրների դէմ կա՛ն եւ կգտնուե՛ն նոր ուղիներ, ու Եկեղեցին կշարունակի ծառայել Աստծուն եւ ժողովրդին, ինչպէս եղել է երկու հազար տարի շարունակ։

РЕЗЮМЕ

Статья посвящена просветительской, церковно-строительной и издательской деятельности, осуществлявшейся при Католикосе Всех Армян Гарегине II, вклад которого в указанные области велик. Благодаря Его Святейшеству наряду с Первопрестольным Святым Эчмиадзином были отреставрированы и возведены тысячи церквей и монастырей по всей Армении и Арцаху. Благодаря усилиям Католикоса Всех Армян также получила новый импульс типографика, развивались межцерковные отношения и епархиальные структуры, а в школах был введен предмет «История Армянской Церкви».

SUMMARY

The article is devoted to educational, church-building and publishing activities carried out during the reign of the Catholicos of All Armenians Karekin II. His contribution to these areas is great. Thanks to him, hundreds of restored and newly built churches and monasteries stand next to the Mother See of Holy Etchmiadzin throughout Armenia and Artsakh. By virtue of his efforts, typography received a new impetus, interchurch relations and diocesan structures developed, and the subject “History of the Armenian Church” was introduced in schools as a separate subject.

ԿԱՐԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԶՈՒ N զորամասի գնդերեց

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի՝ քրիստոնեության ընդունումից ի վեր Հայ Եկեղեցին պատմական հանգամանքների բերումով ազգի ու պետականության պահպանման հիմքն է եղել՝ առանձնահատուկ ուշադրություն ու հոգածություն ցուցաբերելով հայ զորականի հոգեւոր դաստիարակության նկատմամբ։ Հայ հոգեւորականը ծառայել է՝ մի ձեռքին Տիրոջ խաչը, մյուսին՝ հայրենիքը պաշտպանող զենքը։

Մեր բազմադարյան պատմության ամբողջ ընթացքում Հայ Եկեղեցին միշտ կանգնած է եղել հայրենիքի պաշտպանությանը զինվորագրված հայորդիների կողքին՝ ոգեշնչելով նրանց խոսքով ու գործով, ցուցաբերելով հոգեւոր ու նյութական աջակցություն, իսկ պետականության կորստի պայմաններում՝ ստանձնել առաջնորդի դեր եւ հաճախ ազգային-ազատագրական պայքարի գլուխ կանգնել, օրհնել այդ պայքարը, քաջալերել մարտիկներին՝ զինվելու հայրենյաց պաշտպանության համար։

Հայ Եկեղեցու լուսահոգի սրբազան հայրապետներն ու հոգեւորականները վճռական ճակատամարտերից առաջ օրհնել են հայոց զորքը, հաճախ ներկա գտնվել, մինչեւ իսկ մասնակցել ճակատամարտերին։ Այդ նվիրյալ հոգեւորականների շարքում են Ս. Ներսես Մեծը, Ս. Հովսեփ Հողոցմեցին, Ս. Հովհան Մանդակունին, Ս. Հովհան Օձնեցին, Հակոբ Ջուղայեցին, Եսայի Հասան-Ջալալյանը, Ներսես Աշտարակեցին, Գարեգին Հովսեփյանցը եւ այլք, որոնք ոչ միայն սրբազան պայքարը քաջալերող ու օրհնող էին, այլեւ դրա ջահակիրն ու առաջնորդը[1]։

Հայ ժողովրդի պատմությունը բազում օրինակներով է արտահայտում այն նվիրումը, հոգեւոր օժանդակությունն ու անուրանալի դերը,

---

[1] Տե՛ս «Գրքույկ՝ նվիրված ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության 20-ամյակին», Երեւան, 2017, էջ 6 (այսուհետ՝ «Գրքույկ»)։

որ Հայ Եկեղեցին՝ իբրեւ ազատագրական պայքարը կենսագործող ուժ, ունեցել է հայրենի երկրի պաշտպանության գործում։ Այդ պայքարի լավագույն օրինակներից է Վարդանանց սրբազան պատերազմը, որ մղվում էր «վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ...»։ Ահա այս երկու շեշտադրումներն են, որ մշտապես եղել ու մնում են մեր Եկեղեցու գաղափարախոսության կիզակետում։ 451 թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում տեղի ունեցած վճռորոշ ճակատամարտում Ս. Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսը (440—452 թթ.) ու Ս. Ղեւոնդ Երեցը սպարապետ Ս. Վարդան Մամիկոնյանի ու մյուս զորահրամանատարների հետ առաջնորդում էին հայոց բանակն ու աշխարհազորայիններին, եւ յուրաքանչյուր զորագունդ իր քահանաներն ուներ։ Ուշագրավ է այն միտքը, որ Ս. Վարդան Մամիկոնյանն արտահայտում է ճակատամարտի նախօրեին հայոց զորքին ուղղված իր ոգեշնչող խոսքում՝ առ այսօր բնութագրելով ռազմիկ հոգեւորականի խորհրդանշական կերպարը. «Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակներում, երբ պատերազմ էիք գնում, թեպետեւ սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ, ձեզ հանձնելով նրանց աղոթքին, որեւէ ամուր տեղում էիք թողնում նրանց, իսկ այսօր եպիսկոպոսները, երեցներն ու սարկավագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը, սահմանված կանոնով սպառազինված եւ պատերազմի պատրաստված, կամենում է ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին»[2]։

Արդեն մեր օրերին ավելի մոտ՝ Սարդարապատի հերոսամարտում, հայ հոգեւորականները նույնիսկ առանձին փոքրիկ զորաջոկատ են կազմել, իսկ Հայրենական մեծ պատերազմի տարիներին անդրադառնալիս հիշարժան են Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1945—1954 թթ.) ջանքերով ու Եկեղեցու միջոցներով կազմավորված եւ ռազմի դաշտ ուղարկված «Սասունցի Դավիթ» ու «Դավիթ Բեկ» տանկային շարասյուները։ Այսօրինակ քայլերն իրապես շատ են մեր պատմության էջերում։

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության ծիրում ամենակարեւոր ձեռքբերումը, թերեւս, Հայոց ազգային բանակի ստեղծումն է։ Այն պետականության հարատեւության կարեւորագույն ու առաջնային երաշխիքն է, միակ միջոցը՝ թշնամու ոտնձգությունները կանխելու

[2] *Տե՛ս «Գրքույկ», էջ 6։*

եւ արժանի հակահարված հասցնելու համար։ Մեր նորանկախ երկրի երիտասարդ բանակում իբրեւ ժամանակի հրամայական՝ երջանկահիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի եւ ՀՀ պաշտպանության նախարար լուսահոգի Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ՝ 1997 թ. նոյեմբերի 13-ի հուշագրով ստեղծվեց զինված ուժերի հոգեւոր ծառայությունը։ Այն հաստատվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով եւ մտել ՀՀ ՊՆ համակարգ։

Բանակի հոգեւոր ծառայության առաջին պատասխանատուն էր Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը։ 1999 թ. դեկտեմբերին ծառայության պատասխանատու է նշանակվել Տ. Արշեն աբդ. Սանոսյանը, ապա՝ Տ. Նորայր աբդ. Սիմոնյանը։ 2007 թ. հոկտեմբերից ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ վերստին նշանակվել է դրա առաջին պատասխանատուն՝ Գերաշնորհ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը։ 2021 թ. փետրվարի 12-ից այդ պաշտոնին կոչվել է Հոգեշնորհ Տ. Մովսես վրդ. Սարգսյանը։

ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունն այսօր իրապես լծված է բանակաշինության գործին, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ.-ն ջանք չի խնայում Հայոց բանակին օժանդակելու եւ պատրաստված հոգեւորականների նոր սերունդ հասցնելու՝ հայրենիքին, հայ սպային ու զինվորին ծառայելու համար։ Իբրեւ բանակաշինության ու ազգային պետականության զորացման նվիրյալներ՝ գնդերեցները, Հայոց Հայրապետի օրհնությամբ, առանձին զորախմբով մասնակցել են ՀՀ անկախության հռչակման 20 եւ 25-ամյակներին, նաեւ Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակին նվիրված զորահանդեսներին՝ վկայելու հայ զորականին առաջնորդելու իրենց անկասելի առաքելությունը։

Գնդերեցների հոգեւոր ծառայությունն ինքնանպատակ չէ. այն ունի սրբազան առաքելություն ու խնդիրներ. ԶՈՒ յուրաքանչյուր զորականի հաղորդակից դարձնել Քրիստոսի Սուրբ Ավետարանին եւ քրիստոնեական հավատի սկզբունքներին, դաստիարակել քրիստոնեական բարոյականության ոգով, փոխանցել կրոնաեկեղեցական ու ծիսական որոշակի գիտելիքներ, պայքարել աղանդավորական եւ վնասակար տարաբնույթ այլ հոսանքների եւ ուսմունքների դեմ, զինվորականներին հաղորդել հոգեւոր ու բարոյականային բարձր հատկանիշներ՝ համբերատարության ու ներողամտության, ընկերասիրության ու հայրենասիրության բացառիկ արժեքներ՝ նրանց անպարտելի դարձնելու մղումով։

Այն զորականը, որը ձեռքին զենք, սրտում քաջություն ու շուրթերին աղոթք ունի, ծառայությունը չի համարում լոկ պարտականություն, այլ սրբազան իրավունքի իրացում, նվիրական ու անձնուրաց առաքելություն։

Զինվորականները մեծավ մասամբ տղամարդիկ են, 18–20 տարեկան երիտասարդներ։ Երբ վերջիններս գալիս են բանակում ծառայելու, դժվար է պատկերացնել, որ փողոցային վարքուբարքին առնչվող որոշ երեւույթների դրսեւորումներից հնարավոր կլինի խուսափել։ Այս պարագայում հոգեւորականն ուժերի գերլարում է գործադրում՝ նման երեւույթների ազդեցությունը նվազեցնելու եւ դրանք հարթելու ու հաղթահարելու։

Գնդերեցի առօրյա ծառայության մաս է կազմում դժվար դաստիարակվող, շրջապատից մեկուսացող ու տարաբնույթ վնասակար սովորությունների կապանքների մեջ հայտնված հատկապես նորակոչիկ զինծառայողների հետ անհատական աշխատանքը։ Տարեցտարի, ինչպես փաստում են վիճակագրական տվյալները, նվազում է անառողջ ու անցանկալի միջադեպերի, միջանձնային խնդիրների ու ինքնասպանությունների թիվը։

Գնդերեցները մշտական ու ամենօրյա աշխատանք են իրականացնում ՀՀ ռազմաուսումնական հաստատություններում, բանակային կորպուսներում, դիվիզիաներում ու զորամասերում՝ դառնալով զինվորի հոգեւոր հայրն ու վստահելի ընկերը՝ ամեն դիրքափոխից առաջ զինվորներին խրախուսելով եւ օրհնությամբ ու աղոթքով ճանապարհելով, այցելելով մարտական հենակետեր, մասնակցելով ռազմարշավներին եւ ուսումնամարզական հավաքներին, կատարելով հոգեւոր-բարեպաշտական արարողություններ՝ զորամասերի ու մարտական դիրքերի տնօրհնեքներ, հոգեւոր անկյունների ու մատուռների օրհնության կարգեր։ Նրանք կազմակերպում են նաեւ Եկեղեցու սրբազան խորհուրդներին ու կարգերին՝ Սուրբ Պատարագ ու Մկրտություն, ժամերգություն ու խոկում, Ջրօրհնեք ու Խաղողօրհնեք, զինծառայողների մասնակցությունը (վրանային-դաշտային պայմաններում, զորամասերի մատուռ-եկեղեցիներում կամ շարահրապարակներում, մոտակա եկեղեցիներում եւ այլն), ինչպես նաեւ Զինված ուժերի սպայական անձնակազմի համար համաժողովներ եւ այլն։ Իհարկե, այս միջոցառումներն ուղեկցվում են մոտակա եկեղեցիներ ու սրբավայրեր

ուխտագնացություններով, հոգեւոր ու հայրենասիրական թեմաներով հանդիսություններով, ուսուցողական կամ գիտական բովանդակությամբ ֆիլմերի դիտումներով, քարոզ-դասախոսություններով, անհատական զրույցներով, տներ, բուժկետեր, զինվորական հիվանդանոցներ այցելություններով, կրոնական ու հայրենասիրական բնույթի գրականության տարածմամբ։

Զինվորները հնարավորություն են ունենում մասնակցելու Ս. Պատարագներին, աղոթական խաղաղ հոգեվիճակով առանձնանալու Աստծու հետ, Տիրոջը ներկայացնելու ծառայության դժվարությունները, կարոտն ու նվիրական զգացումները, իսկ հավարտ Ս. Պատարագի՝ նոր եռանդով, առավել մաքրված ու խաղաղված սրտով վերադառնալու զորամաս։

Կարեւոր է արձանագրելը, որ գնդերեցները հսկայական բացատրական աշխատանք են տանում զինվորներին մկրտելու ուղղությամբ։ Երկարատեւ պատրաստության շրջանից հետո տարվա ընթացքում Զինված ուժերում ընդհանուր առմամբ մոտ հազար զինվոր է մկրտվում։

Այս բոլոր միջոցառումները, իհարկե,հոգի ու մարմին են առնում Հայոց Հայրապետի անշեղ ու հոգածու հայացքի ներքո։ Ակնառու է, որ Հայոց բանակը մշտապես Նորին Սրբության հայրական խնամքի ներքո է, եւ դրա լավագույն ապացույցը, թերեւս, Վեհափառի հետեւյալ շնորհավորական ուղերձն է՝ հղված Բանակի օրվա առիթով. «Դարերի ընթացքում՝ մեր բոլոր պայքարների բովում, հայ զինվորը ցուցաբերել է մեծ արիություն ու անձնվիրում՝ հերոսաբար պաշտպանելով երկիր հայրենին եւ հարազատ ժողովրդին։ Արցախի պաշտպանության համար մղված պատերազմներում Հայոց բանակի քաջարի զորահրամանատարներն ու զինվորները, որոնց թվում՝ ազգային փոքրամասնությունների խորխտ զավակները, նույն խիզախ ոգով հերոսաբար պայքարեցին հանուն հայրենիքի, եւ շատերն իրենց կյանքը նվիրեցին՝ ի սեր հայրենյաց եւ ազգի։

Այս տարի Բանակի տոնը դիմավորում ենք՝ պատերազմի ողբերգական հետեւանքների ցավը մեր հոգում։ Ստեղծված նոր մարտահրավերներին ընդառաջ՝ հավատում ենք, որ աշխարհասփյուռ ազգս հայոց առ Աստված ապավինությամբ եւ մեր անցյալի հաղթանակների ոգով պիտի կերտի նոր հաջողություններ ու ձեռքբերումներ, վերականգնի բարօր ու շեն կյանքն Արցախում եւ Հայաստանում՝ նաեւ ի պանծացումն հանուն հայրենյաց զոհված մեր զավակների խնկելի հիշատակի։

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված՝ հայցելով, որ Իր խնամքի ներքո պահպանի հայրենիքի պաշտպան Մեր սիրեցյալ զավակներին եւ շնորհի անվտանգ ծառայություն: Թող Տերն ամենակալ Իր օրհնությունն ու ողորմությունը տարածի համայն մեր ժողովրդի վրա ի հայրենիս եւ ի սփյուռս, այսօր եւ միշտ. ամեն»[3]:

Եթե փոքր-ինչ հետ նայենք, այդ հոգածության շնորհիվ է, որ 2012 թ. հունվարի 28-ին Հայոց հաղթական բանակի կազմավորման 20-ամյակի առթիվ Ն. Ս.Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով Աշոտ Բ. Երկաթ Բագրատունի (914–928 թթ.) թագավորի խաչը հայտարարվել է Հայոց բանակի պահապան ու հովանավոր սրբություն: Աշոտ Երկաթ արքան այս խաչի հովանավոր առաջնորդությամբ մի շարք հաղթանակներ է տարել արաբների դեմ: Հրաշագործ խաչի կրկնօրինակը, որի կենտրոնում՝ ապակու տակ, զետեղված է Քրիստոսի փրկչական խաչափայտի մի մասունք, օծվել ու հանձնվել է ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությանը: Առաջնորդի օրհնությամբ՝ մասունքակիր խաչն ամեն տարի շրջում է մարտական դիրքերում ու բնագծերում՝ կենարար զորությամբ օրհնելով մեր երկրի սահմանները եւ գոտեպնդելով հայրենյաց պաշտպան զինվորյալ հայորդիներին: Կարեւոր է շեշտել նաեւ այն հանգամանքը, որ խաչի մանրակերտ կրկնօրինակը՝ օրհնված «Աշոտ Երկաթ» խաչ-կրծքանշանը, այսօր զարդարում է ԶՈՒ տարաստիճան անձնակազմի կուրծքը[4]:

Վեհափառ Հայրապետի մեկ այլ հատուկ կարգադրությամբ՝ 2017 թ. ՀՀ ԶՈՒ կորպուսներին ու կայազորներին շնորհվել են զորատեսակի հովանավոր զորական սրբի պատկերով խաչվառներ, որոնք պահվում են զորամասի մարտական դրոշի կողքին:

Անցած տարին, անշուշտ, դժվարին փորձություններով ու մարտահրավերներով էր լեցուն: Մեր պետությանն ու ազգին ադրբեջանաթուրքական դաշինքը պատուհասեց մի անհավասար ու անարդարացի պատերազմով, որի հետեւանքով Ադրբեջանը բռնազավթեց Արցախի Հանրապետության տարածքի շուրջ 75 տոկոսը: Այս ցավալի պատերազմում հերոսաբար ընկան հազարավոր հայ քաջորդիներ՝ սպաներ ու զինվոր-

---

[3] *«Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը ՀՀ բանակի օրվա առիթով», «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2021, հունվար, Բ.:*

[4] *Տե՛ս «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը ՀՀ ազգային բանակի 20-ամյակի առիթով», «Էջմիածին», 2012, Ա., էջ 3–4:*

ներ։ 44-օրյա պատերազմի ավարտից առ այսօր «Եռաբլուր» զինվորական պանթեոնում չեն դադարում ավելանալ մեր հերոս տղաների նոր շիրմաքարեր։ Նորօրյա մեր հերոսները սրբազան հայրենիքի պաշտպանությունն առավել բարձր դասեցին իրենց կյանքից՝ կենսագործելով քրիստոնեական սիրո ամենամեծ դրսեւորումներից մեկը.«Չկա ավելի մեծ սեր, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» *(Հովհ. ԺԵ. 13)։*

Իհարկե, 44-օրյա պատերազմի ամբողջ ընթացքում հայ հոգեւորականը երբեք չի լքել իր զինվորին, կանգնել է նրա կողքին խրամատում, զենքը ձեռքին աղոթել, մաքառել ու հերոսացել, նաեւ ընկել՝ հավերժ մնալով բարձրում։ Նահատակ հոգեւորականների շարքում ավելացել են երիտասարդ ու խոստումնալից երկու սարկավագների անուններ՝ Նարեկ Պետրոսյան եւ Ռուստամ Պողոսյան, որոնք զոհվել են թշնամու անօդաչու թռչող սարքի հարվածից։ Ցայսօր անհայտ կորածների շարքում է Մկրտիչ աբեղա Կարապետյանը։ Հայր սուրբը պատերազմի մասնակից այն հոգեւորականներից է, որ առաջին իսկ օրվանից գտնվել են ռազմաճակատում եւ անկոտրում պայքար մղել հայրենիքի պաշտպանության համար մղվող սրբազան պատերազմում։

Պատերազմին մասնակցած հոգեւորականներն ու գնդերեցներն ըստ արժանվույն գնահատվել են թե՛ ՀՀ պաշտպանության նախարարության, թե՛ Վեհափառ Հայրապետի կողմից։ Նորին Սրբության հայրապետական սրբազան կոնդակով ստեղծվել է «Ս. Ղեւոնդ Երեց» կրծքանշանխաչը[5]՝ զարդարելու պատերազմի բովով անցած հայ հոգեւորականների կուրծքը[6]։

---

[5] *Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ վերջերս հաստատված «Ս. Ղեւոնդ Երեց» շքանշանը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվո բարձր շքանշաններից է, որը հայրապետական սրբատառ կոնդակով շնորհվում է Հայ Եկեղեցու հոգեւոր դասին՝ ի գնահատումն ազգային-եկեղեցական կյանքում դրսեւորած նվիրյալ ծառայության եւ գովարժան վաստակի։*

[6] *Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Ղեւոնդ Երեց» նորահաստատ շքանշանով պարգեւատրել է Հատուկ հանձնարարություններով հայրապետական նվիրակ Տ. Պարգեւ արքեպս. Մարտիրոսյանին, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արքեպս. Աջապահյանին, Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանին, Տավուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանին, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպս. Պռոշյանին, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ եւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տաթեւ եպս. Հակոբյանին, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանին, Արցախի թեմից Տ. Սահակ վրդ. Շաքարյանին, Տ. Գեղարդ աբղ. Հովհաննիսյանին, Տ. Անդրեաս քհն. Թավադյանին եւ Տ. Հովհաննես քհն. Հովհաննիսյանին, Ս.Գեղարդավանքից Տ. Արիս աբղ. Տոնոյանին, գնդերեցներ Հրաչյա սրկ. Ղազարյանին, Գոռ*

Հայոց Հայրապետն ամեն պատեհ առիթով զինվորյալ հոգեւորականներին քաջալերում է, տալիս իր հայրական հորդորը՝ հաստատակամ ու անսասան մնալու անչափ կարեւոր այդ ծառայության մեջ. «Սիրելի՛ հոգեւոր սպասավորներ, Հայոց բանակի արիասի՛ռտ գնդերեցներ, դում, որ անմիջական մասնակցություն եք ունեցել պատերազմում՝ զինվորներին քաջալերանքի ձեր խոսքն ուղղելով, նրանց մարտական ոգին ամուր պահելով, հայրենյաց պաշտպանության պայքարում սատար կանգնելով, ջուր ու հաց հասցնելով, ռազմի դաշտում շատերին մկրտելով ու Սուրբ Հաղորդություն տալով, այսօր ներկա եք այստեղ՝ արժանանալու բարձր գնահատանքի ձեր գովելի ծառայության համար: ...Հայրական սիրով վերստին Մեր օրհնությունն ու գնահատանքը բերելով ձեզ՝ հորդորում ենք, որ նույն խրոխտ ոգով արդյունավորեք ձեր ծառայությունը Զինված ուժերում՝ հայրենյաց պաշտպաններին հոգեւոր սնունդ մատուցելու, քաջալերելու եւ մարտական ոգին միշտ բարձր պահելու առաքելության մեջ: Դում պիտի հարատեւորեն լինեք ոգին ու ներշնչանքը մեր ժողովրդի, Հայոց բանակի, մեր հաղթանակների, մեր երկրի խաղաղության ու անվտանգության պաշտպանության: ...Մաղթում ենք, սիրելի՛ հոգեւոր սպասավորներ, որ այլեւս խաղաղ երկնքի ներքո անցնի ձեր եւ Հայոց բանակի զինվորների ու զորականների ծառայությունը: Զորացրե՛ք մեր ժողովրդի լավատեսության ոգին, մեր կորուստները վերականգնելու հուսառատությունը, կենարար հավատքի շնորհիվ նոր հաղթանակների վճռականությունը՝ ըստ առաքյալի խոսքի. «Եւ ա՛յս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը» (Ա. Հովհ. Ե. 4)»[7]:

Խաղաղ թե պատերազմական պայմաններում ՀՀ ազգային բանակը Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում է: Նորին Սրբության օրհնությամբ հաստատվել են զորամասերում կառուցվելիք եկեղեցիների եւ բաց խորանի նախագծերը, որոնք գնդերեցներին կօգնեն Ս. Պատարագը, ժամերգություններն ու ծիսական արարողություններն ավելի նպաստավոր պայմաններում կազմակերպելու, իսկ յուրաքանչյուր զինվոր հնարավորություն կունենա իր սրտի գոհունակ աղոթքն ու մաղթանքն առ Աստված այդտեղից վերառաքելու:

սրկ. Գյուրջյանին, Հովհաննես սրկ. Անդրյանին, Արտաշես սրկ. Ներսիսյանին, Մանավազդ սրկ. Մկրտչյանին, Վահե սրկ. Մկրտչյանին, Մկրտիչ սրկ. Տեր-Մկրտչյանին, Կարո սրկ. Ղարիբյանին եւ Հրայր սրկ. Լալայանին:

[7] *«Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից հոգեւորականների պարգեւատրման արարողությանը», «Էջմիածին», 2021, է., էջ 5—7:*

Նորին Սրբության հոգածությամբ կատարված աշխատանքներն ամփոփելու նպատակով Մայր Աթոռում տեղի են ունենում գնդերեցների եռամսյա սեմինար-քննարկումներ, իսկ տարեկան մեկ անգամ մեր երկրի որեւէ գեղատեսիլ անկյունում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությամբ ու հովանավորությամբ՝ նաեւ գնդերեցների ու սպա-հոգեբանների համատեղ համաժողովներ՝ բարձրաստիճան հոգեւորականների եւ ռազմական հոգեբանության հմուտ մասնագետների ներգրավմամբ: Այս համաժողովները նպաստում են քրիստոնեական գիտելիքների՝ հօգուտ զինվորական կյանքի ճիշտ կազմակերպման կիրառմանը, ռազմական արվեստի ու համամարդկային արժեքների կրող լինելուն զուգահեռ՝ հայ զինվորին հավատով ու հույսով, հայրենասիրությամբ ու աստվածասիրությամբ զինելուն:

Ամբողջացնելով վերը շարադրվածը՝ այն համոզմանն ենք հանգում, որ հոգեւոր ծառայության դերը բանակում կարեւոր է կարգապահության, միջանձնային հարաբերությունների ներդաշնակության, հայրենասիրական ոգու զորացման, ինչպես նաեւ Աստվածաշնչի ուսուցման եւ աղոթական կյանքի արմատավորման տեսանկյունից:

Հայրենիքն աստվածային պարգեւ է, մեր պետականությունը՝ մեր գոյութենական իրականության անսակարկելի արժեքը, հայրենիքի ու պետականության անսասանությունը՝ մեր լինելության գրավականը: Եւ այս կարեւոր արժեքների պահպանությունը վստահված է մեզանից յուրաքանչյուրին անհատապես: Ուստի հայցում ենք, որ Տերը պահապան լինի մեր բանակին եւ նրա հոգեւորական ու աշխարհական յուրաքանչյուր զինվորին:

РЕЗЮМЕ

Несмотря на всего 24-летнюю историю официального формирования, Духовное предводительство ВС РА, действительно, является состоявшейся и чрезвычайно значимой структурой в армии. В период патриаршества Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса Всех Армян, оно стало важной и неотъемлемой частью вооруженных сил РА.

Это обстоятельство, несомненно, обусловлено подготовкой нового поколения духовенства, которое с безграничной любовью к Родине предано делу строительства армии.



Этим небольшим очерком в рамках нескольких страниц мы попытались наметить рамки деятельности этой прочной структуры, являющейся душой армянской армии, показать ее неуклонный подъем и развитие при 132-ом Верховном Патриархе и Католикосе Всех Армян.

SUMMARY

Despite only 24 years of official formation, the army chaplaincy of the RA Armed Forces is a really well-established and extremely essential structure. During the Pontificate of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, it became an important and inseparable part of the RA Armed Forces, which is, of course, conditioned by the preparation of a new generation of clergymen, who due to their boundless love for the Homeland are engaged in the army formation process. Within the framework of a few pages, we tried to outline the scope of activity of this solid structure, which is the soul of the Armenian Army, as well as its steady growth and development during the reign of the 132nd Armenian Catholicos.

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ

Հայոց սրբակեաց Հայրապետների եղբայրդ,
Ազգիս Հայրն այսօր,
Անսահման ցաւով, սակայն անտրտունջ,
Ուսերիդ առած Հայոց փրկութեան խաչն ամենազօր,
Միշտ բաց պահելով Տիրոջ տան դուռը,
Քո լեռն ես ելնում, որ Նրան պատմես
Քո ժողովրդի հոգու մռունչը, սրտի մրմուռը։

Քո հնձանները, որ պիտի կրկին
Ծփային այսօր խնկահոտ գինով,
Որ երջնկութեան դրօշ ծածանեն
Քո խիզախ որդոց սուրբ հարսանիքին,
Նրանց ձագերի մեռոն-կնունքին...
Բայց, աւա՜ղ, հիմա այդ հնձանները
Լցրել են նրանց սգուոր մայրերի
Աղաղակներն ու ողբի ձայները
Եւ Քո, Վեհափա՜ռ, Քո արտասուքը,
Որ պիտի մեղմի
Տառապեալների մրմուռն ու սուգը։

Եւ այս ամենով դեռ մեր վերջը չէ,
Մեր Վեհափա՜ռ Տէր,
Քո գաւազանով ցո՛յց տուր մեր ազգին
Իր արմատների ճշմարիտ տեղը.
Մեր գլխով անցան շատ արեան գետեր,

Կանցնի նաեւ այս պղտոր հեղեղը,
Դու գաւազանդ Մովսէսի նման
Բռնի՛ր ամեն մի չարիքին ընդդէմ,
Ընդդէմ ամեն մի չարք ու չարիքի,
Մոխրացրո՛ւ նրանց, նետի՛ր հեղեղին,
Մաքրի՛ր մեր՝ մարդկանց մթնած ուղեղը,
Եւ առաջնորդի՛ր ճշմարիտ ճամփով,
Մինչեւ որ հասնենք Տէր Աստծու կողմից
Մեզ համար պահուած լուսէ Եդեմը։

ԳԷՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՂՕԹՈՒՄ Է ՀԱՅՐԱՊԵՏԸ...

Խաւար է պատել հայոց երկնին,
Հայոց երկնքում մռայլ է ու մութ.
Այդ մութ խաւարում բարի մի հայեացք
Մերթ լոյս է խնդրում, մերթ հայցում է գութ...

Լոյս՝ Լուսաւորչի տեսիլքով վառուած,
Որ չխարխափի հայ ազգը մթում,
Եւ գութ, որ տեսնի այդ ազգը բեկուած
Լոյսն այն, որ երբե՛ք, երբե՛ք չի մթնում:

Այլ կախուած է այն միշտ նոյն երկնից,
Եւ որքան խաւարն է աւելի տիրում,
Այնքա՜ն աւելի լոյսն այդ փրկագործ
Վառ ու պայծառ է երկնից շողում:

Լուսաւորչի կանթեղն է այն՝
Կախուած հայոց մութ երկնից,
Իսկ հայեացքը՝ վեհափառեան
Աղօթքն է սո՜ւրբ, աղերսակոծ:

Աղօթում են աչքերն այդ լուռ՝
Հայեացքը հեռու մի յոյսի յառած,
Եւ արցունքները բի՜ւր-միւռոնաբոյր
Այդ ջինջ աչքերից կանթեղում են ցած:

Խաւար է պատել երկնին հայոց
Հայոց երկնքում մութ է ու մռայլ,
Բայց հայրապետի աչքերը անգոց
Կանթեղի լոյսն են պահում անայլայլ:

ԱՐԱՄ ՄԱՆԱՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԸ

Դու, Հայրապե՛տ,
Դու, Հայո՛ց Հայր,
Մեր սուրբ հաւատքի պահապա՛ն,
Առաջնորդի՛ր մեզ այս խաւարից
Դէպի լոյսը փրկութեան:

Դու, Վեհափա՛ռ,
Դու, Ազգի Հա՛յր,
Սուրբ Հոգու շնորհներով զարդարուած,
Դարմա՛ն արա մեր վէրքերին
Սիրոյ սպեղանիով կենարար:

Դու, Հայրապե՛տ՝
Համայնից Հա՛յր,
Աւարայրի սուրբ նահատակ
Գարեգնի անունը վրադ առած՝
Տա՛ր մեզ յաղթանակած խաչեալի
Շաւիղներով փառապանծ...

ԵԿԵՂԵՑԱՇԵՆ ԵՒ ԱՋԳԱՇԵՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ. *ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*

Լույս է տեսել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեության տարեգրությունը եւ կենսամատենագիտությունը ներկայացնող իրապես կոթողային հատորը[1]։

Նշանավոր անհատներին նվիրված մատենագիտական բնույթի աշխատանքները, դուրս գալով նրանց կյանքի, գործունեության եւ գրական ժառանգության շրջանակից, որոշակիորեն դառնում են նաեւ հարազատ ժողովրդի պատմության տարբեր իրադարձությունների արտացոլումը։

ԺԹ. դարավերջին եւ Ի. դարի առաջին տասնամյակներին նման անձնավորություններ էին Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանը, որոնց կենսագրություններում բեկվել են հայ ժողովրդի այդ շրջանի նշանակալից բոլոր իրադարձությունները։ Հովհ. Թումանյանի կյանքի եւ ստեղծագործության քառահատոր տարեգրության միջոցով կարելի է կազմել նաեւ հայ ժողովրդի պատմության 1890-ական թթ. իրադարձությունների ժամանակագրությունը։

Նման տարեգրություններն իրադարձությունների առավել լայն շառավիղ են ունենում եւ կյանքի ամենատարբեր ոլորտներն ընդգրկում, եթե տվյալ անձնավորության գործունեությունն իրականացվում է երկրի ու ժողովրդի կյանքում առավել նշանակալից դեր խաղացած հաստատությունների միջոցով։

Դարերի ընթացքում եւ Հայաստանի երեք հանրապետությունների շրջանում նման ամենաընդգրկուն համազգային հաստատությունը Սուրբ

---

[1] *Տե՛ս «Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց. Տարեգրություն եւ կենսամատենագիտություն», կազմողներ՝ Տ. Արարատ քհն. Պողոսյան, Մ. Գրիգորյան, Գ. Սարգսյան, Ս. Էջմիածին, 2020, 896 էջ։*

էջմիածինն է, որի գործունեությունն արտահայտվում է հայոց հայրապետական աթոռի գահակալների միջոցով։

Ասվածը վերաբերում է հատկապես Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. եկեղեցաշեն ու ազգաշեն եռանդուն ու նվիրյալ հայրապետին։

Տարեգրությունները եւ կենսամատենագիտությունները բաժանվում են երկու խմբի։ Առաջին՝ ըստ ժամանակագրական ընթացքի, երբ սկսած ծնվելու օրից ներկայացվում է տվյալ գործչի կյանքի ընթացքը՝ տարի, ամիս եւ օր ժամանակային հերթագայությամբ։ Նույնը վերաբերում է եւ կենսամատենագիտություններին։ Որեւէ գիտնականի դեպքում, ըստ ժամանակային ընթացքի, նշվում են նրա հեղինակած գործերը եւ ապա՝ նրա մասին եղած հրապարակումները։ Նյութերի ներկայացման նման ընթացքը թեմատիկ ներքին խմբավորմամբ կարող է ընդգրկել տվյալ հեղինակի հոդվածները, մենագրությունները, գրախոսությունները, ինչպես նաեւ նրա գործունեությանը նվիրված հրապարակումների բաժինը։ Կենսամատենագիտության բնույթը, սակայն, դրանից չի փոխվի։

Ազգային-հասարակական առավել մեծ գործունեություն ծավալած գործիչների դեպքում նրանց ստեղծագործությունները կազմում են կենսամատենագիտության թեմատիկ բաժիններից մեկը՝ համապատասխան ներքին դասակարգմամբ եւ յուրաքանչյուր խումբը՝ ըստ ժամանակագրական ընթացքի, ինչպես նաեւ առանձին բաժիններով բերվում են գործունեության տարբեր բնագավառները։ Նույն ձեւով են վարվել եւ սույն հատորի կազմողները՝ թեմատիկ 32 բաժիններով ներկայացնելով Գարեգին Երկրորդին վերաբերող նյութերը։

Թեմատիկ նման մեծ բաժանումը պայմանավորված է ներառված նյութի ուղղակի վիթխարի ծավալով՝ 11 164 միավոր, որոնք բաշխվել են համապատասխան բաժինների ներքո։

Տարեգրության մեջ Վեհափառի ծննդյան օրվանից մինչեւ կաթողիկոսական ընտրությունը՝ 1951—1998 թթ. բերված են մեկ խորագրի ներքո, իսկ հաջորդող տարիներից յուրաքանչյուրը, մինչեւ 2019 թ. ներառյալ, առանձին տարեթվերի ներքո։ Տարեգրության մանրակրկիտության եւ ընդգրկունության մասին է վկայում այն հանգամանքը, որ բերված են 2164 կենսագրական դրվագ եւ տարաբնույթ իրադարձություններ պատանեկան տարիներից մինչեւ 2019 թվականը։

Տ. Արարատ քահանա Պողոսյանի առաջաբանում հանգամանալից բացատրված են մատենագիտության կազմման սկզբունքները եւ օգտ-

վելու եղանակը, որը շատ կարեւոր է նկարագրվող միավորների մեծ թվի եւ թեմատիկ բազմազանության պայմաններում։

Տարեգրության հիմքում ընկած են «Էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթում տպագրված նյութերը, որոնցով կազմվում է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարեգրությունը։ Այս երկու գլխավոր պարբերականներից բացի՝ օգտագործվել են Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի եւս 198 անուն թերթեր եւ ամսագրեր, որոնք առավել են ամբողջացրել տարեգրության եւ կենսամատենագիտության մեջ հաղորդված տեղեկությունները։

Պարբերականներից յուրաքանչյուրը, ըստ իր հրատարակության վայրի, ինչպես նաեւ համաձայն մամուլի տվյալ տեսակի ուղղվածության՝ եկեղեցական, գրական-մշակութային, հասարակական, քաղաքական, տարբեր մանրամասներ է հաղորդում այս կամ այն իրադարձության մասին։

Ասվածը ցայտուն արտահայտվել է կենսամատենագիտության մեջ, երբ միեւնույն իրադարձության համար հաջորդաբար բերվում են տարբեր հրապարակումների վերնագրերը, որոնց անվանումից իսկ երեւում է, թե այդ պարբերականներից յուրաքանչյուրն ինչ դիտանկյունից է անդրադառնում կատարվածին։

Կենսամատենագիտության շնորհիվ ընթերցողը կկարողանա ըստ թեմատիկ բաժանումների գտնել իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչպես նաեւ Վեհափառի գրությունները ու խոսքերը՝ լինեն հայրապետական կոնդակներ եւ օրհնության գրեր, քարոզներ, տարբեր ուղեւորությունների, պաշտոնական ընդունելությունների եւ միջոցառումների ժամանակ ասված խոսքեր, շնորհակալական եւ ցավակցական գրություններ։

Տարեգրության եւ կենսամատենագիտության մեջ, ինչպես հայելում, արտացոլվել է նաեւ Գարեգին Երկրորդի ազգային-եկեղեցական գործունեությունը։ Արդեն հիշված 32 խորագրերը թեմատիկ բաժանմամբ մամուլի համապատասխան հրապարակումների մատենագիտական վկայակոչումներով ներկայացնում են Վեհափառ Հայրապետի գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, Արցախում եւ արտասահմանում, հայրապետական այցելությունները Հայոց Եկեղեցու թեմերին, մասնակցությունը Հայ Եկեղեցու տարբեր հանդիսություններին ու տոներին եւ հայրապետական խոսքերով հանդես գալը, միջեկեղեցական ծավալուն

գործունեությունը, հանդիպումները տարբեր երկրների ղեկավարների եւ Եկեղեցիների առաջնորդների հետ։

Գրքի վերջում, ըստ այբբենական հաջորդականության բերված հրապարակումների մատենագիտության, վերնագրային ցանկի ընթերցումը գծագրում է կենսամատենագիտության թեմատիկ խմբավորումը 32 բաժիններով եւ արդեն իսկ զգալի պատկերացում է տալիս Հայոց Հայրապետի՝ այս տասնամյակների հագեցած ազգային-եկեղեցական գործունեության մասին։

Պայմանավորված հատորի ծավալով եւ ընթերցողների կողմից որոնվելիք նյութերն ավելի հեշտությամբ գտնելու մտահոգությամբ՝ առանձին ցանկեր են կազմվել տարեգրության եւ կենսամատենագիտության համար։

Այս հատորը հանրագումարի է բերում Գարեգին Երկրորդի գործունեությունը մինչեւ 2019 թվականը։

Հատորի տեղեկատվական ամեն միավորը տքնաջան աշխատանքի եւ բանիբուն գործունեության մի-մի դրվագ է ներկայացնում։

Վեհափառ Հայրապետի հետ որեւէ ձեւով աշխատած լինելու բախտն ունեցողներից յուրաքանչյուրը, ընթերցելով այդ միավորները, հպարտությամբ կհիշի իր հետ կապված որեւէ դրվագ, իր մասնակցությամբ իրականացած որեւէ ծրագիր։

Թերթելով տարեգրության էջերը՝ տեսնում ենք, որ Վեհափառ Հայրապետի կյանքի յոթ տասնամյակներից ավելի քան հիսունն անցել են Հայոց Եկեղեցու գրկում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում։

Արարատյան թեմը հայրապետական է անվանվում, որովհետեւ առաջնորդը կաթողիկոսն է համարվում եւ ուղղակիորեն մասն է կազմում Ս. Էջմիածնի։ Եթե հաշվի առնենք այս հանգամանքը եւ նկատի ունենաք, որ Գարեգին Երկրորդը եկեղեցական ուսումնառության տարիներից դուրս՝ մինչեւ կաթողիկոս ընտրվելը, ծառայել է միայն Արարատյան թեմում եւ Ս. Էջմիածնում, ապա կարող ենք վստահաբար ասել, որ Հայոց Եկեղեցու միակ հայրապետն է, որի եկեղեցական ողջ գործունեությունն անցել է Ս. Էջմիածնում, որտեղից հասնելով համահայկական ճանաչման, դարձել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության 132-րդ գահակալը՝ շարունակելով ծառայությունը Ս. Էջմիածնին։

Վազգեն Առաջինի հետ իր գործուն մասնակցությունն է բերել Ռուս Ուղղափառ Եկեղեցու 1000-ամյակի հանդիսություններին Մոսկվայում

եւ Ս. Էջմիածնում։ Երիտասարդ եպիսկոպոսն այդ ժամանակ կմտածեր արդյոք, որ Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի հանդիսությունները միջազգային հնչեղությամբ կազմակերպելն իրեն էր վիճակվելու՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի։

Տարեգրությունը եւ կենսամատենագիտությունը էջ առ էջ ներկայացնում են 1990 թ. հիմնված Սեւանի հոգեւոր դպրանոցը, որը Վազգենյան էր անվանվելու ի պատիվ Վազգեն Առաջինի։ Այս դպրանոցը գալու էր ազդարարելու հայ վանական կյանքի նորոգության ու հոգեւոր նոր սերնդի պատրաստության գործն անկախության ճանապարհը վերագտած Հայաստանում։

Գարեգին Երկրորդը, 2000 թ. հունվարին Հորդանանի ափերին քրիստոնեական աշխարհի կրոնապետերի հետ հաղորդվելով մկրտության 2000-ամյա նորոգվող խորհրդին, մեկ տարի անց քրիստոնյա աշխարհի կրոնապետերին ընդունեց Հայաստանում, որով երկու տարվա մեջ նախ քրիստոնեության օրրանում, ապա եւ սուրբգրային Արարատի հովանու ներքո երկիցս արտահայտվեց քրիստոնյա աշխարհի եւ ավանդական Եկեղեցիների միասնությունը։ Կենսամատենագիտության եւ տարեգրության էջերը հանգամանալից ներկայացնում են 1700-ամյակի հանդիսությունների ժամանակային ընթացքը եւ եղած հրապարակումները։

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին բնորոշ առաջին հատկանիշն է եկեղեցաշինությունը, եկեղեցական նոր սերնդի պատրաստությունը եւ եկեղեցական կյանքի վերակազմավորումը՝ սկսած ծխական միավորներից ու հոգեւոր հովվություններից։

Իրար միահյուսված այս երեք հասկացությունների իրականացմամբ է, որ եկեղեցին անցյալի նվիրական հասկացություն լինելուն զուգահեռ շարունակելու է իր կենդանի ներկայությունը եւ առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ պահպանելով մեր ժողովրդի հոգեւոր դիմագիծը։

Հայաստանի Երրորդ Հանրապետության անցած երեք տասնամյակների ընթացքում որքան դժվար է եղել նման աննախադեպ եկեղեցաշինության իրականացումը, նույնքան դժվար է նաեւ նորաօծ եկեղեցիների համար նորաօծ հոգեւորականների պատրաստումը։ Հայաստանի Հանրապետությունում հոգեւորականների սուր պակասի մասին առաջին ահազանգերը հնչեցին դեռեւս 1980-ական թվականների վերջին Վազգեն Առաջինի կողմից։

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ավարտական լսարաններից մինչեւ քահանայից լսարանը տարբերակված ձեւով պատրաստվում են արդի աստվածաբանական կրթություն ստացող հոգեւորականներ եւ եկեղեցական կյանքի ժողովրդային սպասավորության քահանաներ։

Այս հատորը հնարավորություն է տալիս վստահաբար ասելու, որ սահակ-մեսրոպյան Ոսկեդարից, ԺԳ.—ԺԴ. դարերի Սյունյաց վարդապետարաններից ու Գեւորգ Չորրորդ Մեծագործ Հայրապետի ծավալած գործունեությունից հետո հայ եկեղեցական ուսումնական հաստատությունների եւ եկեղեցական կրթության նման վերելք չի եղել մեր ժողովրդի պատմության մեջ։

Աննախադեպ կարելի է համարել նաեւ Մայր Աթոռի գրահրատարակչական գործունեությունը տպագրությունների թվով, ծավալով եւ թեմատիկ ընդգրկմամբ։

Ողջ Հայաստանի, ինչպես նաեւ Անդրկովկասի տարածքի առաջին տպարանում, որի հիմնադրման 250-ամյակը լրանում է այս տարի, Գարեգին Երկրորդի օրհնությամբ տպագրվում են անցյալի եկեղեցական մատենագրության ու հայրաբանական ժառանգության բնագրերը, ինչպես նաեւ ժողովրդային հրատարակություններ՝ նվիրված Հայ Եկեղեցու պատմությանը, Եկեղեցու խորհուրդներին եւ ընդհանրապես ծեսերին ու կրոնական տարբեր հարցերին։

Ինչպես Հայ Եկեղեցու պատմությունն է անբաժանելի հայ ժողովրդի պատմությունից, այնպես եւ Հայոց Եկեղեցուն վերաբերող ցանկացած հարց եւ ուսումնասիրություն առնչվում են նաեւ հայագիտության տարբեր գիտակարգերին, որով Մայր Աթոռում իրականացվող ուսումնասիրություններով եւ հրատարակություններով Ս. Էջմիածինն այսօր հայագիտության երկրորդ կենտրոնն է Երեւանի գիտաուսումնական եւ ակադեմիական հաստատությունների կողքին։

Գարեգին Երկրորդի հայրապետության տարիներին Վաչե եւ Թամար Մանուկյանների բարերարությամբ հիմնվեց համանուն կենտրոնը, որի գրադարանում կենտրոնացված են ոչ միայն Մայր Աթոռի գրադարանային միավորները, այլեւ այն համալրվում է Նորին Սրբության հայրապետական այցելությունների ընթացքում ստացած կամ Ս. Էջմիածին եկած հոգեւորականների ու մտավորականների նվիրած հրատարակություններով։ Մի շարք գիտակարգերի վերաբերող ժամանակակից հրատարակու-

թյուններով այն եզակի գրքային հավաքածու է եւ նմանը չունի Հայաստանի Հանրապետության որեւէ գրադարանում։

Շնորհիվ Վեհափառ Հայրապետի՝ Հայաստանի հայագիտական ներուժը լավագույնս ներառված է Մայր Աթոռի կառույցներում՝ Գերագույն հոգեւոր խորհրդից մինչեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարան, Ս. Էջմիածնի հրատարակչություն եւ «Էջմիածին» ամսագիր։

Ս. Էջմիածնի կրոնաեկեղեցական կյանքին զուգահեռ կարեւոր տեղ են գրավում գիտամշակութային միջոցառումները։ Քանի որ վերջին՝ ավելի քան 1700 տարիներին վերաբերող հոբելյանական իրադարձություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապվում են Հայոց Եկեղեցու հետ, ուստի նշանակալից յուրաքանչյուր հոբելյանի կատարումը կա՛մ Ս. Էջմիածնն է իրականացնում, կա՛մ այն կատարվում է Հայաստանի համապատասխան հաստատությունների հետ միասնաբար. գիտամշակութային առումով եւս Ս. Էջմիածինը կենդանիորեն ներկա է մեր ժողովրդի կյանքում։

Գարեգին Երկրորդի շնորհիվ էականորեն վերակազմավորվեցին Մայր Աթոռի թանգարանային համակարգը եւ ձեռագրատունը։ Ցուցադրության արդիական միջոցների կիրառմամբ Հայոց Եկեղեցու ավանդական սրբությունները եւ եկեղեցական արվեստի նմուշները ներկայանում են նոր փայլով՝ ընդլայնելով այցելուների գիտելիքները հայ արվեստի մասին։

Շնորհիվ հայորդյաց տների եւ բարեգործական տարբեր հաստատությունների՝ Ս. Էջմիածինը սոցիալական եւ ընդհանուր կրթական առումով եւս ներկա է մեր ժողովրդի կյանքում։ Այս հաստատությունների գործունեությունը տարբեր բարերարների նվիրատվություններով ապահովելը գտնվում է Գարեգին Երկրորդի ամենօրյա ուշադրության կենտրոնում։

Գարեգին Երկրորդի հայրապետության տարիներին ավելի քան մեկ տասնամյակ աշխատելով Սուրբ Էջմիածնում որպես «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր եւ Մայր Աթոռի ձեռագրատան վարիչ՝ ականատես եմ եղել, թե Վեհափառ Հայրապետն ինչ սրտացավությամբ եւ խստապահանջությամբ է վերաբերվում վեր բարձրացող ամեն կառույցի ամեն քարի ճիշտ տեղը դրվելուն։

Բախտ եմ ունեցել տեսնելու, թե ինչպես օր առ օր վերաշինվել եւ ընդլայնվել է Մայր Աթոռը։

Թեթեւացած շունչ եմ քաշել, երբ Մայր Աթոռի ընդհանուր նորոգության շրջագծում կառուցվել է նոր ձեռագրատունը՝ թանգարանային ընդհանուր համակարգում։

Դժվարին է եղել Հայոց Հայրապետի անցած ճանապարհը, սակայն առավել դժվարին է լինելու այսուհետ անցնելիքը՝ կապված մեր երկրի այսօրվա հոգսերի եւ վերքերի հետ։

Փոթորկալից եւ ողբերգական 2020 թվականին եւ հաջորդող տարիներին վերաբերվելիք կենսամատենագիտության շարունակության մեջ նույն ձեւով արտացոլվելու է Հայոց Եկեղեցու եւ Գարեգին Երկրորդի ծավալած հսկայական գործունեությունը հանուն հասցված ավերների վերականգնման, համազգային միասնականության վերահաստատման եւ մեր կյանքի տարբեր բնագավառներին Մայր Աթոռի բերած եւ բերելիք կարեւոր նպաստի։

Հավատացած ենք, որ այս մեծ իրագործումները, որոնք մինչեւ հիմա կատարվել են Գարեգին Երկրորդի շնորհիվ, դառնալու են նախերգանքն այն հսկայական անելիքների, որոնք իր համահայկական բարձր հեղինակությամբ Նորին Սրբությունը կյանքի է կոչելու մեր երկրի վերաշինության ճանապարհին։

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին մաղթելով հայրենաշեն ու եկեղեցաշեն գործունեության երկար տարիներ՝ մեր խոսքն ավարտենք Հայոց հայրապետներին տրվող ավանդական մաղթանքով, որ Ահարոնի ծաղկյալ գավազանով հովվի մեր ժողովրդին՝ առաջնորդելով «Ի վայրի դալարուոջ եւ առ ջուրս հանգստեան» (Սաղմ. ԻԲ. 2)։

ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՀԵՂ ՄԻ ԷՋ

Հայ Առաքելական Եկեղեցին դարեր շարունակ հետամուտ է եղել ազգային դիմագծի, կրոնի, մշակույթի, լեզվի պահպանման սուրբ գործին։ Արվել է ամեն ինչ՝ ազգի համար կարեւոր այս տարրերը պահպանելու եւ հետագա սերունդներին փոխանցելու համար։ Բնականաբար, ազգանվեր եւ սուրբ առաքելությունը պսակվել է հաջողությամբ առաջին հերթին հայրենապաշտ հոգեւոր առաջնորդ ունենալու շնորհիվ։ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գործունեությամբ փաստել է, որ Հայ Առաքելական Եկեղեցու արժանի հետեւորդն է, իր ժողովրդի արժանի զավակը։

Յուրաքանչյուր առաջնորդի գործունեություն ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել ժամանակի եւ տարածության խաչմերուկում՝ տարբեր իրադարձությունների շղթայում։ Միայն այդպես հնարավոր կլինի տեսնել այն արժեքավոր ներդրումը, որ նա ունի այս կամ այն բնագավառում։ Իսկ գործունեության ամենատարբեր ուղղությունները տեսանելի եւ շոշափելի դարձնելու համար անհրաժեշտ են այնպիսի ժողովածուներ, ինչպիսին է «Պատմության փառահեղ մի էջ»[1]-ը, որն ընթերցողի սեղանին դրվեց 2020 թ.՝ ամփոփելով Վեհափառ Հայրապետի գահակալության 20 տարվա արդյունքները։

Ժողովածուն հրատարակվել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ եւ Հրաչյա Պողոսյանի մեկենասությամբ։

Ընդգրկված են 1999–2019 թթ. ընթացքում «Էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնյա Հայաստան» պաշտոնաթերթում տպագրված նյութերը, որոնք լավագույնս ներկայացնում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի 20-ամյա գործունեությունը։ Առանձին վերցրած՝ յուրաքանչյուր վերլուծություն, հոդված ինքնին բովանդակալից է, արժեքավոր, առանձնանում է բովանդակային խորությամբ, նպատակաուղղվածությամբ։ Սակայն Վե-

---

[1] *Պատմության փառահեղ մի էջ, կազմ.՝ Տ. Գաբրիել քահանա Վարդանյան, խմբ.՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2020, 800+1 ներդիր էջ։*

հափառ Հայրապետի անցած ուղին ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է տեսնել եւ զգալ նմանատիպ նյութերի միջեւ առկա շղթայական կապը, այդ վերլուծություններն իրար կապող տրամաբանական շղթան, ինչը հնարավորություն կտա ուրվագծելու եւ արժեւորելու արգասաբեր ճանապարհը՝ հաշվի առնելով նաեւ այն կարեւորագույն փաստը, որ նրա գործունեության աշխարհագրական ընդգրկումն անսահման է, իսկ բնագավառները՝ շատ տարբեր։ Այս ժողովածուն Վեհափառ Հայրապետի 20-ամյա գործունեության ժամանակագրական-աշխարհագրական համապատկերը տեսնելու հնարավորություն տալիս է յուրաքանչյուր ուսումնասիրողի։

Գրքի հրատարակության նպատակն է.

ա. Ամբողջացնել Վեհափառ Հայրապետի գործունեության 20 տարվա արդյունքները՝ ժամանակի ու տարածության խաչաձեւումով ներկայացնելով ամբողջական պատկերը։

բ. Ի մի բերել 20 տարի շարունակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երկու կարեւոր պարբերականներում՝ «Էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնյա Հայաստան» պաշտոնաթերթում տպագրված նյութերը, որոնք ամբողջությամբ լուսաբանում են Վեհափառի գործունեությունը։

գ. Ցույց տալ այդ նյութերի միջեւ առկա գաղափարական, տրամաբանական կապը, դրանք իրար կապող շղթան՝ դրանով իսկ ընդգծելով Վեհափառի գործունեության ժամանակագրական եւ տարածական ընդգրկումը։

դ. Մի անգամ եւս արժեւորել յուրաքանչյուր նյութի կամ վերլուծության բովանդակությունը, քանի որ նրանցից յուրաքանչյուրը Վեհափառ Հայրապետի գործունեության ամբողջական պատկերի մի փոքր մասնիկն է։

ե. Ընդգծել Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու կարեւոր ներդրումը հայ ազգային, քաղաքական, տնտեսական, հասարակական, գիտական, կրթական, մշակութային կյանքում։

Կառուցվածքային տեսանկյունից գիրքը խիստ մատչելի է եւ հեշտ ընկալելի։ «Խմբագրական» եւ «Կազմողի խոսք» բաժիններին հաջորդում են համապատասխան խորագրերը՝ յուրաքանչյուրը ներկայացնելով Վեհափառ Հայրապետի կյանքի եւ գործունեության մի բնագավառը՝ սկսած կաթողիկոսական ընտրությունից մինչեւ մեր օրերը։ Յուրաքանչյուր խորագրի ներքո նյութերը դասավորված են կուռ՝ տրամաբանական շղթա-

յի մեջ՝ գաղափարական տեսանկյունից լրացնելով իրար։ Յուրաքանչյուր բաժին առանձին վերցրած ընդգծում է այն մեծ ներդրումը, որն ունեցել է Վեհափառը հասարակական, քաղաքական, գիտական, մշակութային եւ այլ բնագավառներում։ Վեց բաժիններն իրենց հերթին փոխկապակցված են գաղափարական ենթաշերտերով, շատ հատվածներում խաչաձեւվում են, ինչն էլ հնարավորություն է տալիս Ամենայն Հայոց Կաթողիկոսի 20-ամյա գործունեությունն ընկալել ամբողջության մեջ։

Վեհափառ Հայրապետի գործունեության առանցքը Հայ Առաքելական Եկեղեցու, հայոց հավատքի, ազգային արժեքների, ազգային դիմագծի պահպանումն ու շարունակումն են, հայրենիքի բարգավաճման վեհ գաղափարը։ Բնականաբար, գործունեության ամենատարբեր ոլորտները միտված են հենց այս գաղափարների իրականացմանը։ Դրա վառ վկայությունն են կաթողիկոսական ընտրության առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված շնորհավորանքները, որոնցով էլ բացվում է ժողովածուն։ Այստեղ ամփոփված են աշխարհի գրեթե բոլոր Եկեղեցիների բարձրագույն ներկայացուցիչների, պետական, քաղաքական գործիչների պաշտոնական գրությունները, ուղերձներն ու շնորհավորանքի խոսքերը, որոնք մի անգամ եւս հաստատում են արդեն իսկ ստեղծված համագործակցությունը։ Այդ ուղերձներն ու խոսքերը միայն անձնական շնորհավորանքներ չեն։ Դրանք արտացոլում են կրոնական տարբեր ուղղությունների, պետական կառույցների դիրքորոշումը, որն անմիջականորեն նպաստում է միջեկեղեցական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը։ Շուրջ 20 տարի առաջ գրված եւ տպագրված այդ ուղերձները ժամանակի եւ տարածության հեռավորությունից դիտարկելիս ամենեւին չեն կորցրել իրենց արդիականությունը, իսկ այսօր արդեն առկա միջկրոնական կապերը փաստում են, որ այդ բոլոր գործոնները ծառայեցվել են հայ ժողովրդի շահերին։

Ուղերձների հեղինակների շարքում աչքի են ընկնում նաեւ քաղաքական, պետական գործիչներ (Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Վ. Ա. Յակովլեւ, ՀՀ-ում ՌԴ դեսպան Ա. Դրյուկով, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան եւ այլք), գիտնականներ (ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյան, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյան եւ այլք), գրողներ, մշակութային գործիչներ եւ այլն։ Այս ամենը փաստում է Վեհափառ Հայրապետի աստվածահաճո ընտրությունն ու ջերմ ընդունելությունը։ Միանշանակ կարող ենք պնդել, որ Վեհափառի նպատակամետ գործունե-

ության շնորհիվ Հայ Առաքելական Եկեղեցին այսօր հաստատուն կանգնած է տարբեր Եկեղեցիների կողքին։

Առաջին երկու բաժինների տրամաբանական շարունակությունն են հաջորդ երկուսը, որոնց մեջ համախմբված են գահակալության եւ ծննդյան առթիվ գրված եւ տպագրված շնորհավորական ուղերձներն ու խոսքերը։ Դրանց հեղինակները պետությունների, պետական կառույցների, կրոնական ուղղությունների, գիտության եւ մշակույթի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ են, իսկ յուրաքանչյուր ուղերձ Վեհափառ Հայրապետի կերպարի կերտման մի փորձ է։

Շնորհավորական ուղերձներ են ներառված նաեւ «Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի առթիվ» բաժնում։ Իրադարձությունը նշվեց 2001 թ.՝ ի լուր աշխարհի ավետելով, որ հայ ժողովուրդը համայն աշխարհում առաջինն է ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն։ Այս փաստն արդեն իսկ շատերն էին ընդունել, սակայն 2001 թ. միջոցառումները, որոնց մեկնարկը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ եւ տնօրինությամբ տրվեց տարվա սկզբից, իրենց ծավալով եւ խորությամբ ամրագրեցին եւ հանրահռչակեցին պատմական փաստը։ Շնորհավորական ուղերձները հաստատեցին, որ համայն աշխարհն ու կրոնական ուղղություններն ընդունում են պատմական իրողությունը։

Ժողովածուի բոլոր բաժինները կարեւոր են եւ ամբողջական, սակայն նրա գլխավոր արժանիքն ու առանցքը վերջին բաժինն է՝ «Վեհափառ Հայրապետի եւ նրա գործունեության վերաբերյալ» խորագրով, որն առանձնանում է նաեւ ծավալով։ Այս բաժնում ընդգրկված նյութերը եզրագծում են այդ գործունեության սահմանները՝ այն ներառելով կլոր շրջանակի մեջ, ընդգծելով գործունեության բոլոր ուղղությունները եւ դրանց հատման կետերը։ Այս բաժինը հստակեցնում է բոլոր կարեւոր այն հարցադրումները, որոնց պատասխանների փնտրտուքն ի վերջո ունենում է արդյունավետ հանգուցալուծում։ Առանձնացնենք որոշ ուղղություններ, որոնք Վեհափառ Հայրապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում են։

Առաջնայինը Հայ Առաքելական Եկեղեցու դերի եւ նշանակության ամրակայումն է։ Դարեր շարունակ՝ անգամ պետականության բացակայության պայմաններում, Եկեղեցին պահել է առաջնորդի իր դերը հայ ժողովրդի գոյապայքարում։ Երբեմն նրա գլխին կախվել է կործանման

վտանգը եւ այնքան հուժկու, որ անհնար է թվացել զարթոնքը։ Սակայն այսօր Հայ Առաքելական Եկեղեցին կանգուն է՝ պատրաստ մարտահրավերներին։ Բնականաբար, անուրանալի է Վեհափառ Հայրապետի ներդրումը, ամենօրյա տքնաջան աշխատանքը, առաջնորդ, որի համար Հայ Եկեղեցու դերի եւ նշանակության պահպանումն առանցքային նշանակություն ունի։ Ժողովածուում ներառված շատ նյութերում շեշտադրվում է հենց այս պատմական իրողությունը։ «Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ եւ առաջնորդությամբ մեր Եկեղեցին շարունակում է իր աստվածային տնօրինական ընթացքը՝ թեւակոխելով նոր դարաշրջան։ Եւ այս նորագույն շրջափուլում Ամենայն Հայոց Հայրապետը նորովի է մոտենում յուրաքանչյուր խնդրի...»[2],— նշվում է նյութերից մեկում։

Եկեղեցու գործունեության մեջ խիստ կարեւորվում է կրոնական, աստվածաբանական գաղափարների տարածումը։ Վեհափառ Հայրապետի կրոնական, աստվածաբանական հայացքներն արտացոլված են քարոզներում, ուղերձներում, առարկայացված են նրա ամենօրյա գործունեության մեջ։ Դրանք վերացական բնույթ չեն կրում, այլ բխում են նրա՝ տարիներ շարունակ ձեւավորված համոզմունքից, կենսափորձից եւ հավատամքից։ Այսօր առավել քան հրատապ է այդ գաղափարների տարածումը, քանզի նոր ժամանակաշրջանը հայ ժողովրդին կանգնեցրել է նոր մարտահրավերների առաջ, եւ դրանց դիմակայելու ճանապարհին շատ հաճախ ժողովուրդը հեռանում է Հայ Առաքելական Եկեղեցուց։ Գրախոսվող ժողովածուում այդ գաղափարները լավագույնս մեկնաբանվում են Ա. Քալաշյանի «Ամենայն Հայոց Հայրապետի աստվածաբանական ըմբռնումները» հոդվածում[3]։ Վերլուծելով Վեհափառի կրոնական հայացքները՝ հոդվածագիրը հանգում է հետեւյալ եզրակացության. «...Վեհափառ Հայրապետի կողմից առաջադրված աստվածաբանական մոտեցումները հանդես են գալիս հոգեւոր վերակերտումի աստվածաբանության որակով»։ Աշխարհիկի եւ հոգեւորի համադրումով Վեհափառն առաջադրում է «...համակարգված եւ համընդգրկուն աստվածաբանական լուծումներ», որոնցում բոլոր առկա մարտահրավերները քննարկվում են ազգային հոգեբանության եւ մշակույթի առանձնահատկությունների տեսանկյունից։ Ավանդական կրոնական գաղափարների եւ արդիա-

[2] «Պատմության փառահեղ մի էջ», Ս. Էջմիածին, 2020, էջ 185։
[3] Հոդվածը տե՛ս «Էջմիածին», 2009, ԺԲ., էջ 41–61։

կան պահանջների միջակայքում առաջադրվում են աստվածաբանական խնդիրների լուծման նոր մոտեցումներ, որոնք, չժխտելով ու չանտեսելով անցյալից ժառանգություն ստացած կայուն հայացքները, ընդառաջ են գնում արդի մարտահրավերներին։

Հաջորդ կարեւոր խնդիրը, ըստ Վեհափառի, ազգ—պետություն—Եկեղեցի փոխհարաբերությունների ամրակայումն է։ Այդ փոխհարաբերությունները, որոնք ունեն փիլիսոփայական ենթաշերտեր, թելադրում են հաշվի առնել ազգային-հոգեբանական յուրահատկությունները։ Պետությունն ու Եկեղեցին հաճախ հանդես են եկել որպես երկմիասնություն, եղել են սերտորեն փոխկապակցված, դարձել ազգային ինքնագիտակցության կարեւոր բաղադրիչներ՝ առաջնորդվելով ժողովրդի գոյությունը պահելու վեհ գաղափարով։ Հաճախ էլ Եկեղեցին ստիպված է եղել իրագործել պետության գործառույթը։ Այս դեպքում խիստ կարեւորվում է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայեցակարգը, որում, իրար ձուլված, հանդես են գալիս աստվածաբանական մոտեցումները, տեսական եւ գործնական լուծումները։ Միանշանակ, ըստ նրա, կարեւորը հոգեւոր իրականությունն է, որից բխում են մնացած հարցադրումները[4]։

Ամուր հայրենիք, պետություն ունենալու համար անհրաժեշտ է ամրապնդել Եկեղեցու՝ գիտության, կրթության հետ ունեցած փոխհարաբերությունները։ Դարերի ընթացքում քրիստոնեական գաղափարները ներծծվել են ժողովրդի հոգեբանության, հայացքների, կենցաղի մեջ։ Դրանք ձուլվել են ազգային ինքնությանը, ինքնագիտակցությանը, հոգեբանությանը, բարոյական ընկալումներին։

Մինչեւ ԺԹ. դարի կեսերը մշակույթի գրեթե բոլոր ոլորտները գտնվում էին Եկեղեցու հովանու ներքո, ինչի շնորհիվ սերտաճեց կապը Եկեղեցու եւ գիտության միջեւ։ Հետագայում, իհարկե, այդ կապը խզվեց կամ թուլացավ, սակայն ստեղծված արժեքները՝ որպես ժառանգություն, անցան հաջորդ սերունդներին։ Հայ ժողովրդի պարագայում, իհարկե, ոչ նախկին ուժգնությամբ, Եկեղեցին շարունակեց եւ առ այսօր շարունակում է ներդրում ունենալ գիտական ժառանգության կերտման եւ պահպանման գործում։ Վեհափառ Հայրապետը հրատապ ու անհետաձգելի է համարում նոր սերնդի հետ տարվող ամենօրյա աշխատանքը՝ որպես Հայաստանի կայուն ապագայի ձեւավորման գրավական։ Ըստ Ամենայն

[4] *Ավելի մանրամասն տե՛ս «Էջմիածին», 2011, Ը., էջ 25—52. 2012, Զ., էջ 41—70, եւն։*

Հայոց Կաթողիկոսի՝ հայրդին հեռացել է Եկեղեցուց, սակայն նրա հոգում անսասան է մնացել Հավատը, ինչի հետեւանքով հայ հոգեւորականի առջեւ այսօր ծանր խնդիր է դրված՝ առավել մատչելիորեն, սիրով ու հավատով մատուցել քրիստոնեական գաղափարները: Կարեւորելով կրթության եւ գիտության զարգացումը որպես ամուր պետության ստեղծման հիմք՝ 20 տարվա ընթացքում Վեհափառի օրհնությամբ եւ տնօրինությամբ ստեղծվել ու բարեկարգվել են դպրոցներ, հայրդյաց տներ: Գործունեության նոր ձեւաչափեր են առաջադրվել Գեւորգյան հոգեւոր ճեմարանին եւ Վազգենյան դպրանոցին: Շենքային պայմանների բարելավումով իրականացվել են նաեւ կրթական տարբեր ծրագրերի բարենորոգումներ: Գիտության՝ հատկապես հայագիտության զարգացումը խթանելու համար 2000 թ. հիմնվել է «Գարեգին Ա.» հայագիտական կենտրոնը՝ համակարգելով այս ուղղությամբ տարվող բոլոր աշխատանքները: Այլ կառույցների հետ համատեղ կազմակերպվող գիտաժողովները հնարավորություն են տվել ի հայտ բերելու սեփական պատմության, բանասիրության ուսումնասիրման նոր մոտեցումներ[5]:

Կարեւոր են նաեւ Եկեղեցի—մշակույթ փոխադարձ առնչությունների հաստատումն ու զարգացումը: Մշակութային ժառանգությունը հայ ժողովրդի գոյապայքարի, գոյատեւման կարեւորագույն բաղադրիչներից մեկն է, որի պահպանությունն ու խնամքը յուրաքանչյուր անհատի, հայ ազգի եւ պետության նպատակային քաղաքականության տեսադաշտում պետք է լինեն միշտ: Այդ ժառանգության պահպանման գործում իր ուրույն եւ խիստ կարեւոր դերն ունի նաեւ Հայ Առաքելական Եկեղեցին: Սխալ է այն մտայնությունը, թե Եկեղեցու հետաքրքրություններին շրջանակում պետք է լինեն միայն աստվածաբանական, կրոնական հարցադրումները: Ժողովուրդների, մանավանդ հայ ժողովրդի պատմության խորքային վերլուծությունները փաստում են, որ Եկեղեցին միշտ, հատկապես պետականության բացակայության պայմաններում, իր տեսադաշտում է պահել հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման խնդիրը՝ որպես ժողովրդի ապագայի, նրա գոյապայքարի կարեւորագույն կռվան: Եկեղեցին, որ բացառիկ ազդեցություն է ունեցել հայ

---

[5] *Ավելի մանրամասն տե՛ս* Ա. Բոջոյան, *Գարեգին Ա. աստվածաբանական-հայագիտական կենտրոնը եւ Մայր Աթոռի գիտական ձեռնարկումները, «Էջմիածին», 2004, ԺԱ.—ԺԲ., էջ 141—145, 2009, ԺԱ., էջ 122—128.* Բագրատ Աբեղա Գալստանյան, *Վեհափառ Հայրապետի մանկավարժական գործունեությունը, «Էջմիածին», 2001, Ը., էջ 31—34:*

ժողովրդի պատմական ընթացքի եւ պետականության կայացման վրա, այսօր եւս հանդես է գալիս հայկական ինքնության, հայ ազգային ու հոգեւոր արժեքների պահպանման առաքելությամբ։ Եւ այդ ամենը՝ Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողության ներքո։ Եկեղեցաշինությունից մինչեւ հանրահռչակում, մշակութային արժեքների հավաքագրումից մինչեւ թանգարանների ստեղծում. ահա այն ուղղությունը, որ որդեգրել է Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մշակութային ժառանգության պահպանման համար։ Գրախոսվող ժողովածուում բազմաթիվ են այն հոդվածները, որոնք արժեւորում են Վեհափառ Հայրապետի գործունեության այս ուղղությունը, սակայն առավել ուշագրավ են Մերի Դանիելյանի հոդվածները, որոնք լավագույնս ներկայացնում են հատկապես եկեղեցաշինության ուղղությամբ տարվող աշխատանքները։

Վեհափառ Հայրապետի գործունեության ուղղությունները բազմաբովանդակ են։ Նրանցից յուրաքանչյուրն իր ամբողջության մեջ եւ դրանից բխող ենթաշերտերով առանձին վերլուծության թեմա է։ Ամփոփելով միայն նշենք, որ սույն գրքում այդ բոլոր ուղղություններն արտացոլված եւ վերլուծված են, ինչի հիման վրա յուրաքանչյուր ուսումնասիրող կարող է իրականացնել սեփական հետազոտական աշխատանքը եւ տալ իր գնահատականը։ Կարող ենք փաստել, որ ժողովածուն, իրավամբ, արժանի նվեր է Վեհափառ Հայրապետի գահակալության 20-րդ տարեդարձի առթիվ։

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան

СОДЕРЖАНИЕ

От редакции 5

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** на первом заседании НС VIII созыва 7

ПОЗДРАВИТЕЛЬНЫЕ ПИСЬМА

Поздравительное письмо **ПАПЫ РИМСКОГО** 10

Поздравительное письмо **ПАТРИАРХА МОСКОВСКОГО И ВСЕЯ РУСИ** 11

Поздравительное письмо **ПРЕЗИДЕНТА РА** 12

ЕПИСКОП МУШЕГ БАБАЯН — Из глубины сердца — слово братии 14

ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН — Поздравительное послание 16

ПРОПОВЕДИ

Проповедь **ПРОТОАРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА**, произнесенная в монастыре Св. Гаяне 18

Проповедь **АРХИМАНДРИТА ТОВМЫ ХАЧАТРЯНА**, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 24

Проповедь **ПРОТОАРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА**, произнесенная в церкви Св. Иоанна Крестителя в Конде во время Литургии в честь праздника Успения Пресвятой Богородицы 28

ЮБИЛЕЙНОЕ

ЭДИК МИНАСЯН — Армянские Патриархи о формировании и сохранении национальной системы ценностей (1991—2019 гг.) 33

АВЕТИС КАЛАШЯН — Образовательные реформы в духовной академии «Геворкян» при Католикосе Всех Армян Гарегине II (2010-е годы). 44

МАРИАМ МАРГАРЯН, МАРИНЕ МОВСИСЯН — Духовная безопасность как фактор взаимоотношений национальной и гражданской идентичности 72

АРМАН МАЛОЯН — Нововозведенные церкви Ширакской области (1991—2017 гг.) 89

ЭЛЯ САРИБЕКЯН — Не хлебом единым… 105

ДИАКОН КАРЕН САРГСЯН — Деятельность Духовного предводительства ВС РА в период патриаршества Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса Всех Армян 114

ЛИРИКА

РАЗМИК ДАВОЯН — Патриарх Армянский 124

ДИАКОН ГЕВОРГ КАРАПЕТЯН — Молится Патриарх… 126

АРАМ МАНАСЯН — Армянский отец. 127

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

ВАРДАН ДЕВРИКЯН — Деятельность во благо Церкви и народа, выраженная посредством летописи и биографии. *библиографическое монументальное издание* 128

МАЙЯ ГРИГОРЯН — Славная страница истории 136



CONTENTS

Editorial 5

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS,** at the first session of the RA National Assembly of the 8th convocation 7

CONGRATULATORY LETTERS

Congratulatory letter of the **POPE OF ROME** 10

Congratulatory letter of the **PATRIARCH OF MOSCOW AND ALL RUSSIA** . . 11

Congratulatory letter of the **PRESIDENT OF RA** 12

H.G. BISHOP MOUSHEGH BABAYAN — Message of the Brotherhood members from the depth of heart 14

FR. ARARAT POGHOSYAN — Congratulatory message 16

SERMONS

Sermon delivered by **PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 18

Sermon delivered by **ARCHIMANDRITE TOVMA KHACHATRYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 24

Sermon delivered by **PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN** during the Divine Liturgy celebrated at St. Hovhannes Church of Kond on the occasion of the Feast of Assumption 28

JUBILEE

EDIK MINASYAN — The Armenian Catholicoi on the formation and preservation of the national value system (1991-2019) 33

AVETIS KALASHYAN — Educational reforms at the Gevorkian Theological Academy during the Pontificate of His Holiness Karekin II (the 2010s) 44

MARIAM MARGARYAN, MARINE MOVSISYAN — Spiritual security as a factor in

the relationship between the national and civic identities 72

ARMAN MALOYAN — Newly built churches of Shirak province (1991—2017) 89

ELEA SARIBEKYAN — Not… by bread alone 105

DEACON KAREN SARGSYAN — The activity of the Army Chaplaincy of the RA Armed Forces during the reign of Catholicos Karekin II of All Armenians 114

LYRICS

RAZMIK DAVOYAN — The Armenian Catholicos 124

DEACON GEVORG KARAPETYAN — The Pontiff prays... 126

ARAM MANASYAN — The Father of the Armenians 127

LITERARY REVIEW

VARDAN DEVRIKYAN — Church-building and nation-building activities expressed through chronology and literary biography: *bibliographic monumental edition* . . 128

MAYA GRIGORYAN — A glorious page of history 136

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իբրեւ խմբագրական 5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը ՀՀ Ազգային ժողովի 8-րդ գումարման անդրանիկ նիստին 7

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳՐԵՐ

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ շնորհաւորագիրը 10

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԻ շնորհաւորագիրը . 11

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ շնորհաւորագիրը 12

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊՍ. ԲԱԲԱՅԵԱՆ — Ի խորոց սրտի՝ խօսք միաբանութեան . . 14

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՕՂՈՍԵԱՆ — Խօսք շնորհաւորանքի 16

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՁԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում. 18

Տ. ԹՈՎՄԱ ՎՐԴ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 24

Տ. ՁԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Կոնդի Ս. Յովհաննէս եկեղեցում Ս. Աստուածածնի վերափոխման տօնին մատուցուած Ս. Պատարագին. 28

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆՔ

ԷԴԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ — Հայոց հայրապետներն ազգային արժեհամակարգի ձեւաւորման ու պահպանման մասին (1991—2019 թթ.) 33

ԱՒԵՏԻՍ ՔԱԼԱՇԵԱՆ — Ճեմարանի կրթական բարեփոխումները Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրօք (2010-ական թուականներ) 44

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ՄԱՐԻՆԷ ՄՈՎՍԻՍԵԱՆ — Հոգեւոր անվտանգութիւնը որպէս ազգային եւ քաղաքացիական ինքնութեան փոխյարաբերութիւնների գործօն 72

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ — Շիրակի մարզի նորակառույց եկեղեցիները (1991—2017 թթ.) 89

ԷԼԵԱ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ — Ո՛չ միայն հացիւ... 105

ԿԱՐԷՆ ՍՐԿ. ՍԱՐԳՍԵԱՆ — ՀՀ զինուած ուժերի հոգեւոր առաջնորդութեան գործունէութիւնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի հայրապետութեան շրջանում 114

ՔՆԱՐԱԿԱՆՔ

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ — Հայրապետ Հայոց 124

ԳԷՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — Աղօթում է Հայրապետը... 126

ԱՐԱՄ ՄԱՆԱՍԵԱՆ — Հայոց հայրը 127

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿԵԱՆ — Եկեղեցաշէն եւ ազգաշէն գործունեութիւն՝ արտայայտուած տարեգրութեան եւ կենսամատենագիտութեան միջոցով. *մատենագիտական կոթողային հրատարակութիւն* 128

ՄԱՅԵԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ — Պատմութեան փառահեղ մի էջ. 136

ԱԲՀ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ագերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865

ԱԺ - Արեւելագիտական ժողովածու, Երեւան

ԱԻ - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԱՀ - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1–26, Շուշի/Թիֆլիս, 1896–1916

ԱՖՏ - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան

ԲԵՀ - Բանբեր Երեւանի համալսարանի, Երեւան

ԲՀ - Բանբեր հայագիտության, Երեւան

ԲՀԱ - Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան

ԲՄ - Բանբեր Մատենադարանի, Երեւան

ԳԱԹ - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան

ԳԻ - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԳՀՃ - Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին

ԴԱՆ - Դաշտային ազգագրական նյութեր

ԴՀՊ - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1–13, Թիֆլիս, 1893–1917

ԴՀՎ - Դիվան հայ վիմագրության, Երեւան

Ե(Լ)Ժ - Երկերի (լիակատար) ժողովածու

ԵՊԿ - Երեւանի պետական կոնսերվատորիա

ԵՊՀ - Երեւանի պետական համալսարան

ԷԱԺ - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1–9, Մոսկվա, 1901–1913

ԷՊԱԹ - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան

ԼԻ - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան

ՀԱ - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա

ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան

ՀԱԲ - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1–4, Երեւան, 1971–1979

ՀԱԲՆ - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան

ՀԱԲՌ - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1–5, Երեւան, 1942–1962

ՀԱԹ - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ

ՀԱԻ - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ՀԱՊ - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան

ՀԲԲ - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1–4, Երեւան, 1944–1945

ՀԺՀ - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան

ՀՀ - Հայագիտական հանդես, Երեւան

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան

ՀՀՀ - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս

ՀՀՀԾ - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան

ՀՀՀՍ - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ

ՀՀՄ - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան

ՀՀՄԾ - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան

ՀՀՑ - Հայագիտության հարցեր, Երեւան

ՀՀՇՏԲ - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1–5, Երեւան, 1986–2001

ՀՊԹ - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան

ՀՊՀ - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան

ՀՊՀՑ - Հայոց պատմության հարցեր, Երեւան

ՀՊՄՀ - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան

ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1–13, Երեւան, 1974–1987

ՀՏ - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան

ՄԱ - Մերձավոր Արեւելք, Երեւան

ՄԱԵԺ - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան

ՄՀ - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

ՄՄ - Մաշտոցի անվան Մատենադարան, Երեւան

ՄՊՎ - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երեւան

ՄՑՀՁ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1–2, Վենետիկ, 1836–1837

ՆՀԺՊ - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երեւան

ՇՀՀԿ - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի

ՊԲՀ - Պատմաբանասիրական հանդես, Երեւան

ՊԻ - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ՊՄ - «Պատմություն եւ մշակույթ» հայագիտական հանդես, Երեւան

ՎՀԵՊ - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երեւան

ՎՀՀ - «Վէմ» համահայկական հանդես, Երեւան

ՏՀԳ - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երեւան

ՑՁՄՄ - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան

ՔՀ - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին

ՔՀՀ - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002

ՕԱՀՀՄ - Օտար աղբյուրները հայերի եւ Հայաստանի մասին, Երեւան

АГВ - Армянский гуманитарный вестник, Ереван

АО - Археологические открытия, Москва

АПА - Археологические памятники Армении, Ереван

АРА - Археологические раскопки в Армении, Ереван

ВВ - Византийский временник, Ленинград-Москва

ВДИ - Вестник древней истории, Москва

ВЕУ - Вестник Ереванского университета, Ереван

ВОН - Вестник общественных наук, Ереван

ДВ - Древний Восток, Ереван

ДКА - Древнейшая культура Армении, Ереван

ИАЭ - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван

ИАН - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван

ИФЖ - Историко-филологический журнал, Ереван

КБС - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси

КВ - Кавказ и Византия, Ереван

КДА - Культура древней Армении, Ереван

КСИА - Краткие сообщения института археологии, Москва

КСИИМК - Краткие сообщения института истории материальной культуры, Москва

МАК - Материалы по археологии Кавказа, Москва

МИАН - Материалы по истории армянского народа, Ереван

МНМ - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991–1992

НАА - Национальный архив Армении, Ереван

СА - Советская археология, Москва

СМОМПК - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1–46, Тифлис, 1881–1915

СЭ - Советская этнография, Москва

ХВ - Христианский Восток, Санкт-Петербург

AJNES - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan

AS - Anatolian Studies, Cambridge

AW - Antike Welt, Mainz am Rhein

BAR - British Archaeological Reports, International Series, Oxford

CAH - Cambridge Ancient History, Cambridge

IC - Iran and the Caucasus, Leiden

JANER - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden

JAOS - Journal of American Oriental Society, Michigan

JAS - Journal of Armenian Studies, Belmont

JSAS - Journal of the Society for Armenian Studies, Fresno

MDOG - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin

OrCh - Oriens Christianus, Leipzig

PO - Patrologia Orientalis, Paris-Brepols

RÉArm - Revue des études arméniennes, Paris

SMEA - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829–4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերւում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում Հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով՝ https://arar.sci.am/ կամ https://www.flib.sci.am/journal/Ejmiadzin/Frame.html:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատուութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»
Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal “Etchmiadzin”

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374–10) 517–277/278

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.09.2021 թ.